1898

ԹԻՒ ՃԻ. ՀԱԿՏԵՄԲԵՐԻ

ԱՐԱՐՈՒԱԾՈՅ ՏԱՐԻ

ՅԱՌԱՋԴ



ՏՊԱՒՈՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ը·ԷՋՄԻԱԾՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

1· Քաղուածք ի Կանդակաց Վեհափառ Հայրապետի 427
2· Քաղուածք Սինոդի օրագրութիւններից 428

ԿՐՕՆԱԿԱՆ

3· Աստուածոյ երկպառամտութիւնն ու դատաստանը 429
4· Հայոց եկեղեցւոյ առաջին մասնակցութիւնը գաւառական վէճերի մէջ և Բարգէն կաթուղիկոս . . . Կ. Վ. 431

ՕՏԱՐ ԵԿԵԼԵՑԻՆԵՐ.

5· Օրթոդոքս և Բողոքական եկեղեցիներ · 436

ԵԿԵԼԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ.

6· Կոմիտաս Կաթուղիկոսի մի նոր արձանագրութիւն . . . . . Գ. Վ. 441
7· ՄԱՅՐ ԱԹՈՌ 442
8· ՏԱՃԿԱՀԱՅՔ 447
9· ՊԱՐՍԿԱՀԱՅՔ 449

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

10· Օտարազգի մանկավարժական գրականութիւնից (Շարունակութիւն և վերջ) Ս. Մ. 454

ԲԱՆԱՍՏԵՂԱԿԱՆ ԲԱԺԻՆ

11· Նոյեմբ. մեկի գիշերուայ աստղները Գ. Հ. 460
12· Յանոն Կանանայ մալ . . . 466
13· Ժանտախտ 468
14· Մատենախօսութիւն . . . Կ. Վ. 469

ՅԱՒԵԼՈՒԱԾ.

15· Թուղթ Հայոց ի Պարսս առ ուղղափառս · 471

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՔ ԱՋԳ. ՀԱՆԴԻՍԻՑ.

ՀԱՆԴԷՍԻ ԱՄՍՕՐԵԱՅ

(Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներ)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

† Եղիսաբէթ Կայսրուհի Աւստրիոյ (պատկերազարդ)· 290։—Արդի լեզուագիտութիւնը·294։—Եւդոկիոյ գաւառաբարբառը·279։—Հայերէն բարբառախօսութիւն· 306։—Մ. Խորենացի ըստ Պրոփ. Ն Մառի·313։—Հազարապետ·316։—Մահտեսի Ոսկան բժիշկ Վրիգորեան·320։—Հայ արուեստը Վիեննայի Յուբայհանդիսին մէջ· Աւստրիոյ Փրանկ. Յովսէփ Կայսրն և Մխիթարեան տպարանը· 321։—Նոր բառգիրք Հայերէն Թարգմանութեամբ· Ց. Տէր Աբրահամեան· 323։—Հիւտտիտներն ու Հայերը ի Պրէֆ. Պ. Եղնոսէնէ։—Եղիսաբեթուպոլսոյ Հայոց Հեղինակութիւնը Թրանսիլուանիոյ ազգայնոց վերայ· 329։

ԱՅԼԵՒԱՅԼԵՔ

Նոր Հրատարակութիւնք· 339։ — Ազգային Թերթերէ ծաղկեփունջ· 345։

ԲԱԶՄԱՎԷՊ·

(Հոկտեմբեր ամիս)·

Եօթնահարիւրեմեակ Ս. Ներսիսի Լամբրոնեցւոյ մահուան· 461։—Սարգիս Վ. Շնորհալի (շար· և վերջ)· 470։—Հօրը տարիքը (ոտան) 472։—Փիլոնի Երրայեցւոյ բանք՝ երեք չև ի լոյս ընծայեալք· 473։—Անդինոէի պեղմունք Կիւմէի Թանգարանին մէջ· 478։—Հանք և իրենց ստուգաբանութիւնն· 479։—Պատկ մը Փրիգրիխ Միւլլերի գերեզմանին վրայ· 481։—Խիկար կամ Աքիաքարոս և գիրք Տովբիթայ· 488։—Պրահոսական· 401։—Սուրհանդակ Բազմավիպի· 495։—Պատասխանք Բազմավիպի Սուրհանդակին· 495—500։—Քաղաքական ամիս· 505։—Ա յլ և այլք· 511։

ԱԶԳԱՊԱՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

(Գ. Գիրք)

ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայ ժողով· արհեստագործութիւնը, Ս. Թաոպեանի· 3—71։—Հայ բոյսեր, Վ. Փափազեանի·74—90։—Ջաւախք, Ե. Լ. և Ագնաւուրեանի· 91—104։—Սիսիան, Ե. Լալայեանի· 105—272։—Սանահին, Ի. Յարութիւնեանի· 273—235։—Կայան բերդ և Կայենոյ ձոր, Գ. ք. Երզնկեանի· 316—328։—Լոռուայ Հարսանիք, Գ. ք. Երզնկեանի· 329—337։—Վարանդա, նշանաւոր տօներ, Ե. Իալայեանի· 338—349։—Հայկական երաժշտութեան մասին, Վ. Փափազեանի· 350—358։—Հայ գեղջուկի ալբոմը, Յ. Մալխասեանի· 359—392։—Դրախօսութիւն, Ս. Լիսիցեանի· 393—397։

ՄԱՐԻՒԱՆԱՆՈՒԹԻՒՆ

Նորագոյն տեսութիւններ Վերդաստանի, Հասարակութեան և Պետութեան ծագման մասին, Ա. Պոզոդայի, Թարգմ. Ե. Լալայեանի· 3—50։—Օգիւստ Կոնտ· Ս. Թաոպեանի· 51—66։—Սոցիօլոգների միջազգ. Ինստիտուտ· Գ. Վարաժանեանի· 65—70։—Նորութիւններ օտարազգի գրականութիւնից· 71—72։—Օրագիր տպարերքի···73—70։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ,

ՆԿԱՐՆԵՐ (28)

ԱՐԱՐԱՏ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

ԹՎԻԽ. Լ.Ր. ՏԱՐԻ	ՀԱՄԱՌ ՏԱՍՆԵՐՈՐԴ	ՀՈԿՏԵՄԲԵՐ 1898 Թ.

ՀՐԱՏԱՐԱԿԵՑԱՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԱՅ ՍՐՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

1898

Дозволено цензурою 26 Октября 1898 г. г. Тифлисъ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԹՒԹԻՆ.

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Ի ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՐՈՊԵՏԻՆ.

Կոնդակ յանուն Սիմէոնի վան յերդումն կշռիլոյ վերկուս բնձայիւս յատաքձան եպիսկոպոսութեան՝ գՏէր Ներսէս վարդապետ Արսլանեան և գՏէր Դաւրիել վարդապետ Շուշանիրձեան։ թ. 999։

— *Օրհնութեան և գոհանոկութեան յանուն Տիկին Անոյշի Նար—Արեան Մեծ Սալա գեղջ Նոր Նախիջեւանի, վան նուիրելոյ նորա արծաթի (չինիթիշի) գօտի մի ի թանգարան տաճարի Մայր Աթոռոյ։ թ. 1021։*

— *Վկայական եպիսկոպոսութեան յանուն Տ. Ներսէս եպիսկոպոսի Արսլանեան, առաջնորդին Ջմիւռնիոյ։ թ. 1070։*

— *Վկայական եպիսկոպոսութեան յանուն Տ. Դաւրիել եպիսկոպոսի Շուշանիրձեան Պատր. Փոխանորդին Կ. Պոլսոյ։ թ. 1071։*

— *Ցանուն Ամեն. Պատրիարքին Կ. Պոլսոյ, յաղագս ձեռնադրութեան երկուց եպիսկոպոսաց և առաքման ած. Միւռոնի։ թ. 1073։*

— *Ցանուն յիշեալ եպիսկոպոսացդ, որով շնորհեցան նոցա պանակիք եպիսկոպոսականք։ թ. 1074. 1075։*

— *Օրհնութեան և գոհանոկութեան յանուն Պ. Սահակայ Ղանչեան Կ. Պոլսեցւոյ, յաղագս երկաթիրութեանց Նորին։ թ. 1076։*

ՇՆՈՐՀԱՒԱՇԵՈՒԹԻՒՆՔ ՅԱՒՈՒՐ Ե. ՏԱՐԵԳԱՐՁԻ ՕԾՄԱՆ

ՎԱՀՃ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՋԳԻՍ.

Կոնդակ պարգևման քահանայական լանջախաչի յանուն Գրիգոր քահանայի Տ. Մահատնանց Դանձակ քաղաքի։ թ. 1978։

— *Քահանայական լանջախաչի յանուն Գրիգոր քահանայի Տ. Յարութիւնեան Դանձակ քաղաքի։ թ. 1079։*

Կամիլաւկայի յանուն Մկրտիչ քահ. Տ. Յովհէփեան Դանձակ քաղաքի։ թ. 1080։

— *Քահանայական լանջախաչի յանուն Յակոբ քահ. Գուլեան Դօրի քաղաքի։ թ. 1081։*

— *Կամիլաւկայի յանուն Մովսէս քահ. Մինճպեանց Դօրի քաղաքի։ թ. 1082։*

— *Քահանայական լանջախաչի յանուն Սահակեանոս քահ. Տ. Սահակեան Դօրի քաղաքի։ թ. 1083։*

— *Քահանայական լանջախաչի յանուն Եփրեմ քահ. Մելիք—Առաքելեան Դանձակ քաղաքի։ թ. 1084։*

— *Քահանայական լանջախաչի յանուն Թորոս քահ. Տ. Թորոսեան Կուլիկամ գեղջ Տփխաց։ թ. 1085։*

— *Քահանայական լանջախաչի յանուն Յովհաննէս քահ. Բագրատեան Դուռնուկ գեղջ Տփխաց։ թ. 1086։*

Աւագ քահանայութեան յանուն Ե-ղիշէ քահ. Դօրի քաղաքի։ թ. 1087։

Տասանեքին այսոքիկ քահանայք պարգևատրեցան ըստ միջնորդութեան Գեր. Թեմակալին Վրաստ և Իմերեթի, Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի Սուրենեանց։

Կոնդակ յանուն Ղևոնդ քահանայի Մեծ Աղբևվալի գեղջ, որով շնորհեցաւ նմա կամիլաւկայ պատարիկ, ըստ միջնորդութեան Գեր. փոխ. Թեմակալին Երևանայ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի։ թ. 1098։

— *Ցանուն Գրիգոր քահ. Արտաշատ գեղջ, որով շնորհեցաւ նմա կամիլաւկայ գլխարիկ։ թ. 1123։*

— *Ցանուն Առաքնորդական Տեղապահին Մշոյ Վարդան վարդապետի Յակոբեան, որով*

շնորհեցաւ նմա լանջախաչ վարդապետական ականակուռ. Թ. 1130։

— Ծանուն Թադէոս վարդապետի Յովհաննեան, լուսարարապետի վանուց ս. Կարապետի Մշոյ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ վարդապետական ականակուռ. Թ. 1131։

— Ծանուն օգնականի Տեսչի Ճեմարանի Մայր Աթոռոյ Կարապետ վարդապետի, որով շնորհեցաւ նմա ծաղկեայ կերպասեայ սև փիլոն՝ իւրն իսկ Տարին Ս. Օծութեան. Թ. 1132։

— Ծանուն Կորիւն վարդապետի, Դիւանապետի Վեհ. Հայրապետի, որով շնորհեցաւ նմա ծաղկեայ կերպասեայ փիլոն. Թ. 1134։

— Ծանուն Կոնսիստորիային Արցախայ, որով շնորհեցաւ ներումն երկուց քահանայից Ղազանչեցւոց Ամենափրկիչ եկեղեցւոյն Շուշւոյ՝ Տ. Ստեփաննոսի և Տ. Մելսոբայ, դատելոց ընդ պատժով և հրամայեցաւ մնալիս նոցա վերսին ի քահանայագործութիւն. Թ. 1129։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Օգոստոսի 5-ին Սինօդը հրամայեց Քիշնեւի և Բեսարաբիոյ կոնսիստորիային՝ Ծուսիկ վարդապետ Տ. Մովսիսեանի տեղ (այժմ Սինօդի անդամ) թեմի կալուածոց պատասխանատու կառավարիչ ճանաչել նոյն կոնսիստորիայի նախանդամ Նիկիտա վարդապետ Սուքիասեանին, նորա ունեցած ութ հարիւր ռուբլի ռոճկի վերայ աւելացնելով երկու հարիւր ռուբլի եւս վիճակային արդիւնքներից։

Օգոստ. 19 Շուլաւերի գործակալը Վրաստանի և Իմերէթի կոնսիստորիայի միջոցաւ բացատրութիւն է, խնդրել այն խնդրի համար, թէ արդեօք ի հետեւումն Վրաստանի և Իմերէթի նախկին առաջնորդի 1886 թ. յունվարի 20-ին Թ. 252 արձակած հրամանի, որով թոյլ է տուել յօտարազգեան քրիստոնեաներին մեր եկեղեցում պսակադրութեան և ննջեցելոց թաղման կարգը կատարել, բայց ս. պատարագ մատուցանելուց՝ կարելի՞ է օտարազգիների խնդրանաց համաձայն նոցա ննջեցեալի համար, թաղելուց առաջ, պատարագ մատուցանել մեր եկեղեցում մեր քահանայի ձեռքով և ապա իւրեանց քահանային թողնել թաղումը։ Ս. Սինօդը սոյն խնդիրն ընդունելով իբրև զուտ կրօնական և կառաւարչական ունեցող միայն Ամենայն Հայոց Հայրապետից որոշեց յայտարարել Նորին Վեհափառութեան ի տեղեկութիւն։

Օգոստ. 21 Հանդուցեալ Գրիգոր Մելիք-Ղուկասեանցի ճեմարանի անուամբ թողած 25000 ռ. կապակի վերաբերմամբ Սինօդը որոշում է, 1) հրամայել գանձապահին, որ իւրաքանչիւր երեք ամիսը մի անգամ ստանայ արքունական գանձարանից վերոյիշեալ դուժարի տոկոսիքը և յանձնէ ճեմարանի վարչութեանը, 2) սոյն տարեկան տոկոսիքը աչքի առաջ ունենալ ճեմարանի նոր նախահաշիւ կազմելու ժամանակ և 3) հրամանագրութեամբ պատուիրել ճեմարանի վարչութեան վերոյիշեալ տոկոսները ստանալով գործ դնել հանդուցեալի կտակի 14-դ յօդուածի պարզ իմաստով։

Օգոստ. 26 Նովկասի Կառավարչապետի դիւանը ներկայ ամի ապրիլի 14-ի դրութեամբ խնդրել է Թիֆլիս քաղաքի Աբել քահանայ Սուքիասեանի ծառայութեանց յուցակը, նորան տեղական սս. Նինա-յի ընկերութեան ուսումնարանում նօթնամեայ պատասխանութեան համար վարձատրելու։ Սինօդը ուղարկել տալով Կառավարչապետի դիւանը վերոյիշեալ քահանայի ծառայութեանց յուցակը, յայտնում է, որ թեմական իշխանութեան նորա վարք ու բարքի մասին տուած վկայութիւնն ի նկատի առնելով՝ յարմար չէ գտնում առաջարկել նորա համար վարձատրութիւն։

Սեպտ. 2 Սինօդը հրամայում է Տփղիսի կոնսիստորիային պատասխանել քահանայագործութիւնից Թանդոյեան ս. Աստուածածնին եկեղեցւոյ Նազի քհ. Տէր Նիկողայոսեանին, որովհետև նա 70-ամեայ ծերունի լինելով՝ ըստ յուշման Վրաստանի և Իմերէթի կոնսիստորիայի, անկարող է կատարել քահանայական պաշտօնը, մանաւանդ որ Ծնօսի հիւանդութիւն ունի, որ շատ անգամ ուշացման պատճառ է լինում։

Սեպտ. 11. Սինօդը, Ասարեանի կոնսիստորիայի յայտարարութեան հիման վերայ, ուղարկել է Ներքին գործոց նախարարին նոյն

Կանսթանտինայի անգամ Դաւիթ քահ. Դպրապետեանի բազմամեայ ծառայութեանց ցուցակը՝ նորան ս. Սահակեան երկրորդ աստիճանի շքանշանով վարձատրելու առաջարկութեամբ։

Սեպտ. 18. Սինոդը յայտնել է Նէրքին գործոց նախարարին, որ Տպանորդ քաղաքի ժողովուրդը կամենում է, կառուցանել ս. Բառկոբ անուանով ազօթատուն՝ ի յիշատակ Նոցին Կայսերական Մեծութեանց Թագապրութեան, և այդ մասին խնդրում է, միջնորդել Բարձրագոյն Հաճութիւն ստանալու համար։

Սեպտ. 25. Սինոդը օրագրով քննիչ է կարգում Նուխայ փոխանորդ Սահակ վարդ. Բագրատարեանին Շամախւոյ Թեմի Մագրատայ գիւղի ժողովրդեան և տեղական Դէպրգ քահ. Աւագեանի մէջ ծագած անրաւականութիւնները ստուգելու և ս. Սինոդին ի տեղեկութիւն ներկայացնելու համար։

ԿՊՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԿԱՅՆԱՄՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԳԱՏԱՍՏԱՆԸ

«Ամենայն ծառ, որ ոչ առնիցէ զպտուղ բարի՝ հատանի և ի հուր արկանի»։
Մատթ. Գ. 10.

ԸՍՏ երեւութին մեր ամենօրեայ փորձառութիւնը չէ հաստատում այս պատուիրական ճշմարտութիւնը, որ արդէն Յիսուս Կարապետը յայտնել էր իրեն իր դուշակած Մեսիայի գործունէութեան առաջին պայմաններից մէկը և որ Նա Ինքը՝ ճշմարիտ Մեսիան, կրկնել է շատ անգամ ուրիշ խօսքերով, կողմնակի օրինակներով պարզաբանած։ Քանի՛ անպատուղ, վնասակար ծառեր անարգել աճում են մեր աչքի առաջ, զուր տեղը գետին բռնում, ուրիշների աճմանն արգելք լինում, կամ իրենց չար պատուղներով թունաւորում շատերին, մինչ յաւատաւոր պտղալից տունկերը խեղդուում կորցնում են իրենց կենսունակութիւնը, կամ անխնայ կտրուում՝ մահուան դիրքին են նետուում։ Ինչո՞ւ է այդպէս։ «Ահա մեղաւորք են, և չարդեալ է նոցա —այս միտքը միայն սաղմոսերգուին չէ տանջել, այլ մեզ ամենս պրպտողում է, շարունակ, և մենք փոխանակ ճշմարտութեան աւետարանի մէջ լուծումն որոնելու՝ մեզ մօտ մտածութիւնների մէջ ենք ընկնում կամ պղտոր տրիբունների մեր բարոյական հաստատամտութիւնը չլատող անշահ տեսութիւններ քաղում։ Այս հարցն էր հետաքրքրում անշուշտ նաև այն մարդոց, որոնք Փրկչի մօտ եկան և պատմեցին, թէ Հերովդեսի դատաւոր Պիղատոսը մի խումբ Գալիլիացիների սպանել է տուել Երուսաղէմի տաճարում, զոհաբերութեան միջոցին, այնպէս որ նոցա արիւնը զոհերի արեան հետ է խառնուել։ Փրկչի վերաբերումն դէպի այսպիսի մի աչքի ընկնող դիպուած ամենագիտելիք օրինակն է, թէ ինչ պէտք է մտածենք մենք նման հանգամանքներում։

Աւետարանի պատմութիւնից յայտնի չէ, թէ ճշդիւ և ինչ տարիք է սրել Պիղատոս այս արիւնոտ դատը։ միայն Յովսէպոսի նկարագրութիւններից պիտենք, որ նորա օրով այսպիսի արիւնհեղութիւններ յաճախ տեղի են ունեցել, որովհետև հրեայ ժողովուրդը ոչ մի կերպ չէր կարողանում հաշտուել հեթանոս հռոմայեցիների տիրապետութեան հետ և ամէն անգամ, երբ մի նոր կարգադրութիւն իշխանաւորների կողմից կենդանի կերպով զգալի էր դարձնում բռնութեան լուծը, կամ հայրենի սրբութիւնների պղծուած տեսնելը, գրգռում էր ամբոխի զայրոյթը՝ խռովութիւնը բռնկում էր մի տեղից, որ և հռոմայեցիները խեղդում էին իսկոյն արեան մէջ։ Այսպիսի խռովութիւններ պատահում էին աւելի յաճախ Երուսաղէմի մեծ տօներին, երբ տաճարի շուրջն ուխտաւորների ահագին բազմութիւն էր ժողովուրդ և ամէն մի չնչին դէպք կարող էր մոլի ոգևորութիւն ներշնչել ամբոխին։ պիղատոս գեր խաղացողն այստեղ և ապստամբների առաջին հարքերում կռուողները սովորաբար Գալիլիացիներն էին

լինում որոնք իբրև լուծային ուժով ազատ ժողովուրդ և Երուսաղէմից հնուց գանուելով ուխի վառ ջերմեռանդութեամբ լցուած զէպի մայր տաճարն ու հայրենեաց հին յիշատակարանները՝ ուխի կենդանի էին պահում միշտ նախանձախնդրութեան և անկախութեան ոգին։ Ցոմսէպոս յիշում է, որ Վիսպասոս մի չրանգք է կատուցել ուխի ժողովուրդը մեծ զժկամակութեամբ է վերաբերուել զէպի այդ ձեռնարկութիւնը և խըռովութիւն յարուցել. գուցէ սրա հետ կապ ունի ուխեսարանում պատմած զէպքը և այն հանդամանքը, որ անմիջապէս կից սրան Սելոմամի աշտարակի անկումն է և 18 հոգու մահ պատճառելն է, յիշուում։ Ցամենայն զէպս տաճարում կատարուած արիւնհեղութիւնն իրրև մի սոսկալի ոճիր պէտք է նկատուէր և ամէն հաւատացող հրեայ պէտք է հարցնէր ինքն իրեն. Աստուած ինչո՞ւ է թոյլ տալիս այդ։ միթէ, այն մարդիկ որոնք գուցէ զէպի Նա ուղեցած սիրոյն համար զոհ բերուեցան Նորա սեղանի առաջ՝ իրենց յանցանքի պատիժն են կրել։

Քրիստոս իւր առած բացատրութեամբ հասկացնում է նախ, որ գուցէ էին այդ գալիլիացիներին անձուկ դատաստանները համարում, որ նոցա մէջ գործող ոգին ձշմարիտ Աստուծոյ թելադրած ոգին չէ և այն միջոցը, որով կարծում էին թէ, Ցիրոջ պատիւը պաշտպանած և Նորա անունը փառաւորած կլինին խոտելի է Նորա առաջ. սուր առնողը պէտք է ինկատի ունենար, որ սրով կընկնի և իրաւունք չունի պաշտպանութիւն սպասելու այն Աստուծոյ կողմից, որ զատապարտում է ինքնահաճութիւնն ու խստերախ յանդգնութիւնը։ Սպանուած գալիլիացիք յիրաւի իրենց յանցանքի պատիժն էին կրել. սակայն այդ փաստ չէր ուրիշների համար, թէ յանցաւոր չեն, որովհետև անպատիժ են մնում. ընդհակառակն ամէն մի այսպիսի դիպուած, ամէն յանկարծական պատահար, ինչպէս Սելոմամի աշտարակի անկումը, պէտք է սարսափ իւրաքանչիւրին քննել իւր սրտում՝ արդեօք նոյնպիսի մի պատուհասի արժանի չէր ինքն էլ, արդեօք եթէ զէպքը բերէր այսպէս անսպասելի կերպով Ամենակալ Դատաւորի առաջ ներկայանար, ինչ հաշիւ կտրոյ էր տալ իւր կեանքի, իւր գործերի համար։ Ընդհակառակ վերոյ ասք դնելը փոքրոգի սուր արարածներին չատուկ է. բարոյական զգացման և կենդանի խղճի տէր մարդիկ փոխանակ Աստուծոյ դատաստանի մէջ խառնուելու և այն հարցնելու թէ, ինչ մեղքերի համար Նա ինկին միւսներն պատժել է, ուխի լաւ է հարցնեն թէ, ինչո՞ւ իրենց մեղքերը չէ պատժում։ Այդպիսի մտածմունք չատուկ բերելու և այդ հարցի պատասխանը ստանալու նպատակ է, ահա որ Քրիստոս գալիլիացիների մասին բացուած խօսակցութեան կցում է, անմիջապէս այդպէս թվենալ ասելը։

Այդտ մէջ մի թզենի կայ՝ տէրը գնում գալիս է, ու պտուղ չի գտնում վրան. կամենում է կտրել ասլ որպէս զի զուր տեղ չբռնէ, բայց այգեպանը խնդրում է, որ մի տարի ևս խնայէ, ինքն ամէն խնամք կտանէ, շուրջը գետինը պարզատացնելու նոր միջոցներ ձեռք կտանի՝ կարելի է, այդպիսով անպտուղը պտղատու գտնայ։—Այս թզենին օրինակ պէտք է լինի ամէնքիս համար, երբ մեր անպտուղ լինելը մեր չար պատուհասներ ունենալն զգում ենք, կամ աչքի առաջ տեսնում ենք անշահ մարդիկ, որոնք զուր հաց են ուտում և հարցնում ենք զարմացած. ինչո՞ւ են տպրում այդպիսիները, ինչո՞ւ Աստուած ամէն անպէտք տունկ արմատով չի խլում և մեր ամէն մի չար գործը պատժում։ Պատասխանը պարզ է. ինչպէս այն թզենին այգեպանի համար, այնպէս և մեզնից իւրաքանչիւրն իւր տեղում և մեզնից իւրաքանչիւրն իւր տեղում Ցիրոջ համար, որ մեզաւորի մահը չի կամենում, այլ չար ճանապարհից դառնալն ու ապրելը. և քանի մենք կենդանի ենք, յոյս կայ գեռ, որ մեր շուրջը բարեկարգ պայմաններ կատարուին և մեր բարի պտուղներ բերելուն կնպաստեն։—Իմ ձերունի ուսուցչապետներից մէկն ասում էր. Երեմ, թոյլ է տրուած Աստուծոյ առաքինութեանց մասին խօսել՝ Աստուծոյ առաքինութիւնը երկայնամտութիւնն է։ Ու յիրաւի, ինչպէս պէտք է կատարեալ ուխեզերքն, եթէ նորա Նախախնամողն այդ առաքինութիւնը չունենար, եթէ Նա ինչպէս մի գործավից այգեպան չվարուէր,

իւր անկած ծառերի հետ, որ դիտէ երկար համբերել և իմաստութեամբ ու սիրով հոգ տանել մինչև ցանկալի պտուղ ի ստանայ։ Քանի՛ քանի մարդի ճանաչում ենք պատմութիւնից կամ մեր առօրեայ փորձերից, որոնք սկզբում ոչինչ չէին խոստանում որոնց ընթացքը վատ ապագայ էր գուշակել տալիս, բայց հանգամանքները փոխուեցան. Աստուծոյ մասը այնպիսի մի նոր ուղղութիւն տուաց նոցա կեանքին, որ օրինակելի անձնաւորութիւններ հանդիսացան՝ օգտակար ընկերապատող մարդկութեան և համայն երկնատուր Ծիրոջ։ Ո՛վ կարող է ասել թէ, մեզնից ո՛ր մէկի համար ինչ է պահած։ Մենք իրաւունք ունինք այդ Աստուծոյ երկայնամտութեան ապաւինելու, սակայն պէտք է, չմոռանանք երբէք, որ այնուամենայնիւ պտղատու ծառը միայն կեանքի արժանի է. իսկ անպտուղը՝ «տապար առ արմին կայ», երկայնամիտ և առնաշատ Դատաւորը մի տարի, երկու տարի— հարիւր տարի սպասել կարող է, բայց երբեմն, կանի, Ուր պատասխանը, և վախճանը որոշ է,—«Հատանի և ի հուր արկանի»։

ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՒԱՆՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆՔ ԴԱՒԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԻՋՔ ԵՒ ԲԱՔԳԻՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ։

Ընթերցողներից շատերը գուցէ, այս վերնագիրը կարդալիս՝ «կրկին դաւանական վէճե՞ր» պիտք է, բացականչեն դժկամակութեամբ և առանց յօդուածի բովանդակութեանը նայելու շրջեն թերթերը այնչափ ևս, մեզանում նախապաշարումը այսպիսի խնդիրների նկատմամբ։ Կարիք կա՞յ սակայն այն հաստատակամ ճշմարտութիւնը նորից պարզաբանելու, թէ, տարբերը բան է նոր վէճեր յարուցանելը և տարբերը՝ դարեր առաջ եղած վէճերն իրրև պատմական երևոյթի քննութեան առնելը։ Ծիրուն մեր շատ յիշողութիւններ շատ կան, որոնք իրաւունք են տալիս մեզ խորշելու դաւանական վէճերից, բայց ուրանալ չենք կարող, որ նոքա ահագին դեր են խաղացել մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ և այդ պատմութեան բազմաթիւ էջերը մութ կլինան մեզ համար, եթէ, նոցա ծագման և տարածման պարագաները լուրջ ուսումնասիրութեան առարկայ չդարձնենք։ Հայոց եկեղեցւոյ առաջին մտանակցութիւնը դաւանական վէճերի մէջ մենք Բարգէն կաթուղիկոսի առնեան հետ ենք կապում՝ չնայելով որ ընդհանուր եկեղեցւոյ ծոցում ծագած վէճերը առաջ ևս մեր հայրերի ուշադրութիւնը գրաւել են և անհեթեթութիւն չեն անցել մեր եկեղեցւոյ կազմակերպութեան համար. որովհետև վերջինս իրօք այդ ժամանակ միայն ելնում է հանգիստութեան վիճակից և պայքարի մէջ մտնում։ Ինչպէս յայտնի է այս նշանաւոր քայլափոխի հետևանքն եղաւ բաժանումն արևմտեան քոյր եկեղեցիներից. ուստի և խօսել սորա մասին՝ հնչանակէ, մեր եկեղեցւոյ պատմութեան ամենակարևոր կէտը շօշափել կամ որոնել այն պարագլուխը, որով այդ պատմութեան երկու զլխաւոր շրջանները բաժանուում են միմեանցից. իսկ մեզ համար անտարբեր բան չէ անշուշտ, թէ երբ և ինչ հանգամանքներում յառաջ եկաւ այն շարժումը, որով մեր եկեղեցին եղաւ միւս եկեղեցիների բռնած շաւղից և մնքատուութեան սկզբից իւր ինքնուրոյնութիւնը պահպանելու և ձևակերպելու համար։

Այս մասին մեզանում վարդ է վեր հատատուած թիւն գտած և մի գլխից միւսն անցնող տեսակութիւնն այն է, որ Բարգէն կաթուղիկոս 491 թ.-ին մի ժողով է գումարել Վաղարշապատում և նզովել Քաղկեդոնի ժողովը՝ անխորտակելի անջրպետ հաստատելով այսպէս ևս իրերի միջև—հոռովմական եկեղեցւոյ մէջ։ Մենք առաջ ևս, այլ և այլ պատմական փաստերի վերայ հիմնուելով՝ խիստ կասկածելի էինք համարել այս տեսակութիւնը. իսկ այժմ մի հարևանցի ակնարկ Արարատեան անցեալ և այս համարում լոյս տեսած թղթերի վերայ բաւական է, համոզելու, թէ, պատմութիւնը բոլորովին ուրիշ ընթացք է, ունեցել քան կարծում էինք։ Աչքի ընկնող տարբերութիւններն այստեղ երեք են. ժողովը գումարել է Ա) Դուինում և ոչ թէ Վաղարշապատում։ Բ) Կաւատի թագա-

ւորութեան ԺԸ. տարին, որ տպել է 506 թ.-ին, և ոչ 491-ին. գ) եթէ, ոչ բացատրէր, գոնէ, գլխաւորապէս նեստորականութեան, և ոչ քաղկեդոնականութեան մասին վճիռ կայացնելու նպատակաւ։ Արդ, որչափ սաղմ են այս տեղեկութիւնները միմեանց հետ բաղդատելով և ի՞նչ է, հետևում նոցա ստուգութիւնից։ Առնենք նախ ժամանակի խնդիրը։

Որչափ գիտենք՝ առաջին անգամ Շամշեանն է այս ժողովի համար 491 թ.-ը որոշել, բայց ոչ նա և ոչ նորա հետևողները որևէ հիմք են ունեցել այսպէս ընդունելու։ Առհասարակ Բարգէն կաթուղիկոսի և նորա անմիջական նախորդների ու յաջորդների մասին մեր ունեցած ժամանակագրութիւնը չափազանց շփոթ է և այն թուանշանները, որ մինչև այժմ գործ են դրուել այն շրջանի համար՝ գրեթէ բոլորը կամայականօրէն են կազմած կամ առանց օրինաւոր ընտրութիւն անելու առնուած իրար հակասող պատմական յիշատակութիւններից։ Վերջերս Հ. Բ. Սարգիսեան փորձել է իւր «Քննագատութիւն Յովհան Մանդակունւոյ և իւր երկասիրութեանց վերայ» գրքի մէջ Յովհան Մանդակունւոյ մահուան տարեթիւը որոշելով՝ ձգտել նաև նորա յաջորդի կաթուղիկոսութեան տարինե-րը * բայց նորա ձեռքի տակ եղող միակ հաստատուն թուանշանը նոյն մեր թղթի մէջ յիշուածն էր, մինչ միւս բոլոր աղուեսատեան թուերը, որ նա յայտնի պատմութեան և անյայտ «հին և վաւերական (?)» յիշատակարանների ցուցմունքներից մեծ աշխատութեամբ և սրամտութեամբ հանում է՝ գժբաղդաբար ոչ մի կռուան չունին։ Նոցա արժէքը ցոյց տալու համար բաւական է յիշել, թէ ինչպէս է գտնում Հ. Սարգիսեան Գիւտ կաթուղիկոսի մահուան տարին։ Փարպեցու պատմութեան մէջ ասած է, որ Գիւտ կաթուղիկոս յարաբերութիւն է ունեցել ի միջի այլոց Յունաց Լևոն կայսեր հետ։ Սերկոս Լևոնի թագաւորութեան սկիզբը դնում է Պերոզի իշխանութեան քսանևհինգերորդ տարին կամ 482—484-ին. և ահա եզրակացութիւն՝ ա-րեևն Գիւտ կենդանի էր 483—484-ին մի տարի ևս հաշուենք նորա Տիգրան դնալն ու վերադառնալը՝ ուրեմն նա վախճանուեցաւ 485 թ.-ին։ Զուր ջանք, անօգուտ վաստակ։ Լևոն Թրակացի կայսրը միանձնեայն չէ եղել, որ Նորա իշխանութեան տարիները ստուգելու համար Սերկոսի օգնութիւնը դիմելու հարկ լինի։ առաջին պատահած պատմութեան դասագրքի մէջ կարելի է գտնել, որ Նա թագաւորել է 457 թ.-ին և վախճանել 474-ին. ուրեմն Գիւտ կաթուղիկոսի նորա հետ ունեցած յարաբերութեան մասին կարելի է ասել միայն, թէ 474 թ.-ից յետոյ լինել չէր կարող։ Ոչ թէ Գիւտ 484—485 թ.-ին կաթուղիկոս չէր՝ * այդ բոլորովին պարզ է Փարպեցու պատմութիւնից, որի համաձայն Վահանի ապստամբութեան միջոցին կամ 483 թ.-ին կաթուղիկոսական աթոռի վերայ արդէն Յովհան Մանդակունին կը նըստած. և եթէ, ընդունենք իսկ, թէ նորանից առաջ Քրիստափոր կաթուղիկոս չի եղել, ինչպէս եզրակացնել կարելի էր յիշեալ Թոմա Արծրունու պատմածից՝ այնուամենայնիւ Գիւտ աթոռընկէց լինելուց յետոյ մինչև Վահանի ապստամբութիւնը մի քանի տարիներ պակաս է անցած լինին, որովհետև Փարպեցին նորա մասին խօսքը վերջացնում ու յետոյ դէպ նոր սկսում է պատմել, թէ ինչպէս Վահան Պարսից գունն է գնում վերադառնում, իւր ուրացութեան համար հալումաշ լինում։ Այսպիսով Հ. Սարգսեանի ինչպէս Յ. Մանդակունու կաթուղիկոսութեան առաջին տարին 485

* Վենետիկ, 1895. եր. 19 շ.։ Հ. Սարգիսեանին ծանօթ են Բարգենի կրկին թղթերը Վենետիկի Միխիթարեանց թ. 55 ձեռագրից, «զոր յամին 1851 ընդօրինակած է Հ. Բառնաբաս Եսայեան ի Հռոմ՝ Աճուռնեան հաց թղթագիր մատենեն, որ գրուած է ի թ. Հ. Զաք. ի Հռոմկլա»։ Այս թղթերից երկրորդն անվարանական է համարում նա այն պատճառաւ, որ Բաղկեդոնի ժողովը յիշուած է այնտեղ, որ Վարդ իբրև մարգպան է յիշուում նոյն։ Հետևաբար է՝ որտեղից գիտենի, թէ Վարդ «յամին 511 հազիւ ուրեմն յայոդուց Վահանայ»։

* Կենդանի կարող էր լինել որովհետև ամենևին հիմք չկայ ենթադրելու, թէ նա նոյն իսկ պատրից զրկուելու տարին մեռաւ, մինչ Փարպեցին ասում է, Պարսկաստանից վերադարձից յետոյ՝ «կեցեալ առաւելագոյն պատուով բան զառաջինն ի Հայս Տանգչիր երկայն ծերութեամբ»։

թ.-ին գնելու համար բերած փաստերն անհիմն են, այնպես և անշօր են մահը 498—99 ի գնելու համար բերածներից մի քանիսը: Տիկրի արձանագրութեան մէջ «Վահան» անուն չի կարդացուել, այլ «Մ՝անան». Սահակ Կամսարական անհրաժեշտ չէ, որ Փարպեցու յիշած Արշաւիր որդի Սահակը լինի (թէև Բարգէնի թոռի մէջ նորա անուան յիշուելը նոր ոյժ է տալիս այս կարծիքին), իսկ Յովհան կարող է լինել Յովհաննէս Բ. Գաբեղենցին († 573 թ.-ին): Այն Յովհանը, որին յիշում է Փարպեցին իբր թոռի մէջ՝ անտարի է Մ՝անդակունուն համարել. այսպիսի մի նշանաւոր կաթուղիկոսի ով եղածը որոշելու համար հարկ կայ մէթէ «Յիւսոյ կաթուղիկոսի եղբօրորդի» անուանել նորան. նա ինքն արդէն իբր անունով պէտք է յայտնի լինէր և այնքան հեղինակութիւն ունենար, որ մի վանահայր նշանակելու համար պատգամաւոր չգառնար մայրզպանի մօտ և նորանից յանդիմանութեան խօսքեր լսէր: Շատ կարելի է Մ՝անդակունին մինչև 6 դարի վերջը և նոյն իսկ Զ.-ի սկզբի տարիները կաթուղիկոս է եղել, բայց մենք ոչ մի հաստատ տեղեկութիւն չունինք այդ մասին՝ չգիտենք ուրիշն նաև, թէ երբ յաջորդից նորան Բարգէնն: Ժամանակագրութեանց մէջ յիշուած տարիները ոչ մի կշիռ չունին այս դէպքում և միայն այն ժամանակ կարող են ի նկատի առնուել, երբ բուն պատմական տղբիւրներ մեզ միջոց են տալիս տալու նոցա արժէքը: Մ՝նում է ուրիշն բաւականանալ այն յիշատակութեամբ, թէ, Բարգէն կաթուղիկոս ժողով է գումարել Կաւատի թագաւորութեան ԻԸ. տարին: Այդ տարեթիւը հաստատում է նաև մեր ձեռագրների մէջ գտնուած Հայոց ժողովների ամենից համառօտ, հին և արժանահաւատ պատմութիւնը, որի հեղինակին Բարգէնի թըղթերը հաւանականօրէն ծանօթ են եղել. «Ե. ժողով արար Տէր Բարգէն ի Քաղաքաւդաշտի ի ԻԸ. ամի Կաւատայ Պարսից արքայի, վասն Ակակայ և Բարձուժայ, որք Նեստորի ադանդոցն ապականէին զարեւելեայսն, որպէս պիտոյ թէ, մի խոտորիք ի բանից նոցա, զի մեք ամենեքեան հաստատեալ եմք ի մի ուղիղ հաւատ՝ յոյնք, հայք, վիրք և ապուանք. և այս է, յաւուրս Զենոնի և Անաստասայ ուղղափառաց»— պէտք է ենթադրել, ի միջի այլոց, թէ, այնտեղ յիշուած «քաղաքաւդաշտ» խօսքն է, շփոթեցրել ուշ ժամանակի պատմագիրներին, որոնք արդարև էին այդ անուան ներքոյ աւելի Վաղարշապատ, քան Դուին հանականալու. մինչդեռ պատմական անհերքելի թիւն ունինք, որ արդէն Դուա Դուինը էր փոխադրել կաթուղիկոսական աթոռը, այդպէս կառավարեցան Վահանի յաջորդները, այդպէս ու բնում և աւելի յաջորդաւորութիւնը կար եկեղեցական ժողովի համար:—Սակայն Բարգէնի ժողովի ժամանակն աւելի պարզ կլինի, երբ նորա նպատակն ի նկատի ունենանք և արտաքին պատմութեան միջոցաւ ստուգենք, թէ, ինչ հանգամանքների շնորհիւ նա յառաջ եկաւ:

Ինչպէս յայտնի է 431 թ.-ին Եփեսոսի տիեզերական ս. ժողովով նեստորական ուսուցմունքը բանադրուեցաւ և նորա հետևողների դէմ հալածանք սկսուեց այնուհետև Հռոմէական պետութեան մէջ: Սակայն սոցանից շատերը յանձն առնելով նզովել Նեստորին՝ անվտանգ մնացին և շարունակում էին գաղտնի գործել. մանաւանդ Քաղկեդոնի ժողովից յետոյ ծագած խռովութիւնների շնորհիւ նոքա աւելի ոյժ ստացան և մինչև հետս արևելք տարածեցին իրենց ապրեցութիւնը: Նոցա գլխաւոր կեդրոնն էր Եդեսիան, ուր նշանաւոր ուսուցչարանական դպրոց կար և Նեստորի աշակերտակից ու գաղափարակից Բռաս եպիսկոպոսի շուրջը ժողովուել էին նոցա համախոհները. Զենոն կայսրը 484 թ.-ին փակից այդ դպրոցը և նեստորականներին հալածից պետութեան սահմաններից:* Սոքա ապաստան գտնելով Պարսկաստանում՝ կեդրոն ընտրեցին Մ՝ծբինը, որի եպիսկոպոսն էր մինչև 489 թ.-ը և նեստորականների ամենից աչքի ընկնող ներկայացուցիչն ու գործիչը՝ Բարծուման: Այստեղից նեստորական ուսու-

* Պէտք է ի նկատի առնել, որ Բարգենի ս. րդրի մէջ յիշուած Պետրոս Եպ. տարին, երբ նեստորականութիւնը պարսիկ վիճակի ասելով՝ մտաբ է գործել Պարսկաստանում՝ ճիշդ համապատասխան է այս բանին:

մը տարածուեցաւ դէպի Պարսկաստանի բոլոր կողմերն և կարճ միջոցում այնչափ զօրացաւ, որ 499 թ.-ին Բարէտս եպիսկոպոսը մի ընդհանուր ժողով գումարեց Սելեւկիայում և ընդունեց այն իրրև պարսկական եկեղեցւոյ դաւանութիւն։ Ակակիոսը, որ Բարձումայի հետ գոյ յիշուում է, իրրև նեստորականութեան առաջնորդ՝ Սելեւկիոյ եպիսկոպոս էր, Բարէտսի նախորդը և մեռաւ 498 թ.-ին։ Նա մի ժամանակ Բարձումայի հակառակորդն էր եղել և Կ. Պոլսում գանուելով՝ հերքել էր նաև հրապարակում իւր կապը նեստորականների հետ, բայց իրօք ամէն կերպ նպաստել էր նեստորականութեան զօրանալուն իւր հօտի մէջ և նախապատրաստել այն դրութիւնը, որ հաստատուեցաւ Սելեւկիոյ ժողովում։ Ուստի այս ժողովը որոշեց մեռացութեան տալ նորա վէճը Բարձումայի հետ և ճանաչել երկուսին էլ հերետիկոսութեան վարդապետներ նեստորական եկեղեցւոյ։ Այդ է հաւանականապէս պատճառը, որ նորա անունը միասին է յիշուում, իսկ Ակակիոսին առաջնակարգ տեղը, որ համարելուն շատ նպաստել է անշուշտ նաև այն հանգամանքը, որ մի բնութեան վարդապետութեան պաշտպանների մէջ մեծ հերետիկոսութիւն վայելող Փիլոքսէնն Նարուկի պրանական եպիսկոպոսը եռանդուն բանակռիւ է վարել նորա դէմ և բազմաթիւ գրուածներով երևան հանել նորա մոլորութիւնները։

Այսպէս ուրեմն Բարգէն կաթուղիկոսին դիմոց ու Հայոց եկեղեցւոյ պաշտպանութիւնը ընդդիմները Պարսկաստանի այն քրիստոնեաներն էին, որոնք Սելեւկիոյ ժողովից յետոյ այդ ժողովի վճիռներին համակերպել չկամենալով՝ հալածանքի ենթարկուեցան նեստորականների կողմից։ Պէտք է ի նկատի ունենալ, որ ժամանակի պարթից թագաւորը՝ Կաւատ, սկզբում քրիստոնէութեան հալածող էր, բայց 499 թ.-ից յետոյ, երբ նա երկու տարուայ շատ իրենից խլած գահը կրկին ձեռք ձգեց՝ միամիտ էր վարուում քրիստոնեաների հետ և թոյլ տալիս ազատ պաշտել իրենց կրօնը. այդպիսի վարմունք կարևոր էր մանաւանդ յատնաց հետ ունեցած պատերազմի պատճառաւ, որ 502 թ.-ին սկսուեցաւ և տևեց մինչև 506 թ.-ը։ Պատերազմի խառն ժամանակ կրօնական վէճերն ի հարկէ, ազատ ասպարէզ չէին ունենայ, մինչդեռ վերակենդանացող խաղաղութեան հետ շատ բնական էր։ Ուրեմն երկրի քաղաքական դրութիւնից էս երևում է, որ 5-6 թ.-ը շատ յարմար ժամանակ էր այնպիսի մի ժողով գումարելու, որպիսին էր Բարգէնի ժողովը Դուինում և որ ժողովի իսկական տիրոջը նեստորական յունգուածները պէտք է եղած լինին։ Բարգէն կաթուղիկոս իրաւունք ունէր ասելու, թէ «հաւատք և յոյս և վիրք և ապաւէն» մի հաւատ ունին, որովհետև Դուինի ժողովը գումարուեցաւ Անաստաս կայսեր իշխանութեան այն տարիներում, երբ առաջին տեղ բռնարարութիւն էին ուսուցանում՝ խոստում և հալածում քաղկեդոնականներին։ Զարմանալի չէ ուրեմն, եթէ նա Քաղկեդոնի ժողովը նկատում է, լոկ իրրև նեստորականութեան այժ առած մի երևոյթ, մինչ վերջինս բոլոր չարիաց արմատն է, և եկեղեցւոյ ալէկոծման բուն պատճառը։ Զինան կայսեր թագրէթը Կիւրիղ Ալեքսանդրացու «Երկրաչափի դէմքոց» հետ իրրև ուղիղ դաւանութեան ուղեցոյց ներկայացնելը, ինչպէս և հերետիկոսների կարգում Թէոդորէտին, Նրսէսին և Եւաթկէսին նզովելը՝ առանց Քաղկեդոնի ժողով և Լեւոն պապի անուն յիշելու ցոյց է տալիս, որ Բարգէն և իւր ընկերները ժողովով որոշել էին Քաղկեդոնի ժողովը նկատմամբ ընդունել այն դրութիւնը, ինչ որ առաջարկել էր Զենոն իւր նշանաւոր հնոտիկոնով։ Այսինքն հերքել քաղկեդոնականութիւնը՝ չյիշելով ամենևին նորա և նորա դէմ եղած հերետիկների անունները։ Հաւանականօրէն այդ պատճառաւ և առաջին թղթի մէջ Քաղկեդոնի անունը ամենևին չկայ, երկրորդ թղթի «զոր և դիտացաք իսկ ձեզ յառաջագոյն վրաց և ազուանից վիրաւորութեամբ խրատանչիւր աշխարհի գրով» խօսքերից պէտք է եղրակացնել, որ առաջինը Հայոց եկեղեցւոյ կողմից ուղարկուած այդ պաշտօնական գրութիւնն է, ուստի պաշտօնապէս ընդունած սահմանից չի ելնում։ Մինչ երկրորդը մանաւանդ գրութիւն լինելով կողմնակի կերպիւ արտայայտում է այն հայեացքը, որ ժամանակակից հայերն ունէին քաղկեդոնականութեան մասին։ Հայե-

րը կարող էին Քաղկեդոնի ժողովը պաշտօնապէս նզոված չլինել, բայց ասել երբ տեղը գալիս էր, թէ իրենք չեն ընդունում այն՝ նզովել Թէոդորէտին և Իբասին որոնց անունները իրբև Նեստորի համախոհների և Կիւրեղ Աղեքսանդրացու հակառակորդների՝ ասել էր բոլոր աշխարհում։ Նզովել նաև Եւտիքէսին, ցոյց տալու համար, որ Նեստորականութեան և քաղկեդոնականութեան հակառակ լինելուց չվախաք է հետեւցնել թէ, Եւտիքեսի մոլորութիւնն են ընդունում։

Յաճախ գէպք գտանական այն դրութիւնը, որ ներկայ իմիների մէջ ենք գտնում՝ դժուար է, հաշտեցնել Ոսխոանէսի պատմութեան մէջ պահուած վկայութեանց հետ, առնք այս իմիներից զուրս ամենահին տեղեկութիւններն են, ինչքան դիտենք, Բարգէնի ժողովի մասին, և որոնց հիման վերայ է, կազմուել այն կարծիքը, թէ այդ ժողովում առաջին անգամ որոշակի բանադրուել է քաղկեդոնականութիւնը։ Այսպէս՝ Մովսէս Խորենացին պրած իմիի մէջ ասում է. «Ի ժամանակս Կաւատայ արքայից արքայի Խնդիր եղև քննութեան Հաւատոյն, և հոտմք զՔաղկեդոնին ընկալան պհաւատոյն և մեր աշխարհս և ձեր հրաժարեցին և հեռացան, և դուք և ս զրով կայ և պահի մեր և ձեր միաբանութիւն Հաւատոյ»։ Նոյնը հաստատում է, ի միջի այլոց Աբրահամ կաթուղիկոս իւր երրորդ իմիում՝ մի առ մի թուելով այն վրացի եպիսկոպոսների անունները, որոնք վրաց Յարբրիել կաթուղիկոսի հետ նզովել են Քաղկեդոնի ժողովը ու Լեւոնի առաջը։ Սակայն ինչպէս տեսանք, ժամանակակից պատմական հանգամանքներին համապատասխան չէ այս տեղեկութիւնը, թէ «Հոտմք զՔաղկեդոնին ընկալան պհաւատոյն»։ Կաւատի օրով կատարուած քննութեան հետ նոյա այս կամ այն հաւատ ընդունելը չէր կարող կապուած լինել, և մենք ամէն պատճառ ունինք հաւատալու Բարգէնի և վերև յառաջ բերած Յիշատակարանի խօսքերին, թէ հայերն այդ ժամանակ ընդհակառակն վրացոց և առաջնից հետ յոյների միաժամանակութեանն էս իրենց դատանակից էին համարում։ Դժուար է, որոշակի ասել, թէ ինչն էր բուն առիթը Բարգէնի օրով հայոց, վրացոց և ապստանից միաձեռ դալուն և մի բնդհանրական մեծ ժողով կազմելուն։ կարելի է, յատնական եկեղեցւոյ մէջ սիրող քաղկեդոնական յատկութիւնն ու Զենոն կայսեր հրովարտակն առանձին դեր էին խաղում այդպիսի բայց քանի որ Բարգէնի իմիների մէջ, ինչպէս յիշեցինք, նեստորականութիւնն է առաջին տեղը բռնում՝ մենք առիթ էրաւացի ենք համարում վերոյիշեալ յիշատակարանի վկայութիւնը, թէ, այդ ժողովը գումարուել է, յատկապէս «վասն Ակակեայ և Բարծումայ», այսինքն այն վէճերի պատճառաւ, որ պարսից իշխանութեան ներքոյ եղող քրիստոնեաներին էին յարուցում—Հարկաւոր էր, որ Նաւատի հպատակ իրար հարեան քրիստոնեայ ազգերը մի միահամուռ ձեւով կայացնէին, թէ ինչպէս պէտք էր վերաբերուել դէպի այն դատութիւնը, որ հաստատուելու էր գահի պետութեան մայրաքաղաքում և ահա նոքա ժողովում են, հրաւիրում են միաբանութեան իրենց նաև հետաւոր պարսկական հանգիստներում նախնեաց աւանդութեան հաստատիմ մնացած հաստատակիցներին և աղաչում են նզովել նեստորականներին՝ արգելով ամէն հաղորդակցութիւն նոցա հետ։ Եթէ այդ առիթ խմբագրուած «Հաւատոյ միաբանութեան գիրն» նշանակի բովանդակութիւն ունէր, ինչպէս «առ պարսս ուղղափառաբար» ուղղած Բարգէնի առաջին թուղթը ցնում է, այն ժամանակ ասել որ Մովսէս և Աբրահամ կաթուղիկոսները կոյսնակի կերպով միայն եղրակացնում էին նորանից, թէ Քաղկեդոնի ժողովը բանադրուել է, այնպէս և նոյն այդ հանգամանքն էր այժ առիթ Կիւրեղին համաձայնելու խօսելու նոցա հետ և Քաղկեդոնի մասին լռելու կամ խօսքը նեստորականութեան վերայ գարձնելու։

Մեր վերջնական եղրակացութիւնն այս բոլորից յետոյ այն է, որ ընդհանուր եկեղեցւոյ մէջ յարուցուած գատանական վէճերն հայոց եկեղեցւոյ համար կենսական նշանակութիւն են գարձել առաջին անգամ այն ժամանակ, երբ նեստորականութիւնը Պարսկաստանի կողմնակից ճանաչուել է, իբրև ուղիղ գատանութիւն և նորա հետևողներն սկսել են ձեռ-

առում ցոյց տալ բոլոր պարսկահպատակ քրիստոնեաներին իրենց դաւանութեան բերելու։ այս առթիւ մի մեծ ժողով է, գումարուել Դուինում 506 թ.-ին Բարդէն կաթուղիկոսի նախագահութեամբ և վրայ, ազատելից ուղղափառ պարսիկների մասնակցութեամբ, որտեղ բանադրուել է Պարսից ընդունած նեստորականութիւնը իր պղծած ներկայացուցիչներով՝ Ակակիոս, Բարծումա, Բաբէոս և այլն, Ջենան կայսեր հնազանդութեամբ ուղղափառ դաւանութիւն է ճանաչուել, և ըստ այմ՝ Քաղկեդոնի ժողովը պաշտօնապէս չի բանադրուել, բայց լռելեայն համարուել է, քաղաքական նեստորականութեան ծնունդ, ուրեմն խոտելի ուղղափառ քրիստոնեաների համար։ Թէ երբ է տեղի ունեցել պաշտօնական բանադրանքը՝ այդ մասին չեմ։

Կ. Վ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

С. Петербургскія Вѣдомости թերթի 271 համում մի գաւառական թղթակից առանձին ուշադրութեան արժանի մի ընդարձակ յօդուած է նուիրել այն հարցին, թէ ինչ միջոցներով են մաքառում այժմ Ռուսաստանում աղանդների դէմ և թէ ո՞րն է տակաւին կոմն այդ մաքառման։ «Ռուսաստանը միշտ հպարտացել է հաւատոյ խնդիրներում ցոյց տուած ներողամտութեամբ, ուղղափառութիւնը հեռու է եղել միշտ մոլեռանդութիւնից և բռնութիւնից, այսպէս է սկսում նա իր յօդուածը—և սկզբունք դնելով, որ «զաղափարների, զգացմունքների, հաւատալիքների դէմ կռիւը կարող է և պէտք է լինի միայն կռիւ հոգեւոր աշխարհի, և ոչ երբէք նիւթական այժի սահմաններում, քրէական պատիժների և ոստիկանական ձեռնարկութեանց միջոցաւ», ցոյց է տալիս փաստերով, որ աղանդները և հերձուածները զարգացել և զօրացել են աւելի այն ժամանակները, երբ ամենախիստ միջոցներ են ձեռք առած եղել նոցա դէմ և ամենաստոկալի տանջանքներով նեղել աղանդաւորներին, մինչ ընդհակառակն մեր դարում, երբ կառավարութիւնը թէ եկեղեցին սկսել են մեղմութեամբ վերաբերուել, քարոզներով, հրապարակական վիճաբանութիւններով նոցա հաղմունքի վերայ ազդել և ամէն մի փոքրիկ շեղում ծխականութեանց մէջ իրրև մեծ յանցանք և եկեղեցւոյ բաժանում չնկատել՝ նոցա եռանդն ու գործունէութիւնը ամէն կերպ պակասել է։ «Նիւթական բռնութիւնը սխալ մտքերով կուրացած մարդուն աւելի է համոզում, թէ այդ մտքերի մէջ անպարտելի ճշմարտութիւն կայ, թէ նորա համար միայն հալածում են նոցա քաղաքական և դատաստանական խիստ միջոցներով, որ խոհականութեան փաստերով հերքել չեն կարող»։ Ծատ ազանդներ յառաջ են գալիս բարոյական պահանջների, հոգեւոր մտունդի կարիքից. երբ այդ պահանջներին ուղիղ ճանապարհով բաւականութիւն չի տրուում՝ մարդիկ կամայ ակամայ կողմնակի ճանապարհներ են ընտրում։ «Զուր տեղը չէ, որ ժուժկալութիւն արբեցութիւնից, համեստ կեանք, խոսքի զգաստութիւն, ընկերական օգնութիւն—ուսս աղանդաւորների սովորական յատկանիշներն են, որոնք և ամէնից աւելի են նպաստում նոցա տարածուելուն։ Իսկ այս բոլոր բարոյական սովորութիւնները իրրև քրիստոնէական կեանքի պարտաւորեցուցիչ կանոն պահանջուում են նաև ուղղափառ եկեղեցւոյ կողմից։ Ինչո՞ւ արդեօք նորա արմատ չեն բռնում մինչև այժմ ժողովրդի մէջ, որ սրբութեամբ պահում է ուղղափառութիւնը»։ Պէտք է ուրեմն ամէն չանք գործ դնել հոգեւորականութեան մէջ կրօնական եռանդ և բարոյական ոգի զարգացնելու, որ խոսքով և օրինակով ճշմարտութեան, բարութեան, առաքինութեան ուղեցոյց լինի նա՝ այն ժամանակ աղանդներն իրենք իրենց կանչատանան։ Ապա թէ ոչ, իրականութեան առաջ աչք փակելով և թոյլ տալով, որ ժողովուրդի մի ահագին, գուցէ բարոյապէս աւելի զօրեղ մաս իրրև վարակուած բանակ նկատուի՝ կնշանակէ այն տեղը հասցնել, որ համազգային ժայռից մի խոշոր հատուած կտրուի ընկնի, իսկ այդ առանց ուժգին ցնցման չի լինի։ «Այն մարդիկ, որոնք բռնութեան երկիւղից կամ նիւթական շահերի ցանկութեամբ իրենց հաւատքը փոխում են՝ ամենաթոյլ և բարոյապէս անկում մարդիկ են. այդպիսի մարդկանցով կարծեցեալ կողմնակիցների թիւը բազմացնելն ոչ մի կրօնի ներքին այժը չի աւելացնում, այլ թուլացնում է ... Եւ սակայն, հակառակ մեր կառավարութեան մարդասիրական հայեացքներին, շատերը շարունակում են դեռ հաւատալ անմտաբար՝ ստիպումների, ահարկութեան և պատիժների փրկարար զօրութեանը հաւատոյ խնդրում»։

Ապա Երգոյ յօդուածագիրը իր սեփական փորձառութիւնից օրինակ է բերում մի աղանդաւորի հայեացքն այս խնդրի վերայ, նորա բառացի խոսքերով. «Մենք եկեղեցու դէմ չենք ելնում՝ մենք օգտան դէմ ենք ելնում։ Մեր բոլոր մեղքը նորանում է, որ օրի չենք խմում, հարսանիքներիս

և հաղկերոյթներին անկարգութիւններ չենք անում, այլ ազնիւ կերպով ինքնաեռի շուրջ նստած՝ մեր թէյն ենք խմում... Դորա փոխարէն մենք թոյլ չենք տայ, որ ընկերը կորչի ... այլ եթէ հիւանդացել կամ ուժից ընկել է մէկը՝ մենք բոլոր հաստարակութեամբ օգնում ենք։ Աստուծոյ ճանապարհով, ինչպես Քրիստոս պատուիրել է։ Որովհետև այսօր նա է՝ վաղը ես...» Ցետոյ այդ մարդը մի քանի օրինակներ է բերում իր և իր գաղափարակիցների կեանքից, թէ ինչպիսի անտեղի հալածանքների են ենթարկուում իրենք, և ասելացնում է. «Պոպը (ռուս քահանան) իւր հօտն իսկական քրիստոնեաներ համարում է նոցա միայն, որոնք ծոններին անասունների պէս քաշ են գալիս, կրօնում են, ծնօղ հայհոյում, անկարգութիւն, սրիկայութիւն անում, եկեղեցում կռճղի պէս կանգնում՝ առանց պատարագի և ժամերգութեան միտքը հասկանալու։ Մօտ օրերս հարսանիք էր անցնում, և շուրջը բոլորքեան պարում էին. սրրոց պատկերներ ունէին ձեռներին՝ պատկերը ձեռին պարում էին։ Մի ուրիշ հարսանիքում խաղեր էին սարքել՝ մինչև այնտեղ հասցրին, որ մէկը իրրև սատանայ հագնուեցաւ, երեսին մուր քսեց, մօրուքից վուշ կախեց՝ գլխին եղջիւրներ. մի ուրիշը պոպ դարձաւ, շուրջառի տեղ փսխաթ ձգեց վրան—կոնքի մէջ մի կատուի մկրտել սկսան և այնպիսի անվայել խօսքեր ասել, որ կրկնելը մեղք է։ Եւ այս բոլորը դէմինչ է, պոպի համար այս բոլորը քրիստոնէական է։—Հարսանիքում, ասում է, արբածներն ինչ չեն անում։—Իսկ երբ մենք հարսանիքին չենք խմում կամ մի երկու փոքրիկ բաժակ միայն ցանկացողների համար դնում ենք, երեխաների և ընտանիքի տունը չենք քանդում հարսանիքի համար, ազնիւ և համեստ կերպով ժամանակ ենք անցնում՝ այդ արդէն քրիստոնէարար չէ, խիստութիւն է (աղանդի անուն), սատանայի ծառայութիւն»։

Այնուհետև Արգոյ Թղթակիցը պատմում է իւր աչքով տեսածն այս աղանդաւորների կրօնական կեանքի և սովորութիւնների մասին և տալիս է երկու փոքրիկ նմուշներ նոցա կրօնական երգերից, որոնց մէջ փայլում են և՛ վառ անկեղծ սիրոյ ու հաւատարմութեան զգացումներ գեղի Ուսուիոյ Ինքնակալ՝ Սպիտակ Ցարի և՛ մաքուր հաւատ ու ջերմեռանդութիւն, ապա յարում է. «Ահա այսպիսի, նոր բարոյական նրբաղգացութեամբ լի, պարզսիրտ կրօնական բանաստեղծութեամբ ամբողջովին համակուած, ամէն բանի մէջ խոհականութիւն և ճըշմարտութիւն որոնող մարդոց հետ վարուում են ինչպես բիրտ անասունների հետ՝ նոցա, թէպետև սխալ ուղղութիւն ստացած, հոգևոր ձգտումներին փայտով, բռունցքով, հարկադրութեամբ և պատիժներով պատասխան տալիս։ Նա մէջ է բերում իւր խօսակցութիւնը մի յայտնի միսիոնարի հետ, որ ուղարկուած էր աղանդաւորներին դարձի բերելու և այն կարծիքն ունէր, թէ ստիկանութեան ազդու գործակցութեամբ միայն նոցա վերայ ազդել կարելի է, թէ դանազան աղանդաւորների տարբերութիւնն իրարից այնպէս է, ինչպես դանազան տեսակ չներինը—և վերջացնում է իւր տխուր խորհրդածութիւնները՝ համեմատելով հասկացողութեան և գործունէութեան այս եղանակը աւետարանական սկզբունքների և այն Առաքեալի քարոզութեան հետ, որ ասում էր. «Ընդ ամենայնի ամենայն եղէ, զի թերևս ապրեցուցից զոմանս»։

Церк. Вѣстникъ թերթի թղթակիցը յիշեցնելով, թէ ինչպես մինչև այժմ ապարդիւն են անցել ըստ մեծ մասին եկեղեցւոյ և կառավարութեան գործ գրած ջանքերն հերձուածողներին ի դարձ բերելու նկատմամբ, մինչ ընդհակառակն նոքա իրենք աւելի և աւելի ապգեցութիւն են ձեռք բերում և օրեցօրէ մոլորեցնում՝ կանգ է առնում յատկապէս այն կէտի վերայ, թէ ինչ վնասակար հետևանքներ են յառաջ գալիս հերձուածողների հետ կնքած ամուսնութիւնից։ Ուշադրութեան արժանի հանգամանքն այստեղ այն է նորա ասելով, որ մինչ Օրթոդոքս եկեղեցւոյ մէջ ծնօղների համաձայնութիւնն անհրաժեշտ է համարուում պատկագրութեան համար՝ այդպիսի պահանջ չի զգացուում այն դէպքում, երբ մի երիտասարդ կամ աղջիկ հերձուածողի հետ է ամուսնանում. ուստի այս և նման արդելքներից խոյս տալով՝ երիտասարդ զոյգերն որև է հերձուածի գիրկն են ապաւինում և անկանոն ընտանիքներ կազմում։

—Մի քանի եկեղեցական թերթեր աշխատում են միսիոնարական և եկ. դպրոցական գործի համար ուղիղ հասկացողութիւն արծարծել այն ուղղութեամբ, որ գծել է Ս. Սինոդի օբեր-պրոկուրոր Պոբեդոնոսցեվ նորերս հանդիսապէս արտասանած հետևեալ խօսքերով. «Արտաքին թշնամիները չեն երկիւղալի եկեղեցական դպրոցի համար, երկիւղալի են ներքին թշնամիները՝ անտարբերութիւն, ձեւականութիւն և ստութիւն. ստութիւն, որ արտայայտուում է ճշմարտութիւնը՝ լինի այդ դառն ճշմարտութիւն՝ ծածկելու և գործը գեղեցկացրած կերպով ներկայացնելու ձգտմամբ, իբր թէ ամէն և ինչ և ամէն ժամանակ յաջող է գնացել»։

—Ռուսաց եկեղեցին, ինչպես յայտնի է վերջին ժամանակ առանձին ուշադրութիւն է դարձնում իւր ազդեցութիւնը զօրացնելու սահմանների մօտ գտնուած երկրներում։ Այսպէս՝ Ս. Սինոդը որոշել է 30,000 ռուբ. մարկ յանձնել Փինլանդիայի արքեպիսկոպոս Անտոնիոսին, այդ երկրի օրթոդոքս ազգաբնակութեան կրթական և բարեգործական հաստատութիւնների պէտքերը լցուցանելու համար, նոյն

երկրում թոյլ է տրուել մի քանի անգամ հանդիսաւոր տօներին ժամերգութիւնը ֆիներէն լեզուով կատարել, որ նպաստել է մանաւանդ եկեղեցական հրեցողութիւնը ժառչելի և սիրելի դարձնելու տեղացիներին։

Նման հոգածողութիւն նկատելի է Կարսի վիճակի օրթոդոքսների համար, որտեղ նոքա աչքի ընկնող փոքրամասնութիւն են կազմում՝ մոլոկանների և այլ աղանդաւորների նկատմամբ։ Օրթոդոքսների բնական շուրջ գիւղերից մեկում նոր եկեղեցի և դպրոց է կառուցուել, որ տեղական եկեղեցական վարչութիւնը շատ կարևոր միջոց է համարում՝ բազմաթիւ աղանդաւորների ճնշող ազդեցութիւնը չեզոքացնելու համար, և հրատէր է կարդում ամէն կերպ նպաստել օրթոդոքսների թիւն աւելացնելու այս վիճակում։

Կ. Պոլսում սեպտ. 8-ին մեծ հանդիսով օծուեցաւ Բոլղարացւոց նոր եկեղեցին՝ յանուն ս. Ստեփաննոսի։ Այդ եկեղեցին, որ այժմ ամբողջ Բալկանեան թերակղզում օրթոդոքսների ամենափառաւոր տաճարն է համարուում, մեծ դաւիք է նստել և ամենայն շքեղութեամբ կառուցուել՝ մի տեսակ յաղթութեան կոթող պէտք է լինի այն դատի համար, որ Բոլղարները 50 տարուց իվեր վարում են տիեզերական պատրիարքութեան դէմ՝ ի պաշտպանութիւն իւրեանց անկախութեան, և որի սկզբունքը եղաւ 1871 թ.-ին Կ Պոլսում առանձին Էկզարխութիւն հիմնելը։ Բնականաբար պատրիարքարանը հաշտ աչքով չէր նայում Բոլղարների ցոյցի վերայ և ամէն կերպ աշխատեց արգելք լինել, որ համազգային բնաւորութիւն չընտանայ։ Սորա գաղտնի չանքերի շնորհիւ տաճիկ կառավարութիւնը յիրաւի կանգնեցրեց համմանագրելի վերայ գնացքը, որով բոլղար բարձր դասակարգի ներկայացուցիչները գալիս էին եկեղեցւոյ օծման հանդիսին ներկայ լինելու։ և թէպէտ բոլղարական վարչութեան ազդու միջամտութեամբ արգելքը վերացուեցաւ, բայց հիւրերը չկարողացան բուն հանդիսին հասնել։ Այնուամենայնիւ բոլղար ազգութեան բազմաթիւ պատգամաւորները զանազան երկրներից եկած, ներկայ էին հանդիսին, որ և անցաւ վայելուչ շուքով։ Երկու պատանակից քոյր եկեղեցիների թշնամական յարաբերութիւնները աւելի ևս լարելու համար նոր առիթ էր կարկաչ այս հանդէսը։

—Նորերս Կ. Պոլիս եկաւ ն սրբալիր ընդունելութիւն գտաւ Սուլթանի կողմից Բոսնիոյ և Հերցեգովինիոյ օրթոդոքս համայնքների ուղարկած պատգամաւորութիւնը, որի նպատակն է աշխատել առանձին սերբական եկեղեցի հաստատելու համար Ռուսերիացւոց գրաւած այդ նահանգներում և որի նոյն նպատակաւ եղած դիմումները Վիեննայում անուշադիր մնացին, նոյա պահանջած կազմակերպութեան հիմնական կէտերը, որ նոքա առաջարկել են ի բարեհայեցողութիւն Տիեզ. Պատրիարքի, սոքա են. Ա) Եպիսկոպոսներ պէտք է ընտրուին հոգևորականութեան և եկեղեցական համայնքների ներկայացուցիչների կազմած ժողովով, և հաստատուին պաշտօնի մէջ Կ. Պոլսոյ պատրիարքի վճռով. Բ) Եպիսկոպոսները պէտք է ոտճիկ ստանան Սերբ. օրթոդոքս համայնքներից և ոչ տիրապետող կառավարութիւնից, ինչպէս մինչև այժմ լինում էր. Գ) Կարևորագոյն եկեղեցական գործերը կարգադրելու համար Սերբ. օրթոդոքս հոգևորականութեան պէտք է իրաւունք տրուի ժողովական որոշումներ անելու. Դ) Հոգևորականութեան պէտք է իրաւունք տրուի եկեղ. ժողովներ գումարելու, որոնք կախուած պէտք է ունենան Կ. Պոլսոյ պատրիարքից, բայց ոչ տիրապետող կառավարութիւնից. Ե) Բոսնիոյ և Հերցեգովինիոյ Սերբ. օրթոդոքս եկեղեցին չի բաժանուի Տիեզ. պատրիարքից, այլ աւելի սերտ կերպով կկապուի նորա հետ.—Պատրիարքարանում առանձին յանձնաժողով է կազմած այս կէտերը քննելու համար։ Նշանակում են, որ՝ արդէն դէպի Բէլգրադ ուղևորուած, պատգամաւորութիւնը Պետերբուրգ կգայ, նոյն առաջարկները Ս. Սինոդին ներկայացնելու։ Առանձին ուշադրութեամբ հետևում է այս խնդրի ընթացքին Հերնոզորիան, որ ամէնից աւելի պատճառ ունի հետաքրքրուելու իր ցեղակից և դաւանակից ժողովրդի վիճակով։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Գերմանիա։

Ամիսներէ ի վեր Եւրոպայի թէ քաղաքական և թէ եկեղեցական մամուլը զբաղուած է Գերմ. կայսեր ճանապարհորդութեամբ դէպի Պաղեստինա, որ արդէն սկսուել էր, և ամէնքը լարուած ուշադրութեամբ հետևում են նորա ընթացքին և բսպասում էլքին. Վիլհելմ Բ. կայսրուհու հետ եկեր է արդէն, ինչպէս հետագրերը հաղորդում են, Կ. Պոլսից և պէտք է հոկտ. 3-ին Պաղեստինի Հայիֆա նաւահանգիստը հասած լինի. Վիեննայում նա տեսակցեցաւ Իտալիոյ Հումբերտ թագաւորի հետ և խիստ փառաւոր ընդունելութիւն գրտաւ Կ. Պոլսում սուլթանի կողմից։ Օգոստոսիս հիւրին ընդունելու համար փողոց մեծ պատրաստութիւն էր տեսնուում այստեղ, մինչև իսկ մի նոր շքեղ պալատ շինուեցաւ և արևելեան բոլոր պերճութեամբ զարդարուեցաւ. ոչինչ չէր խնայած ապացուցանելու համար, որ Ցաճկաստանը գնահատում է հզօր կայսեր այցելութեան մեծ արժէքը իր համար, իրրև երախտիք նորա բարեկամութեան։ Նախապէս որոշուած ծրագրի համաձայն Վիլհելմ

Ե. պէտք է սկսէ իւր ուխտագնացութիւնը Հոկ. 14-ին Հայիֆայից դէպի Խաֆֆա, ցամաքի ճանապարհով, գիշերը հանգստանալով հին Կեսարիոյ աւերակների մօտ՝ ձովի ափին գրած վրաններում։ 16-ին պէտք է գնայ Խաֆֆայից, ուր նորան դիմաւորելու կգան նահանգապետն ու լատինաց պատրիարքը. 17-ին կմտնէ Երուսաղէմ և կայցելէ Ս. Գերեզմանն ու ս. տեղերը։ 18-ին Բեթղեհէմ կերթայ, ուր կգտնուի առաւօտեան ժամասացութեան միջոցին բողոքականաց եկեղեցում և նորա ներկայութեամբ կօրհնուի Երուսաղէմի Եպիսկոպոսական ընկերութեան կառուցած նոր որբանոցը հայ որբերի համար։ 19-ին նա նորից կգնի բողոքական գերմանացիների նորաշէն ս. Փրկիչ եկեղեցւոյ օրհնութեան, որ նորա ուխտագնացութեան գլխաւոր կէտն է, և նոյն օրը Յորդանանի ափը կերթայ։ Այստեղ Երիքովի պարիսպների մօտ վրաններ պէտք է ձգուած լինին և այստեղից 20-ին պէտք է Մեռեալ ձովը, ս. Մկրտութեան տեղը և այլ սրբավայրեր տեսնելու եղնէ, 21-ին Երուսաղէմ վերադառնալով 3 օր կնուիրէ ս. քաղաքի բաղմաթիւ յիշատակարանները դիտելու և 24-ին կվերադառնայ Խաֆֆա, իսկ այնտեղից, եղանակին նայած, ձովով կամ ցամաքով դէպի Հայիֆա։ Մինչև 29-ը կայսրը կճանապարհորդէ շրջակայքում և կայցելէ Նազարէթ, Թափոր ևլն., ապա ձովով Բէյրութ կերթայ, կլինի Դամասկոսում, Բալաբէկում (Հին Հելիոպոլիսը, որտեղ գտնուում են Բահալի մեհեանի աւերակներ) և 3-ին կրկին Բէյրութից նաւ կնստէ վերադառնալու համար։

Վիլհելմ Բ-ի ճանապարհորդութեան մեծ նշանակութիւն են տալիս նաև քաղաքական տեսակէտից՝ ենթադրում են, որ բացի գերմանական գաղթականութիւնների և առևտրական ձեռնարկութիւնների համար զանազան արտօնութիւններ ձեռք բերելը, նա պարգև կստանայ սուլթանից Հայիֆա նաւահանգիստը, որ թէպէտ այժմ մի աննշան տեղ է միայն, բայց թէ ձովի և թէ ցամաքի կողմից ամենաբարեյաջող պայմանների մէջ գտնուելով՝ կարող է Միջերկրականի ամենակարևոր նաւահանգիստներից մէկը դառնալ և Գերմանիոյ արտաքին քաղաքականութեան և վաճառականութեան համար առանձին դեր խաղալ. սակայն աւելի ուշադրութեան արժանի է եկեղեցական տեսակէտը։ Խնդիրն այն է, որ մինչև այժմ արևելքի քրիստոնեաների հովանաւորողը Համարուում էր Ֆրանսիան. երբ Վիլհելմ կայսեր ճանապարհորդութեան լուրը տարածուեցաւ՝ Ֆրանսիայի բարեկամներն սկսեցին երկիւղ կրել, մի գուցէ գորա հետևանքը կլինի Գերմանիայի ազդեցութեան զօրանալն արևելքում և գերմ. կաթոլիկներին իւր հովանու ներքոյ առնելը։ Վատիկանում այս խնդիրը մեծ յուզում պատճառեց. պապը Լանժէնիէ կարդինալին ուղղած մի գրութեամբ որոշ կերպով յայտնեց, որ ճանաչում է Ֆրանսիայի դարերէ ի վեր նուիրագործուած իրաւունքը՝ հովանաւորելու արևելքում բոլոր կաթոլիկներին, մերժեց՝ ի պատիւ Ֆրանսիայի, իւր մօտ տաճկական առանձին ներկայացուցիչ ունենալու առաջարկը, պատուիրեց արևելքի բոլոր հոգևորականներին հանդիսով կատարել յուլիսի 14-ի ֆրանսիական ազգային տօնը և Բնականաբար պապի այսպիսի վերաբերումը չափազանց դրդռեց Գերմ. կառավարութեան զայրոյթը, որ և իւր ներկայացուցչի միջոցաւ շատ խիստ զգուշարութիւններ արաւ Վատիկանում, և ոչ առանց հետևանքի։ Պրոպագանդայի դեկավար կարդինալ Լեդոխովսկու առաջնորդութեամբ, որ ջերմ պաշտպան է եղած եղել Գերմ. կաթոլիկների դէմ, որոնք Գերմանիայի և Աւստրիայի հետ յարաբերութիւնը սառցնելուց կարող էին յարաջ գալ և կարգինալ Փամպոլլան, պապի ամենակարող առանձնապիրը, որ հակառակ կուսակցութեան պարագլուխն է և Ֆրանսիական շահերի եռանդուն պաշտպանը՝ ինչպէս վերջին տեղեկութիւններից երևում է, ստիպուած է եղել տեղի տալ և գերմանական ներկայացուցչին իւր մօտ կանչելով այնպիսի պիջումներ և խոստումներ անել, որ Գերմանիայի հովանաւորութիւնը Պաղեստինում իւր հպատակ կաթոլիկների վերայ տարածելու բոլոր արգելքները վերացուած են համարում։ Այս հաշտութեան յայտարար նշանը պէտք է լինի գերմանական մի նոր ներկայացուցիչ նշանակելը վատիկանում։ Իսկ հետևանքն այն կլինի անշուշտ, որ Ֆրանսիական ազդեցութիւնն արևելքում խիստ զգալի հարուած կկրէ ի նպաստ գերմանականին։

Սակայն այսքան բաւական չէ. Վիլհելմ կայսեր ճանապարհորդութիւնը առանձին կարևորութիւն է ստանում, եթէ բողոքական եկեղեցւոյ տեսակէտով նայենք խնդրին։ Միսիի Պատգամաւոր կոչուած թերթն ասում է այս առթիւ. «Մինչև այժմ այս կողմերում ռուսական հաւատը անգլիական հաւատ, Լիբանանում ամերիկական հաւատ էր համարուում։ Այժմ յայտնի կլինի, որ ուրիշ մեծ ազգեր ևս այս հաւատն ունին, որ այս հաւատն ունեցողները չէնց նոքա են, որոնք քաղաքակրթութեան և պետութիւնների գլուխ են կանգնած ... և մօտ երկու հարիւր միլիոն հետևողներ հաշուող բողոքական շարժումն այնպիսի աշխարհատարած հոգևոր ոյժ է, որի հնդիմակութիւնը կամայ ակամայ ճանաչել պէտք է։ Ինքը կայսրն առանձին հոգ է տարել այդ մասին, որ բողոքական եկեղեցին ըստ կարելւոյն աչքի ընկնող կերպով հանդէս գայ իւր ուխտագնացութեան միջոցին Պաղեստինում և ինքը ներկայանայ իբրև նորա գլուխ և պաշտպան։ Այդ նպատակաւ ճանա-

պարհորդութեան մասնակցելու հրաւիրուած են ոչ միայն Գերմանիայի, այլ և Զուիցերիայի, Հոլլանդիայի, Շվեդիայի, Նորվեգիայի և Դանիայի բողոքական եկեղեցեաց ներկայացուցիչները. միայն Վիեննայի եկեղ. բարձր խորհուրդը մերժել է իւր ներկայացուցիչներն ուղարկել, չնայելով որ աւստրիական կառավարութիւնը թոյլ էր տուել այդ. սակայն Ուենգարիայի և Զիբենբուրգիայի բողոքական եկեղեցիները իրենց կողմից կուղարկեն. Միայն Գերմանիայի գանազան մասերից մօտ 130 հոգի բարձր կարգի հոգևորականներ մասնակցում են, որոնք կմեկնին Համբուրգից առանձին նաւով կմիանան ուրիշ տեղերից եկածների հետ Պաղեստինում միայն, և բոլորը միասին կմասնակցեն ս. Քրկչի եկեղեցւոյ օրհնութեան հանդիսին. Նաւային գնացքն ընկերութիւններ մեծամեծ զիրութիւններ են ստեղծել զբոսի արևելք ճանապարհորդների համար, այնպէս որ պէտք է ենթադրել, թէ կայսեր Երուսաղէմում եղած միջոցին Եւրոպայի ուխտագնացների և ճանապարհորդների ահագին բազմութիւն ներկայ կգտնուի և նորա մուտքը ս. Երկիր չտեսնուած շուքով և փառաւորութեամբ տեղի կունենայ: Christliche Welt թերթը յառաջ է բերում այս առթիւ այն պատմական տեղեկութիւնները, որոնք մնացել են Վիլհելմ կայսեր նախնեաց՝ Հոհենցոլլերն իշխանների գանազան ժամանակներում զբոսի Երուսաղէմ կատարած ուխտագնացութեանց մասին (ամենահինը եղել է 1320 թ.-ին, իսկ վերջիններն մեր գարում՝ Վիլհելմ Ա. կայսեր եղբօր՝ Ալբրեխտ իշխանի ճանապարհորդութիւնը 1842—1843 թ.-ին և Վիլհելմ Ա.-ի թագաժառանգ ներկայ կայսեր հօր Ֆրիդրիխ Վիլհելմինը 1869 թ.-ին)—և համեմատում է միջին դարերում այդ իշխանների յանձն առած ամէն ժողովրդութիւններն ու ստորագրութիւնները (նոքա ստիպուած էին ձգտել շրջել և մուրք աստիճանաւորների գանազան քմահաճոյքները կատարել) այժմեան փառքի հետ.—Սակայն այս ամէնից յետոյ՝ թէ այս թերթը և թէ ուրիշ անաչառ գերմանական և օտար, մանաւանդ անգլիական, թերթեր չեն կարող մոռանալ, որ գօրեղ քրիստոնեայ կայսրը եկեղեցական շուքով՝ իրեն սիրելի և ցանկալի բարեկամ՝ Տաճկաստան է մտնում այն օրերում, երբ ամէնքի մտքում շատ թարմ են գեռ և կարծես նորոգուել են սպառնում խիստ տխուր յիշողութիւններ.

Վերջին ամիսներում կրկին մի շարք մեծ ժողովներ և հանդէսներ ունեցաւ Գերմանիոյ բողոքական եկեղեցին, որոնց մէջ աչքի է ընկնում մասնաւոր Ներքին միսիոնի հաստատութեան տօնըև նորա կենտրոն, յանձնախումբի նիստամեայ յորելեանը. Այս հանդէսը կատարուեցաւ բողոքականութեան որպէս Վիտտենբէրգ փոքրիկ քաղաքում սեպտ. 20—21-ին, որին ներկայ էր մեծ բազմութիւն բարձր կարգի եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչների նոցա թուում և մի քանի նախարարներ և պետութեան առաջնակարգ պաշտօնեաներ. Հանդիսին կից Ներքին միսիոնի հետ սերտ առընչութիւն ունեցող «Ազատ եկեղ. համայնական խորհուրդն» ևս գումարուել էր, ուր ճառերի և վիճաբանութիւնների հետաքրքրութեան գլխաւոր առարկան էր այդպէս կոչուած «աւետարանացման» շարժումը, մի նոր երևոյթ, որ իւր վերայ է գրաւում բողոքական եկեղեցւոյ լուրջ ուշադրութիւնը և եկ. թերթերի ու ժողովների քննադատութեան նիւթ է յաճախ. Այս շարժման նպատակն է աւետարանական ոգի արձարձել ժողովրդի առաւել սուր գաստակարգի մէջ և նման նպատակ ունեցող ընկերութիւններից նորանով է տարբերուում, որ ձգտումն է ցոյց տալիս եկեղեցուց անկախ կազմակերպութիւն ստանալ և ամրոխի վերայ ազդելու համար նոյնպիսի միջոցներ գործ դնել, ինչպէս օր. Փրկութեան Բանակը. Ծողովականների ընդհանուր կարծիքն այն կոչն էր ուղղուում, որ աշխատեն այդ աւետարանիչներին կապել եկեղեցւոյ հետ և փողոցային ցոյցերը խափանել:—Ինչ վերաբերում է բուն Ներքին միսիոնին՝ կրկին մի անգամ զգալի կերպով երևան եկաւ այստեղ, թէ այդ մարդասիրական մեծ ձեռնարկութիւնը որչափ գործ է կատարել և ընդարձակութիւն ստացել այս յիսուն տարուայ ընթացքում, բայց և որչափ պահանջ կայ յատկապէս սոյն այս մեր ժամանակ նորա հարեւրապատիկ եռանդուն գործունէութեան: Հանգիսաւոր ճառերից մէկում Շտէօկկեր աւստրիական կայսրուհու եղեռնական սպանումը մատնանիշ անելով՝ յիշեցնում էր, թէ նման մի գէպք էր տեղի ունեցել և նման պայմաններ էին ճնշում, երբ հանգէս եկաւ Վիխերն և Ներքին միսիոնի հիմք գրեց. այս և նման գէպքերը պարզ նշաններ են, թէ բարքերի ինչպիսի սոսկալի անկումն է տիրում հասարակութեան մէջ և ինչպիսի վնասակար տարրեր է մնուցանում նա իւր գրկում, որոնց գէմ աւետարանը ձեռին միայն մարտնել կարելի է: Հանգէսը Տարկաւ իւր վայելուչ ընթացքն ունեցաւ և եռանդ ու ոգևորութիւն արծարծելու նոր առիթ եղաւ բազմաթիւ հիւրերի և հազարաւոր հանդիսականների մէջ. Կենտրոնական յանձնախումբի նախագահ ուսուցչապետ Վայսին այս առթիւ կայսրը նոր շքանշան է շնորհել:

—Պաղատ հանդիսաւորութեամբ տեղի ունեցաւ Գուստավ—Ադոլֆ ընկերութեան 51-րդ ընդհանուր ժողովը սեպտ. 13—15-ին Ուլմ քաղաքում. Այն հանգամանքը, որ Ուլմ քաղաքը բողոքականութեան պատմութեան հետ սերտ կերպով կապուած է և նորա մայրը տաճարը իւր Եւրոպայի ամենաբարձր, հրաշալի զանգակատունով ամենամեծ և ամենահոյակապ բո-

զոքական տաճարն է և գոթական ամենափառահեղ շէնքերից մէկը՝ որ Վիւրտեմբէրգի ժողովուրդի մէջ առանձնապէս կենդանի է կրօնական եռանդը, և այն երկրներից մէկն է սա, ուր աւելի մրցումն կայ կաթոլիկութեան դէմ՝ մեծապէս նպաստում էր ժողովը բազմամարդ և բազմակողմանի գարձնելու, գրեթէ սովորականից ոչ մի տարբերութիւն չառաջ բերելու։ Մայր տաճարում կատարուած հանդէսների տատն հալարից՝ աւելի ազօթողներ էին մասնակցում։—Ընկերութեան տեղեկագրի տուած հաշուից երևում է, որ վերջին տարին մի շարք նոր մասնաճիւղեր են աւելացել, այնպէս որ նոցա թիւը 1862-ից 1875-ի է բարձրացել։ կանոնց ընկերութիւնների թիւը բարձրացել է 549-ից 563-ի։ Ընդհանուր եկամուտ ունեցել է ընկերութիւնը մօտ մի միլիոն հարիւր չիսուն հազար րուբլի՝ չիսուն հազարով աւելի քան նախընթաց տարին։ Ծախք աւելի քան մի հարիւր չիսուն հազար րուբ. 48 մեծ և փոքր եկեղեցիների շինութիւնը վերջացել է և 28 նորերինը սկսուել։ դորա հետ մէկ տեղ կատուցուել են մի շարք ուրիշ եկեղեցական, դպրոցական և բարեգործական շէնքեր։—Ս. յայտնում, բողոքականութեան պաշտպան Ճուէդիոյ Գուստաւ—Ադոլֆ թագաւորի անուան նեռքոյ բոլոր այն երկրներում, ուր բողոքականներ են ապրում և շփման մէջ են կաթոլիկների հետ՝ մի ընդարձակ բազմաճիւղ գործ է կազմակերպած, որ, ինչքան և համեստ չափով, պաշտպան է կանգնում բողոքականութեան շահերին և յաճախ յաջողութեամբ նեռքին կռիւ վարում կաթոլիկութեան դէմ։

«Աւետարանական միութիւնը», որ նման նպատակ ունի, իւր 11-րդ ընդհանուր ժողովն ունեցաւ հոկտ. 3—6-ին Մագդեբուրգ քաղաքում և կրկին առանձնապէս նպաստաւոր պայմանների մէջ՝ յաջող ընթացքով։

— Մանաւոր ուշադրութեան արժանի է նա և Վեյլացնորների հովիւներին խորհուրդի գումարումը սեպտ. 13 14-ին։ Պէտք է ինկատի ունենալ, որ վաղուց վէճ կայ բժիշկների և պաստորների մէջ, թէ արդեօք մարմնական բժշկութիւնը, թէ հոգևոր միխիթարութիւնը գլխաւոր տեղ պէտք է բռնէ խեղլացնորների խնամատարութեան գործում։ Խորհուրդի վերջին գումարումը ապացուցեց, որ վէճը վերանալու վերայ է և երկու կողմից այն համոզման են գալիս հետզհետէ, թէ հոգևոր և մարմնաւոր բժշկութիւնն հաւասարաչափ կարևոր են այս տեղ, և բժիշկ ու քահանայ ձեռք ձեռքի տուած պիտ գործեն։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ։

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ՄԻ ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ։

Ինձպէս յայտնի է, վեհափառ Հայրապետի հրամանով և յատուկ հսկողութեամբ նորոգուած է ս. Հռիփսիմէի տաճարը։ Արտաքին նորոգութիւնը պատրաստ է, և աքանչելի արուեստութիւն է, անուշ նայողի վերայ։ Այժմ սկսուած է ներքին վերանորոգութիւնը, որ մեզ համար միանգամայն անսպասելի նորութիւններ ևս երևան բերից։ Մի քանի շաբաթ առաջ արդէն մի արձանագրութիւն էր գտուած, նորերս լսեցինք և երկրորդ արձանագրութեան բացման մասին։ Չ. Կարապետ վարդապետի հետ Հռիփսիմէ գնացինք այդ արձանագրութիւնները գրի առնելու. մրքան մեծ եղաւ մեր զարմանքը և ուրախութիւնը, երբ տեսանք, որ արձանագրութիւններից մէկը Կոմիտաս կաթուղիկոսինն է, ս. Հռիփսիմէի ներկայ տաճարի շինողին։

Կոմիտասի արձանագրութիւնը քանդակուած է մի տունձին քարի վերայ, որ հագցրած է աւազ սեղանի հետ արևելեան որմի մէջ՝ ներսի կողմից, 67 մետաչափ գուրս ընկած որմից, արևելեան լուսամուտի ճակատին։ Արձանագրութիւնն անեղծ է, շատ քիչ տեղեր միայն ծեփը քակելիս վարպետների անզգուշութեամբ փոքր ինչ վնասուած են, երկարութիւնը 35 սանտ. իսկ լայնութիւնը 1 ½ մետր։

Վրա ած յիշեա զկոմիտասս Հայոց կաթուղիկոս շին աւազ սրբոյ Հռիփսիմեի

Կոմիտասի անունով մի ուրիշ արձանագրութիւն յայտնի էր առաջ։ Փիլիպպոս կաթուղիկոսի օրով շինուած փոքրիկ գանգակատունը այցելուների աչքից ծածկում է, այդ արձանագրութիւնը, ինչպէս և նորա տորև ու արևմտեան պրան վերև գտնուած լուսամուտի կամարի գեղեցիկ զարդերը, որոնք արժանի են առանձին ուշադրութեան։ Բազմավաստակ Բաղիշանն, եպիսկոպոս Շահխաթու-

նեան * գրի է առել այդ արձանագրութիւնը, որից և Ալիշան։** Բայց Շահխաթունեանն, ինչպէս և Ալիշան, սխալ են ընդօրինակել։

Արձանագրութեան իսկական բառերն են՝

Ես կոմիտաս եկեղեցապան սրբոյ Հռիփսիմեի կոչեցայ յաթոռ սրբոյն գրիգորի շինեցի պատճառ սրբոց վկայիցս քի

Շահխաթունեանն և Ալիշան սխալ ընթերցուածներ ունին. եկեղեցապահ փոխանակ եկեղեցապան, կարգեցայ փոխանակ կոչեցայ, եւ շինեցի փոխանակ շինեցի։ Կաչեցայ բառի սխալ ըմբերցումը յառաջ է եկել այն հանգամանքից, որ արձանագրութեան այդ մասը կոտրուած է, բայց այնպէս պարզ նկատելի է, որ վանկը և չ առաջ ծայրը, որ ամենայն հաւանականութեամբ կարելի է ասել, թէ «կոչեցայ» պէտք է լինի և ոչ «կարգեցայ»։

Արձանագրութեան երկարութիւնն է 2՛02 մետր, իսկ լայնութիւնը 60 սանտ.

Երկու արձանագրութիւնները ևս կհանուին լուսանկարով և կհրատարակուին «Բազմաւէպ»-ի էջերում։

Այս արձանագրութիւնները մեզ համար կարևոր նշանակութիւն ունին ոչ միայն իրենց բովանդակութեամբ, այլ և հնագրութեան տեսակէտով։ Հին արձանագրութիւններ ընդհանրապէս քիչ ունինք, իսկ հին ձեռագիրներ՝ իրրև Թ. դարից առաջ գրութիւն առաւել ևս քիչ։ Տիկրի արձանագրութիւնը,*** եթէ իրաւ Յովհան Մանդակունու ժամանակի գործ է, ամենահինն է. երկրորդ պէտք է համարուին Կոմիտասի այս երկու արձանագրութիւնները, հաշուելով առաջնաքարերի մանր մունր արձանագրութիւնները, որոնք առաւելութեան կարօտ են (համա. Հ. Տաշեանի «Ակնարկ մը հայ հնագիտութեան վրայ», Վիեննա 1898, եր 133—137)։ Ուրիշ կողմից և այս արձանագրութիւնները կարևոր նշանակութիւն ունին. նոցանից մէկը արևելեան օրմի վերայ է, իսկ միւսը արևմտեան։ Այսպիսով մենք գրական փաստեր ևս ունինք, թէ Հռիփսիմէի տաճարը Հայոց ձարտարապետութեան հնագոյն կոթողներից մէկն է։

Բացի Կոմիտասի նորագիւտ արձանագրութիւնից, ինչպէս յիշեցինք մի երկրորդ արձանագրութիւն ևս բացուած է աւագ խորանի ձախակողմեան օրմի վերայ՝ աստիճաններից բարձր։

Ի Թիֆլիս 21/05.

Ի պատարագութեան իշխանաց իշխանին մեծին շահընշահի և ապրուպին ևս շիրին խաթունա ու պայազուն խաթունա ու թաւդիսա ու թալիս ու խոճիս ու գայիրս թոպաք զհռիփսիմեացս զբարեկին շարիաան եւ զշահնաին բարեկի հակն արդ ի մերոց կամ յառաջայ ի մեծաց կամ ի փոքունց խափանել ջանա ՅԺՐ հայրապետացն նզոված է կայենի եւ յուդայի մանակից է եւ յիր հաւատէն ապիզար է, յամէն յաղգէ նզաթ է եւ աբհնել հոգ գնայ մի ծածկեսցէ կատարիչքն աբհնին յայ վարհամ գրիչ («Վարհ և «համ» վանգերը բաժանուած են մի խաչքարով)։

Այս արձանագրութեան մէջ անհասկանալի և դժուարընթեռնելի բառեր կան. բայց ճիշդ ընթերցուածն ենք տալիս, կարծեմ, երկրից և երից Հ. Կարապետի հետ վերաուսումնասիրելուց յետոյ։

Գարեգին վարդ. Յովսէփեան.

ՄԱՏՅԱՆ ԵՓԵՔ.

Ինչպէս որոշուած էր, կիրակի, սեպտ. 20-ին Նորին սրբ. Օծութիւն Վեհափառ Հայրապետը վայելուչ հանդիսով եպիսկոպոս ձեռնադրեց Բարձր. Սերովբէ և Գաբրիել ծ. վարդապետներին Հանդիսի միջոցին կարդացուեցան Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարքի կրկին գրութիւնները, որոնցով յայտնում էր, թէ Հ. Սերովբէ ընտրուած է Զմիւռնիոյ առեղական և Հ. Գաբրիել Կ. Պոլսոյ ընդհանուր կրօնական

* Ստեփագրութիւն Կարապետի Էջմիածնի եւ հինգ գաւառացն Այրարատայ. I. 1842 թ. եր. 264։

** Այրարատ եր. 238։

*** Ալիշանի Շիրակ եր. 132։

և քաղաքական խառն ժողովի կողմից յեպիսկոպոսութիւն, և խնդրում է Սբբ. Հայրապետին արժանացնել նոցա առաքելական շնորհաց։—Բաւական հանդիսականներ Երևանից և այլ տեղերից ներկայ էին այս մեծաշուք հանդիսին։

Յաջորդ կիրակի, սեպտ. 27-ին կատարուեցաւ Վեհափառ սրբեցեալ Հայրապետի Օծման հինգերորդ տարեդարձը։ Շաբաթ օրը նախատօնակին Տօրին Սրբութիւն թափորով Մայր Եկեղեցի իջաւ և կիրակի ներկայ եղաւ ս. Պատարագին, որից յետոյ Հայրապետական մողթանք կատարուեցաւ և Մխիթարեանն ու Շեմարանի տանները մտեցան ի տաճկոյր ս. աջոյ Տիրոջ Օծեալի։ Տօրին Վեհափառութիւնը պատարագից յետոյ ընդունեց միայն Շեմարանի ուսուցչական խմբի, մի քանի պաշտօնեաների և պատուաւոր հիւրերի շնորհաւորութիւնները։ Պատարագիչն էր այդ օր Տնօրինական Գեր. Տեսչ Եպիսկոպոս Արսլանեան, որի ձախքով և հոգացուած էր Մխիթարեան հանդիսաւոր հայկերոյթը։ Ճաշին ներկայ էր Տօրին Վեհափառութիւնը և Շեմարանի տաներից մէկի ուսերձը լսելուց յետոյ, եղաւ՝ յայտնեց թէ որչափ գժուարանում է, իր պարզ սովորութիւնների հակառակ երկար սեղան նստել, իր հայրապետական օրհնութիւնը բաշխեց սեղանակիցներին և յորդորելով ապօթել Իր համար, որպէս զի միջոց ունենայ յիշատակաց արժանի մի հոգևոր ներքին շինք կատարելու Իր Հօտի համար՝ մեկնեց։ Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս առաջարկեց անմիջապէս Տօրին Սրբութեան կենացը, որ և ընդունուեցաւ ոգևորեալ կեցցէներով ու երգով։ Ապա Արժ. Սիոն վարդապետ բարեմաղթութիւններ արաւ և կենաց բաժակ առաջարկեց պատարագիչ Սրբազանի համար, որ պերճախօս լեզուով իւր շնորհակալութիւնը յայտնեց Մայր Աթոռում գտած սիրալիր ընդունելութեան համար՝ իւր յօժարամտութիւնն ու սրտագին յանկութիւնը Ամենայն Հայոց Հայրապետի միջոցաւ ընդունած շնորհն ի շինութիւն ս. եկեղեցւոյ գործ դնել բոլոր կեանքում մինչև այժմ թերի թողածն ու ղացածը լրացնելու աշխատել ըստ կարելւոյն։ Ապա, ինչպէս և ձգտել է միշտ լինել՝ նորա հաւատարիմ սպասաւորը, և յարելով, թէ ինչպէս հոգևորական դասի, յատկապէս ս. Էջմիածնի Միաբանութեան հաւատարիմ գործակցութիւնը վեհափառ Հայրապետին անհրաժեշտ է, իր բազմակարօտ հօտի հոգևոր պէտքերը լցուցանելու համար՝ առաջարկեց Միաբանութեան կենացը։—Հաջակերոյթին հրաւիրուած էր նաև Շեմարանի ուսուցչական խումբը։ Նոյն օրը երեկոյեան վանքի բակում բաւական ձոխ լուսավառութիւն կար և երգում էր Շեմարանի երգչախումբն ի զբօսանս հասարակութեան։

Երկու նորընծայ Սրբազանները մեկնեցին Մայր Աթոռից Ցէլէճեկեան քահանայի ուղեկցութեամբ երեքշաբթի սեպտ. 29-ին։ Ողջերթ մաղթելու համար Ղազարապատի դրան մօտ ժողովուած էին միաբանակիցներից շատերը, իսկ մինչև Երևան ընկերացաւ Թեմ. Փոխանորդ Գեր. Ներսէս արքեպիսկոպոս։

Սեպտ. 21-ին ս. Էջմիածին եկաւ Եգիպտոսի Առաջն. Տեղապահ Բարձր. Յակոբ Աշոտ Ծ. վարդապետ Փափազեան՝ յանձնարարութիւն ունենալով ս. միւռոն տանելու իր հեռաւոր վիճակի համար։

Հոկտ. 1-ին հասաւ Մայր Աթոռ Բարձր. Գէորգ Ծ. վարդ. Ութիճեան, ինչ ինչ թիւրիմացութիւնների պատճառաւ ստիպուած լինելով նախ Թաւրիզ գնալ և վերադառնալ։ Հայր Գէորգ գալիս է Փարիզից վեհափառ Հայրապետի յատուկ յանկութեամբ՝ եպիսկոպոսական ասպիճան ստանալով հովիւ կարգուելու Եւրոպիոյ զանազան կողմերը ցրուած հայերի համար և եթէ կարելի է, մի առաջնորդական գաւառների ներքոյ խմբելու նոցա։

Հոկտ. 15-ին ժամանեց Մայր Աթոռ Գերաց. Փոխանորդ Արժ. Յովհաննէս վարդ. Շիրակունեցոց կոչուած է հեռագրով՝ վեհափառ Հայրապետի հրամանաւ. Հոկտ. 19-ին՝ վերադարձաւ Մայր Աթոռ. ժամանակաւորապէս Մատրասայում քարոզիչ կարգուած և Հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ յետ կանչուած Արժ. Եփրեմ վարդապետ. և Հոկտ. 17-ին՝ Տաթևի փոխանորդ Արժ. Գրիգորիս վարդապետ։

Հոկտ. 21-ին Մայր Ամուռ հասաւ Արմաշի Պատրիարքական Փոխ-վանահայր և Տիտուլ Բարձր Նիշէ Ծ. վարդ. Դուրեան՝ որ շատ պատմ է եպիսկոպոսական ասպարէզի ասոնց լով իր պաշտօնատեղին վերադառնալ։

Սեպտ. 29-ին Մայր Ամուռ հիւր հկաւ Փրանսիայի հռչակաւոր հնագէտ Բարան Դը-Բայ Փարիզի «Ազգագրական ընկերութեան» անդամ և քարտուղար Պ. Կրաֆթի ընկերակցութեամբ։ Կաթողիկոսական Տ. Կաուդարճեան ու Երևանի Պ. Նահանգապետեան ասոնց յանձնարարուելնուն ասպրելու ասոնք կարգել մեծաւոն հիւրին ասոնց նորգելու համար՝ որ բան արժանի էին հիւրասիրուելու նաև Մ. Ամուռայ, ներկայացուցիչ Վ.Ի. Հայրապետին դիտմամբ և ձնմարանայ պահուած հնութիւններ, նախաճաշէն վերադառնալ և մինչև սրտատին շնորհակալութիւններով։

Անձնական գործերով Տփխիս կատարած ճանապարհորդութենէն վերադարձել է Մայր Ամուռայս միաբան Արժ. Եղիա վարդապետ և պիտի Նոյեմբ ասկսուելնէ՝ Բարիզն Նիշէ սրիգան։

ՁԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱՔՈՈՅ.

Սեպտ. 28-ին արժանավայել հանդիսով կատարուեցաւ Ճեմարանի բացման ԽՈ. տարեդարձ։ Պատարագիչ էր նորընծայ Տ. Գարբիել եպիսկոպոս Պատարագիչ չիտոյ Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ հոգեհանգիստ կատարուեցաւ երջանկայիշատակ Հիմնադրի՝ Տ. Տ. Գէորգ Դ. կաթողիկոսի գերեզմանի վերայ։ Նոյնն Ս. Օծութիւնը նորիսկ էր նաև և իր օրհնութեամբ բացաւ կէս ժամ չիտոյ Ճեմարանի հիւս. կողմն ամպ ու նեցաւ, հաշուեսուութեան հանդէս։ Աչքատես տեսուչ Պ. Կ Կոստանեան կարդաց անցեալ ուսումն. տարուայ հանգամանք տեղեկագիրը, որ յատուկ է, բերուած Արարատի նորիսկ հատորոմ՝ հաստատակութեան ուշադրութիւնը գրաւելով յատկապէս այն կէտերի վերայ՝ որ Ճեմարանի հանար ցանկալի էր հետաքրքիր կէնսագրենց կարուած և հոգեոր վերելքութիւններից զուրկ՝ թեմերից ան ելի անձինք ունենալ քան այժմ՝ որ Ճեմարանական պաշտօնեաներին ցանկալի էր իրենց առացած կրթութեան հանգամանական պաշտօնների՝ հոգեորական կոչման մէջ տեսնել։ որ Մայր Ամուռի ծախքը թեթևացնելու և քան կարելի ոյն շատ թուով ապագայ մանուկների կրթութեան միջոց ստեղծելու համար ցանկալի էր Ճեմարանի բարերարների ցանկն ընդարձակել և որ վերջապէս այս բոլորի համար պահանջուում է, հատարակութեան և նորա հոգեորական և աշխարհական ներկայացուցիչների ջերմեռանդ ձեռնտուութիւնը։ Ապա Ճեմարանի Ուսումն. Խորհուրդի մի քանի տարի հատուածած որոշման համաձայն՝ որով տարեդարձի օրը ուսուցիչներից մէկը պատ է, խօսի, իր մասնագիտութեան վերաբերեալ մի ուսումնական նիւթի վերայ՝ ամրան նաև Հ. Գաբրիէլ վարդապետ նպատակ ունենալով Խորովիկ Թարգմանչի ժամանակը և նորա գրուածների արժէքը պարզել։ բայց տեղատուած եղան չափազանց կրճատել և ամփոփել իր բանախօսութիւնը՝ Նորին Վեհափառութեան չձանձրացնելու համար։ Վեհափառ Հայրապետի յատուկ ցանկութեամբ այդ ուսումնասիրութիւնը լոյս կտանի, Արարատի էջերում։ Հանդիսքը փակեց Նորին Վեհափառութիւնը՝ օրհնելով Հիմնադրի յիշատակը, օրհնելով և իր հայրական ամբողջ սրտով ուսուցիչներին և աշակերտներին. ապա բարեհաճեց հանդիսատեսը փոքր ինչ ուսումնասիրել Ճեմարանում։ Սուրճ վայելելու հրաւիրուեցան նաև ներկայ միաբան հայրերը։

Մաշէ միջոցին որ հոգացուած էր պատարագիչ Գեր. Գաբրիէլ եպիսկոպոսի ծախքով՝ Տ. Կարապետ վարդապետ միաբանութեան կողմից բարեմաղթութիւններ արաւ և շնորհաւորեց Սրբազանին՝ օրուայ առնի հետ կապելով նորա առացած բարձր ատիճանի խորհուրդը։ Սրբազանը զգացուն խօսքերով իր շնորհակալութիւնը յայտնեց Մխիթարեան միաբանութեան և իր երախտագիտութեան հատատիքն ու հատատարմական զգացմունքը ժառանգելով առ առաջ պահպանել Վեհափառ Հայրապետի երկար օրեր բարեմաղթից Նորին Սրբութեան անսասան հատատութիւն Մայր Ամուռայս անսպիտակ ամուսնի և բարգաւ ամուսնի

նորա ճեմարանին։ Երեկոյեան ճեմարանի բակում՝ շքեղ լուսավառութիւնկարելիկխում՝ բոլոր ու փոքրիկ աշակերտների ժողով։ պարերգին ու պարերը դուրս ածում էին պրօֆեսոր տեղական հատարակութեան և ուխտաւորների մեծ բազմութեան։

Հոկտ. 10 ին Ս. Թարգմանչաց տօնի օրը ճեմարանի բոլոր աշակերտները պ. Տիգի և ուսուցիչների հետ կրկին մի անգամ ոտքով ուխտ գնացին Օշական Ս. Աստուածածնի վերին մանեին։ Պատարագիչ էր ճեմարանի ուսուցիչ Արժ. Գարեգին վարդապետ. պատարագից յետոյ եկեղեցւոյ մէջ խաչահանդէսի կատարութիւն, որի միջոցին Նորին Վեհափառութիւնը դիւրանալով Արժ. Կարբէն վարդապետ յիշեցրեց Ս. Աստուծոյ և նորա բազմախաղաղ ընկերակիցների մեծ երախտիքը և հրաւիրեց աշակերտներին ջանալ ամէն բանից աւելի երախտապէտ դառնալ իրենց վայելած հոգևոր բարիքների համար։ Ջ. դասատան աշակերտներից մեկը կարդաց. զրարար ուղերձ։ Եկեղեցւոց նշանակութիւնը և մասնաւորները բացատրեցին Պ. Տիգի նաև էր բերած մատաղը։ Ապա հայկերգով եղաւ վանքապատական ծառայութիւնը՝ Հ. Կարբէնի, դիւղի քահանաների և պատուաւոր մարդոց մասնակցութեամբ։ կենացներ առաջարկուեցան և ոգևորուած ճառախօսութիւններով կրկին և կրկին անգամ արձագանգուեցաւ անմոռանալի տօրերի յիշատակը։

ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ Գ. ՏԵՍՉԻ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ.

18$^{97}_{98}$ ուս. շրջանի ուսումն. եւ տնտես. վիճակի մասին.

18$^{97}_{98}$ ուս. շրջանում ճեմարանիս դիշերօթիկ սանների թիւն էր՝ մասնագիտական բաժնի լսարաններում 28 պրոցեսական բաժնի պատարաններում՝ 130, իսկ վարժոցում՝ 25, ընդ ամէնն 183. սոցանից 13 պահւում էին բարերարների նուիրատուութեամբ, վճարում էին թոշակ կամ նպաստ իսկ 161 պահւում էին Ս՝այր Աթոռի հաշուով։ Դիշերօթիկ սանների կամ կային նաև 33 երեմեակ, որոնցից 10 պրոցեսական բաժնի իսկ 23 վարժոցի աշակերտներ էին. երեմեակ ընդունուում են միմիայն վաղարշապատի բնիկներից կամ այնպիսիներից, որոնք ապրում են վաղարշապատում իրենց միքսուր ապրուստի մասին։ Նոա այսմ անցեալ շրջանի բոլոր աշակերտների թիւն էր 216, որոնք քաա թիւերի պատասխանում են այսպէս.

1.	Երևանու թեմից 63 դիշերօթիկ և 33 երեմեակ,	96.
2.	Տաճկաստանի Հայոց թեմերից . . .	48.
3.	Վրաստանի և Իմերէթի թեմից . . .	27.
4.	Ղրզախու թեմից	21.
5.	Բեսարաբիոյ և Ն. Նախիջևանի թեմից .	9.
6.	Պարսկաստանի թեմերից	7.
7.	Ջաւախու թեմից	6.
8.	Աստրախանի թեմից	2.
		216.

Անցեալ շրջանում դասերն սկսուեցան անապ. 9-ին և դադարեցան մայիսի 24-ին. ուսումն շարունակուեցաւ 195 օր՝ այդ ժամանակամիջոցում աւանդուել է 4686 դաս։ Տարուայ վերջում աշակերտների յառաջադիմութեան և խոսի փոփոխութեան պատկերն այս է.

	Ընդ. թիւ.	Դիշերօթիկ.	Երեմեակ.	Փոխադրեալ.	Մնացեալ.	Եղեալ.	Մեռեալ.	Հետս. պրօ. ուս.	Հետս. պրօ. կրկին	Հետս. վար. դաս.	Ընդ 1-ն տեսակէտ.
Գ. բաժ.	28	10	18	21	»	7	»	»	»	»	21
Պ. բաժ	20	15	5	20	»	»	»	»	»	»	20
	48	25	23	41	»	7	»	»	»	»	41
Գ. վ.	37	33	4	26	6	5	»	»	»	»	32
Բ.	23	20	3	17	3	3	»	»	»		20
Գ.	32	29	3	20	2	9	1	»	»	»	22
Ե.	24	24	»	19	5	»	»	»	»	»	24
Զ.	24	24	»	»	»	1	»	15	8	»	15
	140	130	10	82	16	18	1	15	8	»	113
Ա. Լ.	11	11	»	8	»	2	1				8
Բ. Լ.	12	12	»	12	»	»	»				12
Գ. Լ.	5	5	»	»	»			»	»	5	
	28	28	»	20	»			»	»	5	20
	216	183	33	143	16	27	2	15	8	5	174

Անցեալ ուս. տարուայ ընթացքում Շեմմարանիս մէջ իրենց անունով սաներ պահել են

1. Պ. Առաքել Ծատուրեանց 3 սան.
2. Աթամալեան Տիկ. Աննա 1 սան.
3. Իլմիրեան պ. Նիկողայոս 1 սան.
4. Գէորգ Լալայեանի յիշատակի համար 1 ս.
4. Մելիքեան Տիկ. Շողակաթ 1 սան.
6. Ժամհարեան պ. Յակակ 1 սան.

և 7. Մարգասիրական Ընկ. ի Բագու 1 սան. սոցանից զատ կան կատարեալ նպաստներ և միանուագ մշտական նուիրատուութիւններ, որոնց հիման վերայ Շեմմարանը պահում է սաներ այս բարերարների անունով.

1. Հանգուցեալ բժ. Գէորգ Տիգրանեանցի անունով 3 սան.
2. Հանգ. Թումայեան ամուսնոց անունով 1 սան.
3. Հանգ. Գէորգ Փրիդոնեանցի անունով 1 սան Կիէվի համալսարանում.
4. Հանգ. Յակոբ Ադամեանի և Գր. Թումայեանի անունով գարձեալ Կիէվի համալսարանում 3 սան.

բացի այս նուիրատուութիւններից Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցին տալիս է Շեմմարանին տարեկան 5000 ռուբլի եկեղեցական սաներ պահելու համար:

Ցանկալի է, որ այդպիսի բարերարների գովելի օրինակին հետեւէին կարող և ձեռնհաս ազգայինք և իրենց առատաձեռն տուրքերով ճոխացնէին Մայր Աթոռի սակաւաձեռն միջոցները Շեմմարանի պահպանութեան համար:

Շեմմարանիս ուսուցիչները, որոնց թիւն անցեալ տարի 13 էր, իրենց սահմանված պարտականութիւնը կատարեցին ամենայն եռանդով և ջանասիրութեամբ. բացակայ եղել են տարուայ մէջ 89 ժամ աւելորդ պարապել են բացականների փոխարէն 58 ժամ ուրեմն անպայման պարապ մնացած դասերի թիւն է 31, որից 17 հիւանդութեան, իսկ 14 այլ և այլ պատճառներով է: Մանկավարժական խորհուրդը գումարուեցաւ 15 անգամ: Դասատուութիւնից զատ ուսուցիչները կատարել են Շեմմարանում նաև այլ պարտականութիւններ. այսպէս՝ Հ. Կարապետ վարդապետը վարել է տնտեսի օգնականի պաշտօն, Հ. Գաբրիէլ վարդ. Յովհաննիսեան, պ. պ. Մանդինեան Ս., Կանայեան Ս., Յովհաննիսեան Յ., Տիգրանեան Պ., Աւագեան Յ. և Յարութիւնեան Ս. վարել են նաև գատարանական գատախարակի պաշտօն, բոլորն էլ անվարձ:

Անցեալ ուսումնական շրջանում տեղի ունեցան մի քանի դպրոցական ասներ և հանդէսներ ուսուցիչների և աշակերտների մասնակցութեամբ: Առաջին դպրոցական ասնին այն է Շեմմարանի տարեգարձի օրն, իր շնորհարեր այցելութեամբ բազմաւար կացոյց մեզ Վեհափառ Հայրապետն Ամենայն Հայոց, որ տարեգարձի հանդիսին ներկայ գտնուելով, բարեհաճեցաւ բաշխել գատախարակներին և սաներին իր Հայրական խրատներն և ս. օրհնութիւնը: Անցեալ շրջանում երկրորդ անգամ բարեհաճեցաւ Նորին Վեհափառութիւնը շնորհ բերել Շեմմարան ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի մտին ի վիրապն ասնի օրը և ասնկնդրութիւն շնորհել աշակերտական բանախօսութիւններին:

Անցեալ շրջանում հոկտ. 4-ին իր բարձը այցելութեամբ պատուեց Շեմմարանս և երկրիս Կառավարչապետ Նորին Պայծառափայլութիւն իշխան Գոլիցին, Երևանու Նահանգապետ Կոմս Տիկնհաուզենի և այլ հեռաւորների հետ միասին. Նորին պայծառափայլութիւնը Շեմմարանի հանդիսարանում, ուր խմբուած էին բոլոր աշակերտները, լսեց նոցա յանուն Օգոստափառ ամենողորմած Կայսեր երգած մաղթանքը, մատենադարանում այցելուաց յիշատակարանում գրեց իր անունը, դիտեց գասարաններն և ննջարանները և իր բարձր գոհունակութիւնը յայտնելուց յետոյ մեկնեցաւ:

Մատենադարանն անցեալ տարի յաճախուեցաւ Շեմմարանի ընթացաւարտ Սմբատ սարկաւագի հսկողութեանը. Վարչութեան յուշմամբ վերատեսուչութեան և յուշակագրութեան մատենադարանի բոլոր գրքերը, որոնց ընդհանուր գումարն է 11975. նոցանից հիմնական մատենադարանում կան 5335 գիրք, որոնցից 1526 հայերէն և 2596 ռուսերէն. աշակերտական մատենադարանում կան 1977 գիրք, որոնցից 1120 հայերէն և 744

ռուսերէն. այնտեղ են նաև բոլոր դասագրքերը, որոնց ընդհանուր գումարն է 4663. Անցեալ շրջանում Մատենադարանին նուէր ուղարկուել են մի քանի անձինք և հաստատութիւններ, որոնք են

1. Մայր Աթոռի դանձարանը (հանգուցեալ վիրաւորների թողած զրքերը).
2. Թիֆլիսի հրատարակչական ընկերութիւնը.
3. Թիֆլիսի Հայոց Կանխատարիայն.
4. Պ. Յովակիմ Զամալպաշեան.
5. Պ. Կարապետ Նիկան.
6. Իշխան Ս. Արամէլիք—Լազարեվ.
7. Գեր. Մինասեան արքեպիսկոպոս.
8. Գեր. Սարգիս արքեպիսկոպոս.
9. Արժ. Գրիգոր քահ. Մանգակունի.
10. Ճեմարանի ուսանողք և աշակերտք.

Ներկեցական երգեցութեան վերայ առանձին ուշադրութիւն դարձնելով Ճեմարանի վարչութիւնն անցեալ տարի երգեցողութեան ուսուցիչ Հ. Ղևոնդ վարդապետին օգնելու համար մի առանձին խմբապետ կարգեց Ճեմարանի ընթացասարտ Հայկ Յովհաննիսեանին, որ ամենայն օր հակում էր աշակերտների նախապատրաստութեան վերայ առօրեայ ժամասացութեանը վարժուելու համար:

Աշակերտների առողջապահութեան վերայ առանձնապէս հակում է Ճեմարանի բժիշկ պ. Կար. Տ. Յովսէփեան. անցեալ տարի աշակերտների մէջ երևցած տրախոմա անուններով աչքացաւն առաջն առնելու համար վարչութիւնը կարևոր դասից հիւանդներին հայրենիք ուղարկել, իսկ որոնց կարելի չէր, նոցա էլ Ճեմարանի հիւանդանոցում պահելու:

Աշակերտների առողջապահական կարևոր միջոցներից մէկը նոցա տասցած առօրեայ սնունդը լինելով, վարչութիւնը շարունակ հետամուտ էր սնդանատան վիճակը բարեփոխել տալու. Վեհափառ Հայրապետի բարեհաճ տնօրինութեամբ կարելի է յուսալ, որ սնունդի բարւոքումը հետզհետէ, համապատասխանէ առողջապահական պահանջներին. բայի մէկից ընդհանրապէս ծանր հիւանդներ եչղ եղել Ճեմարանում և հիւանդները շնորհիւ պ. բժշկի աչալրջութեան յաջող կերպով ապաքինուել են:

Ինչ որ Ճեմարանի անտեսական ծախքերին է, վերաբերում Վեհափառ Հայրապետի հաստատած նախահաշուով 1898 թուի ծախքերի համար որոշուած է 39,009 ռուբլի. այդ գումարը մանրամասնում է հետևեալ ծախքերի մատակարարութեան համար.

Ա. Ուսումնական վարչութեան 18571 ռբլ. այս գումարի մէջ են ուսուցչաց ռոճիկը, համալսարան ուղարկուած սանների թոշակը և ուսումնական պիտոյից ծախքը:

Բ. Պահպանութեան որդեգրաց 11069 ռբլ. այս գումարի մէջն են սանների հագուստ, կօշիկ, անկողնի և կենսական պիտոյքների (բացի կերակրից) նմանապէս Ճեմ. վառելիքի և ձրագի ծախքերը:

Գ. Տնտեսական վարչութեան 8360 ռուբլ. այս գումարի մէջն են տեսչի, վերակացուների, քարտուղարի, բժշկի, հիւանդապահի և ծառաների ռոճիկները.

և Դ. Անհրաժեշտ մանր ծախք 1000 ռուբլ.

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շարաթ իրիկուն 29 օգոստոսի առաջնորդութեամբ Պպրեվանքի վարպետներուն և ընծայացու սաներուն, Պատրիարքարանէն ուղղակի Խերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին երթալով՝ իրիկուան ժամերգութեանց ներկայ գտնուեցաւ. Ճաշերգ առաջ ն. Սրբազնութիւնը հանդիսաւոր պատարագ մատուցանելով, Պպրեվանքի բարձրագոյն կարգի 6 սաները սարկաւագ ձեռնադրեց և այս առթիւ պարագային յարմար գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ.

— Կիրակ. ժողովը որոշեց Առաջնորդ և Վանահայր եպիսկոպոսներուն ծանուցանել որ առանց Ազգ. Կենդր. Կիրակ. Ժողովի տեղեկագրելու բնաւ երբէք չձեռնադրեն կուսակրօն սարկաւագ. Նոյնպէս նաև ձեռնադրուած վարդապետներուն, որոնց կրնայ մնանաւոր գաւազանի իշխանութիւն տրուիլ՝ ծայրագոյն իշխանութիւն տալու համար պէտք է նախապէս կեդրոնին հաւանութիւնը ստանալ:

— Փոտոսմոյի Առաջնորդ Տ. Յովսէփ Ծ.

Վ. Այվազեան հարցուցած էր կեդր. Կրօն. Ժողովին, թէ հայագիր այլազգեան աղջիկներու ամուսնութեան առթիւ ի՞նչ տեսակ կարգադրութիւններ ընել կարևոր է, և թէ ամուսնանալու պատրաստուող աղջիկները իրենց գաւանութեան մէջ մնալով՝ կարելի՞ է ամուսնացնել զանոնք հայ երիտասարդներու հետ:

Կրօն. Ժողովը նկատելով որ խառն ամուսնութիւններու համար մինչև ցարդ մասնաւոր օրէնք և կարգադրութիւն չէ եղած և թէ խառն ամուսնութիւնները պաշտօնապէս չեն ճանչցուած Պատրիարքարանէն, որոշեց յանձնարարել Տ. Ծովսէփ Ծ. վարդապետին՝ թէ հայագիր երիտասարդներու հետ ամուսնանալ փափագող այլազգեան աղջիկները պէտք է անպատճառ նախապէս Հայ Եկեղեցւոյ գիրկը դիմեն:

Կրօնական Ժողովի անդամ Տ. Գարեգին վարդապետ Թաթարեան՝ որ երկար ատենէ ի վեր կուրծքի հիւանդութեամբ կը տառապէր, 31 օգ.-ի ժամը 6-ին վախճանեցաւ:

Տ. Գարեգին վարդապետ Սամաթիոյ Սահակեան վարժարանի սաներէն էր. դպրոցական շրջանը աւարտելէն ետքը, աշակերտած է հոգելոյս Կարապետ Պատրիարքին, որուն վախճանելէն վերջը ծառայած է Ծակոր Պատրիարքին որմէ ընդունած է վարդապետական ձեռնադրութիւնը:

Տ. Գարեգին վարդապետ Աղգ. Պատրիարքարանի մէջ պաշտօնավարած է իբր կոնդակագիր իրարու յաջորդող Պատրիարքներու, նոյնպէս վարած է Փոխանորդարանի նշանաւորութեան արձանագրի պաշտօնը:

1872-էն ի վեր այս չորրորդ անգամն էր որ Կրօն. Ժողովին կանգամակցէր, Ճատ տարիներէ ի վեր Այաստեֆանօ քաշուած կապրէր, տեղւոյն եկեղեցիին քարոզչութիւնը վարելով:

Հանգուցեալը անգամակցած է նաև զանազան Ճանձնաժողովներու, և վերջին անգամ Իզմիրեանց Պատկի մնայուն Ճանձնաժողովին, որմէ հրաժարեցաւ հիւանդութեան պատճառաւ:

Սեբաստիոյ Առաջնորդ Տ. Պետրոս արք. եպիսկոպոս Ամասիա գտնուած միջոցին երեք եկեղեցիներու վրայ երեք քահանայ ձեռնադրեր է և Մարզուանու Ս. Աստուածածին վանքին վանահայրի փոխանորդ Իբրիանոսեան Տ. Գէորգ աբեղային վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութիւն՝ ինչպէս նաև տեղւոյն ժողովրդի խնդրանքով այս վերջին և տեղւոյն առաջն. տեղապահ Ֆրանկիւլեան Տ. Նիկողոս վարդապետին ծայրագունութեան աստիճան տուեր է:

Ամասիոյ և Մարզուանի աղգայինները կեդր. Կրօն. Ժողովին կոչմէ Մարզուանի Ս. Աստուածածին վանքի նկատմամբ տրուած որոշումէն մեծապէս գոհ մնալով, Տ. Պետրոս արքեպիսկոպոսի հետ Իբրիանոսեան Տ. Գէորգ Ծ. վարդապետ վանքը գացեր և ժառանգաւորութեան գործը աշխարհականներէն եկեղեցական նորակարգ վարչութեան փոխանցեր են:

— Վիէննայի Մխիթարեան միաբանութեան բազմահմուտ ու ծանօթ անդամներէն Հ. Գրիգորիս Վ. Գալէմքեարեան և Հ. Թաբրիէլ Մէնէվիշեան Կ. Պոլիս են այժմ, առաջինը իբրև «Մեծաւոր», այսինքն ներկայացուցիչ Ազգապետ, և երկրորդը իբր Տնօրէն Բանկալթիի Մխիթարեան վարժարանին:

— Աղթամարայ միաբան Զատոյեան Տ. Գաբրիէլ վարդապետ Վանայ որբանոցները այցելած և տեղեկագիր մը ղրկած էր Պատրիարքարան, Այդ տեղեկագրէն կերևայ որ Վանայ մէջ կը գտնուին այժմ չորս Որբանոցներ՝ Վարագայ, Կարմրուորի, Ամերիկեան և Ֆրէրներու որբանոցները:

«Վարագայ Որբանոցի վիճակը շատ գոհացուցիչ գտայ, կը գրէ Գաբրիէլ վարդապետ. նորանոր և ընդարձակ շէնքեր կառուցած են, որոնք կը ծառայեն որբերուն իբր դասարան, ննջարան, արհեստանոց և խոհարան՝ ամէնքն ալ առողջապահական պայմաններու համաձայն շինուած. արդարև անհրաժեշտ է արդի հոգարարձութեան աշխատութիւնը որ բան գործ ըրած է այս հաստատութիւնը իր բուն նպատակին ծառայեցնելու, թէև միջոցները և պայմանները անձուկ են՝ համեմատութեամբ Որբանոցի ընդարձակութեան, Որբերուն թիւն է 60, ամէնքն ալ մաքուր հագուստ են, բաւականաչափ սննդարար կերակուր կը վայելեն, ամէնուն համար ալ պատրաստուած են յատուկ մահճակալներ. բարոյականութեան մասին ըսելիք չկայ. ուսումնական վիճակը շատ բարձր չէ, միջակ կարելի է անուանել, սակայն յառաջիկայ տարուան համար շատ խոստմնալից է. ունի 6 ուսուցիչ, գիշերապահ և սպասաւոր. որբերը կը սորվին մինչև յոն ատեն կատարագործութիւն և հիւանդութիւն. կատարագործութիւնը բաւական առաջ գացած է, հիւանդութիւնը նոր մուտ գտած է հաստատութեան մէջ. ջանք չը խնայուիր սոյն երկու արհեստներուն զարկ տալու համար:

«Կարմրուորայ Որբանոցը՝ որ 20 որբ կը խնամէ, աւելի կոկիկ և մաքուր է, Գափամաճեան Փառնոս էֆ. որ խնամակալն է այդ փոքր հաստատութեան, շատ լաւ կը խնամէ որբերը. ատոնք ալ լաւ հագուստ են, կերած հացերնին աւելի մաքուր շինուած է. մաքուր են նաև անկողինները. 1 ուսուցիչ ունին, որբերն ալ արդէն վեց նոր սկսած են կարդալ Մայրենի Լեզուի առաջին տարին. խնամակալը մտադիր է որբերու թիւը աւելցնել՝ երբ յաջողի վանքին հոգային կալուածը արդիւնաբեր ընել:

«Տեղւոյս Ամերիկեան որբանոցն ալ գոհացուցիչ վիճակի մէջ է, ունի 350 որբ (130-ը որբուհի)· որբանոցի տնօրէնը տօքթ. Ըէյնոլտ հնգահամբոյր անձ մըն է, լաւ կը ինամէ որբերը· ցաւալի է որ կրօնապիտութեան դաս չտրուիր, թէև կիրակի և տօն օրերը եկեղեցի կը դրկուին: Հոս ալ որբերը այլ և այլ արհեստներ կը սորվին։

«Ըատ տխուր վիճակի մէջ գտայ Ֆրէրներու Որբանոցը, ամենէն խեղճը կը համարուի, միայն տրուած սնունդը գոհացուցիչ է, 20 որբ ունի, անմաքրութենէն 10—15 որբերուն գլուխները վերքով ծածկուած են, ուսուցիչ մը միայն ունի որ ամէն ինչ է։

Մանչէսթրի բարեսէր ազգայիններու ամսական 15 ոսկի նպաստին և Ս. Պատրիարք Հօր բարեացակամ ջանքերուն շնորհիւ, յայտնի է թէ Ազգ. Որբանոց մը ունենալու բարեբաղդութիւնը կը վայելէ Ա.ինթապ որ, իբրև կեդրոն մը միսիոնարական գործունէութեան, վայուց պէտք ունէր այսպիսի հաստատութեան մը։ Ըատ հաճելի էր, ուսումնական այս նոր տարեշրջանի սկիզբէն բոլոր վարժարաններու հետ Որբանոցի ալ բացումը տեսնել. և իսկապէս, հակառակ Հոգարարձութեան ըրած ջանքերուն, խնդիրը պահ մը անլսելոյք վիճակ ստացաւ, բայց Պատրիարքարանէ ղրկած նամակին և 60 լիրային հասնելուն վրայ՝ Հոգարարձութիւնը սիրտ առած՝ սկսաւ գործը փութով առաջ մղել։ Որբերու թիւը առ այժմ 40 պիտի ըլլայ, 15-ը տեղացի, իսկ 25-ը ոչ տեղացի։ Ամիս առաջ արդէն՝ շրջակայ 15-է աւելի քաղաքներու հայ հասարակութեանց հոգևոր պետերուն շրջաբերականները ղրկուած ըլլալով, որբերը սկսան գալ և տարեկան պարէնի պէտքերն այս շաբաթ կը հոգացուին։

— Ս. Պատրիարք Հօր հրահանգին համաձայն, Աղթամարայ կաթողիկոսական Տեղապահ Տ. Արսէն վարդապետը թեմական այցելութեան ելեր է. Տ. Արսէն վարդապետ կը գրէ Պատրիարքարան թէ տեղւոյն Նարեկայ որբանոցը բացուեր և անոր հրսկողութիւնը յանձնուեր է Զատոյեան Տ. Գանիէլ վարդապետին որ, ինչպէս կը յիշուի, իր ուսումը կատարելագործած է Արմաշու Գպրեվանքին մէջ։

— Ս. Պատրիարք Հայրն որոշեց Բալուի Բազդյրահայեաց վանքին մէջ Որբանոց մը բանալ այն գումարով զոր Պ. Ջանչեանց իր տրամադրութեան տակ դրած էր այս նպատակաւ։

— Իզմիտէ կը գրեն Պատրիարքարան, թէ տեղւոյն կառավարութիւնը արգիլած ըլլալով Ամերկոմ վարդապետին Գուրտպէլէն երթալը, յիշեալը կը մնայ Իզմիտ և իրեն առաջնորդող Հայր Սերոբէ ալ ձեռնունայն հետ դարձած է Գուրտպէլէնէն։

— Պոլսէն բաւական թուով ֆրէրներ գացած են Եալագտերէ և ջանացած են համոզել տեղւոյն ազգայիններն որ, եթէ գաւառափոխ ըլլան, իրենց ամէն կարգի նիւթական օժանդակութիւն պիտի չզլացուի։

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ·

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԷՄՒՆ ՀԱՑՈՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ. *

Ա Ւ Ր Մ Ի

Սալմաստից 14 պարսկական փարսախ (90 վերստ) դէպի հարաւ գտնուում է Ուրմի կամ Ուրուժի քաղաքը, համանուն լճի արևմտեան կողմը, երեք ժամաչափ հեռու։ Քաղաքը պարսպապատ է։ Ռուս-Թրքական պատերազմից յետոյ Շէմզինանի շէյխ Իրադուլլահը քրդական բազմաթիւ հրոսակախմբով արշաւեց այս գաւառների վրայ և պաշարեց քաղաքը, որ Մաքուի Թէմուր խանի օգնութեամբ հաղիւ կարողացաւ քրդական գրաւումից ազատուել։ Ուրմիի գաւառը կարելի է Ատրպատականի ամենից արգաւանդը համարել. արտադրում է մեծ քանակութեամբ սերկէ, բրինձ, բամբակ և ծխախոտ։ Ընդարձակ դաշտը, որ ծովի երկարութեամբ տարածուում է՝ ծածկուած է 800 գիւղերով որոնք բոլորն Ուրմեցի խաների սեփականութիւն են. պարսկաստանի ոչ մի քաղաքում չկան Ուրմիոյ չափ խաներ և աղաներ, որ ժառանգարար տէր են կալուածներին և կաշառքով ձեռք են բերում բարձր տիտղոսներ և պատուանուններ։

Գիւղացիները ճնշուած այս ազանների ձեռքի տակ, ամրողջ տարուան չարաչար աշխատանքով հազիւ թէ կարողանան նրանց պահանջութիւնը գոհացնել։ Քաղաքը գեղեցկաշէն է, մանաւանդ խաների և աղաների պալատանման տները, քարվանսարաները։ Ըէհիր—չայի գետը առատութեամբ ջուր է մատակարարում քաղաքին. ամեն տուն իր պարտէզն և մշտահոս ջուրն ունի, փողոցների մէկ մասը լայն և ծառաշատ է։ Բնակիչներն են թուրք, հայ, ասորի և հրեայ։ Թուրքերը սաստիկ մոլեռանդ են, հնազանդում են միայն իրենց սէյիդներին և մոլլաներին, շատ անգամ յարձակուում չսիրած գաւառապետի և ուրիշ պաշտօնէից վրայ և քաղաքից փախցնում։ Հայ, ասորի և հրեայ ազգաբնակութիւններն այսպիսի պարագաներին ստիպուած են իրենց խանութները փակել և տների մէջ պահուիլ։ Ընդհատ որ Ամերիկացի, Ֆրանսիացի և Անգլիացի միսիոնարներ կան, բայց սոքա ոչ մի

---

* Տես «Արարատ» 1898 թ. համար Թ. եր. 403։

կերպ չեն կարողանում մեղմել մահմեդականների մոլեռանդութիւնը։

Ամերիկացի միսիոնարները քաղաքից դուրս Շէհիր չայի վրայ մի ընդարձակ գետնում կառուցել են իրենց հիւանդանոցը, կոլլէժը և այլ հասատատութիւններ. հիւանդների մեծ մասը ձրիարար են խնամում. իսկ կարողութիւն ունեցողը օրական 20 կոպէկ է վճարում ամեն տեսակ ծախքերի համար։ Բժշկապետ դոկ. Բէբբին իրեն վիրաբոյժ մեծ հռչակ ունի և շատ յարգուած է ամբողջ ազգաբնակութեան կողմից։ Այս հաստատութիւնները բոլորը միասին Վալա են կոչուում։ Վերջին երկու տարին նպաստները պակասցրել և կոլլէժը հասարակ վարժարանի են վերածել, հիւանդանոցն ևս յունիսի սկզբից պէտք է փակուէր. մեծ դժբախտութիւն է այս, քանի որ ամբողջ Ատրպատականում միակ հիւանդանոցն է, ուր Տաճկաստանից էլ մեծ թուով հիւանդներ են գալիս, մանաւանդ աչքի հիւանդութիւն ունեցողները։

Ուրմիոյ գաւառում Ասորիները բազմաթիւ լինելով հայերից աւելի կշիռ և դիրք ունին և դժբախտաբար կարողացել են իրանց օրինակով վարակել։ Ասորիները խիստ թեթեւաբարոյ են, թուրքերի հետ ունեցած մօտիկ յարաբերութեան պատճառով, բաւական կանայք և աղջիկներ թրքանում են. տղամարդիկ առհասարակ պանդխտութեան մէջ թափառում և խաչադոգութեամբ են զբաղուում. կան միայն բաւական ճարպիկ հիւսներ և օրմնադիրներ։

Հայերը բնակւում են քաղաքում և 28 գիւղերում՝ առհասարակ խառն թրքերի և ասորիների հետ. միայն Կէրտապատ և Նախջևան—Թէփէ գուտ հայաբնակ են։ Քաղաքում կան 45 տուն հայեր, ունին մի գեղեցկաշէն եկեղեցի 1891 թուին կառուցած՝ սրբոյն Ստեփաննոսի անունով, մի քահանայ, մի ուսուցիչ և 30 աշակերտ։ Ինչպես ասացինք, հայերը ասորոց ազգեցութեան տակը լինելով շատ անգամ խառն խնամութիւններ են ունենում մեծ մասամբ ասորերէն են խօսում, կանանց տարազն ևս ասորական է՝ թրքականին շատ նման։ Եթէ վաճառականութեան պատճառով Սալմաստից և Թաւրիզից եկած հայերը չլինէին՝ Ուրմեցի հայերին բոլորովին կորսուած կարելի էր համարել. Ինչպես հայերը նոյնպէս և 250 տուն ասորիները բնակւում են երկու թաղերում՝ Նէնէ-Մէրիամ և Փաթալի-խան-կըօլը. վերջինիս մէջն է հայոց եկեղեցին, Փրանչիսկեան կրօնաւորաց վանքը, կուսանոցը և ուսումնարանը. իսկ Ամերիկացոց մի մասը և Անգլիացիները Նէնէ-Մէրիամում են. այստեղ է նստում և նեստորական Ասորոց եպիսկոպոսը։ Ուրմեցի հայերը մեծաւ մասամբ հիւսն են, գինեվաճառութիւն նոյնպէս անում են, այգիներ ունին, վաճառականներից մի մասը ընտանիքով այստեղ են փոխադրուած։ Կրօնասիրութիւն բոլորովին չկայ. Ցարութեան և Ծննդեան տօներից բացի եկեղեցւոյ մէջ աղօթող տեսնելը հրաշք կարելի է համարել։

Ուրմիոյ գաշտի 800 գիւղերը իրար խառնուած մի անսահման ծաղկազարդ պարտէզ են ներկայացնում. մի ափ հող անդամ չկայ անմշակ. քաղաքի իւրաքանչիւր գոնից սկսած մի քանի փարսախ տեղ խճուղիներ են շինուած և ուռենիներով հովանաւորուած. տեղացի խաներից Սուճամի դէօվլէն հասարակաց շինութեան համար շատ է աշխատել. այժմ սորա թոռներն ևս լուսամիտ մարդիկ են, որոնք, ինչպէս և Սրբաձը—Սալթանան հարուստ կալուածատէրը, իրենց գիւղացիների հետ մարդավարութեամբ են վարուում։

Հայաբնակ գիւղերից նշանաւոր է Կէրտապատ, քաղաքից 7 վերստ դէպի հիւսիս Սալմաստի ճանապարհի վրայ, ունի մի եկեղեցի, 1895 թ.-ին նորից կառուցուած վայելուչ կերպով 2 քահանայ, 1 ուսուցիչ, 25 աշակերտ։ Տուրքերը շատ ծանր են մի գաղափար տալու համար իրրև նմուշ յառաջ բերենք Կէրտապատցիների վճարած հարկը իրենց ադային, որ այժմ մի կին է շատ քիչ տարբերութեամբ ամեն գիւղերը միևնոյն հարկն են վճարում։

1. Գլխահարկ—5 ½ ղրան (1 րուբլի 20 կ.)։
2. Իւրաքանչիւր գլուխ 3 մշակ, կամ փոխարէնը 3 ղրան (60 կ.)։
3. Տան հարկ 8 ղրան (1 ր. 60 կ.)։
4. Իւրաքանչիւր տուն երկու հաւ։
5. Գոմէշից 3 ղրան 4 շահի (64 կ.)։
6. Կովից 1 ղրան 12 շահի (32 կ.)։
7. Մատակ էշ 1 ղր. 12 շի. (32 կ.)։
8. Մատակ ձին 3 ղր. 4 շի. (64 կ.)։
9. Առու հանելու համար ամեն գլուխ 2 մշակ։
10. Աղային բրինձ ցանելու » » » »
11. Նէվրուզին իւրաքանչիւր տանից 15 շահի (15 կ.)։
12. Հարսանիքին 2 գլուխ չաքար փեսայից, 2 աղջկականից՝ եթէ աղան տարրեր է, իսկ եթէ մի գիւղից՝ միայն 2 գլուխ։
13. Սերմացուի կէսը աղայից է կէսը գիւղացուց, ամեն աշխատութիւն գիւղացուց. արդիւնքը կիսելուց առաջ աղան վերցնում է 17 ½ ման (մի մանը մօտ 10 գրուանքայ է)։
14. Բամբակի ցանքի մէկ թանաֆին 12 ղրան (2 րուբլի 80 կ.). թանաֆը հաւասար է 64 քառարշինի։
15. Առւոյտի թանաֆին նոյնչափ։
16. Այգիին գարձակ 14 ղրան մէկ թանաֆին։
17. Ամեն մի այգիից 2-3—4—6 ման կուռա (տհաս խաղող՝ արի-կուռա հիւթը պատրաստելու համար)։

18. Ադայի ցանած բամբակի, բոստանի, բրինձի ամբողջ աշխատութիւնը գիւղացուց. այս մշակութիւնները բռնում են 75 թանափ։

19. Ձմրան հերթով գնում են ադայի բնակարանի ձիւնը մաքրելու։

Բացի ադայական այս բոլոր տուրքերից սարփարաստին տալիս են տան գլուխ 2 դրան. իսկ բոզոք, դատ պատահած ժամանակ կաշառք է առնում ըստ կարգին։

Առհասարակ Ուրմիոյ բոլոր գիւղերը, թուրք թէ քրիստոնեայ, այս հարկերն ունին և այդ պատճառով այս վերին աստիճանի բարերար երկրում գիւղացիներն իրենց ապրուստը հոգալու, տուրքերը վճարելու համար ստիպուած են պանդխտել։

Նախջևան-թէփէ 75 տուն գուստ հայաբնակ գիւղը քիչ քիչ ադայից գնում է իր կալուածները, որով այս ծանր հարկերից ազատուում են։ Այս գիւղը ունի 4 քահանայ, 1 եկեղեցի, 1 ուսուցիչ և 30 աշակերտ։

Վերջին ժամանակներս, երբ Պարսկաստանում օրէնքներ դնելու խօսքեր են լինում՝ աղաները և մօլլաները յուզուում են, վախենալով թէ իրենց կալուածները ետ պիտի առնուին. մինչև 120 գիւղ ունեցող կալուածատէրեր կան։

Տգիտութիւնը վերին աստիճանի է, մի քանի ուսումնարաններ միայն կան բացուած. կանոնաւոր և յարատև աշխատութեամբ կարելի է քաղաքում և ուրիշ երեք գիւղերում՝ ինչպէս Նախջևան—թէփէ, Հէրտապատ և Ռահվայ՝ ուսումնարան ունենալ միգասեան, մինչև անգամ երկդասեան, որով միւս գիւղերն ևս կարող են օգտուել։

Ուրմիոյ դաշտում կան բազմաթիւ մեծ և փոքր հողաբլուրներ, որոնք հին աւերակների հետքեր են, ինչպէս Կէօք—թէփէ, Գապագ-թէփէ, Կարա—թէփէ, Քիւլ—թէփէ և էլն. փորելով գտել են սքանչելի և կարևոր հնութիւններ։

Ուրմի քաղաքից 20 վերստ դէպ արևմուտք օսմանեան սահմանի մօտերը Թէրկէվէր և Մէրկէվէր գաւառներում կան մի քանի ասորական գիւղեր, որոնց գլխաւորն է Մալանա։ Այս գիւղացիները իրենց գաշտավարական ազգակիցների բոլորովին հակապատկերն են կազմում՝ քաջ, աշխատասէր, բարոյական, պանդխտութեան անսովոր. զբաղուում են հողագործութեամբ և անասնապահութեամբ, սահմանակից օսմանեան քիւրտերի հետ յաճախ ընդհարման մէջ են. գիւղատէր Սըրաճը-Սալթանան մեծ քանակութեամբ պետական հրացաններ է տուել դոցա ինքնապաշտպանութեան համար։

Ուրմիոյ գաւառումն է Սալմաստի հարաւային արևմտեան կողմում, Սօմայի Բրադօսթ լեռնային գաւառակը, ամբողջապէս քիւրտերով բնակուած. Այս վերին աստիճանի բարերար և ընդարձակ երկրում առաջ բուսական հայեր բնակուելիս են եղել, գեռ այժմ էլ կան շատ կիսակործան եկեղեցիներ մի քանիսն էլ կանգուն, որոնք գոմի են վերածուած. Քիւրտերի հարստահարութիւնից ազատուելու համար թողել են այս հիանալի տեղը և գաշտերը ցրուել. այժմ կան շատ քիչ հայեր հատ հատ ցրուած այդ բազմաթիւ գիւղերում։ Բնակիչ քիւրտերը 2 թշնամի ցեղեր են. Շիկակներ և Գաստարցիք. կառավարութիւնն ամեն տարի սոցանից փոքրաքանակ տուրք հաւաքելու համար մի քանի գունդ զօրք է ուղարկում, որոնք ձմրան յաջողում են մի քանի գատարկ գիւղեր աւերել։ Երկու ցեղերի թշնամութեան պատճառով Շիկակների մի մասը ստիպուած են Սօմայի թողել և Սալմաստի արևմտեան լեռնոտ տեղերում բնակուել՝ իրենց կենդրոն ունենալով Ճարա, կամ ըստ Թուրքաց Ջահրի, բերդաւանը Զօլա գետի վրայ. սակայն պարսիկների հետ չկարողանալով համաձայնել՝ ստիպուած են շատ անգամ Տաճկաց հողն անցնել և Սալմաստի լեռնային հայ գիւղերը կողոպտել, այնպէս որ Հալվէրան, Քեապիկ, Ասլանիկ, Հմրանաւա գիւղերը հետզհետէ հայերից գատարկուում են։

Ուրմիոյ արևմտեան հարաւային կողմում է Սրա լեռը, ուր միսիոնարները գեղեցիկ ամարանոցներ են շինել. այստեղ կայ սուրբ Սարգիս անունով մի փոքր եկեղեցի, որ ուխտատեղի է հայոց և ասորոց. խեղճերին և լուսնոտիներին այստեղ են տանում և մի քարայրում բանտարկում, մինչև որ առողջանան։

Ուրմիոյ հայոց գրութիւնը խիստ անմխիթարական է. երբ արեան հովիւներ չլինին՝ դժուար մի ազգ այսչափ տարրեր կրօնների և ազգութեանց մէջ իր գոյութիւնը պահպանէ. քահանաները տըգէտ են, միայն Նախջևան-թէփէի Տէր Գրիգոր և քաղաքի Տէր Գարեգին քահանաները իրանց կոչման արժանի կարող են համարուել մէջավայրին համեմատած. Տէր Գարեգինը մեծ աշխատութիւն է գործ դրել Կէրտամատի, Ռահվայի և Իքի-աղաճի եկեղեցիների շինութեանց վրայ. Թէև ժողովրդեան մեծ համեմատ քահանաները նոյն իսկ քիչ են, բայց կրօնական զգացման պակասութեան պատճառով քիչ եկամուտ ունին. եթէ կալուածներ չունենան՝ դժուար կարողանան միայն քահանայութեամբ ապրել։ Ուրմիոյ հայերը բարք ու վարքով ի հարկ է չեն համեմատուիր իրենց գրացի ասորոց հետ, սակայն և այնպէս բաւական ազգութիւն են. Համաւութիւնները շատ անգամ խառն են ըստ ասորոց և վաղաժամ. մերձաւորութիւն յաճախ է պատահում, մինչև անգամ 2 ճիւղից եղել է։

Ուրմիից սարգայի, չամիչի, բրինձի, ռուբի և բամբակի ահագին արտահանութիւն կայ. սարգան և չամիչ Երևան, Աստրախան և Վան են ուղարկուում այս տարի մինչև անգամ Տրապիզոն տարան, որովհետև Իզմիրի բերքը պակաս լինելով՝ եւրոպական հրապարակները բաց են մնացել։ Ծովակը հաղոր-

գակցութեան բաւական դիւրութիւն է տալիս՝ մինչև Թաւրիզ ճանապարհը երկաթ օրով կարճանում է, որով ձախքի մեծ խնայողութիւն է լինում. յաջող հողմով 6 ժամից կարելի է լճի լայնքը կտրել, բայց շատ անգամ 3—6 նոյն իսկ 10 օր լճի վրայ մնում է նաւը։ Մի քանի պարսկահայ վաճառականներ Ուրմիի և Մարաղայի սարլիի առևտրով իրենց բախտը չինել են. վերջին տարիներս Թաւրիզից հայ վաճառականներ առանձին ընկերակցութիւններ կազմելով սկսեցին այս առևտրով զբաղուիլ։ Արտահանութեան ամենից մեծ գործ կատարողներն են Թումանեանք և Ս. Արզումանեան։

ԲՈՐԱՆԴՈՒԶ։

Ուրմի քաղաքից 20 վերստ դէպ հարաւ գտնում է Բարանդուզի գաւառը, որ Ուրմիոյ դաշտի կազմութիւնը և արգաւանդութիւնն ունի, ոռոգում է Համանուն գետակով։ Այս դաշտում գտնուած բազմաթիւ գիւղերից 13-ի մէջ հայեր բնակուած են խառն ասորիների և Թուրքերի հետ։ Բոլոր հայերը 203 տուն են միայն, կայ 4 եկեղեցի՝ Բարաուի, Էչլանէթի, Դիզմարիայ և Թամարի գիւղերում։ Ոչ մի ուսումնարան չկայ, քահանայ էլ չունին, սահմանակից Տաճկաստանի գաւառից եկող մի քահանայ մի տարուց ի վեր հաստատուել է պատեղ և Ուրմիի Էքի—ադաճ գիւղի քահանաներից մին երբեմն պտըտում է։ Բոլոր հայերը բացի մի գիւղից կորցել են իրենց մայրենի լեզուն, խօսում են Թուրքերէն. անձանօթ ճանապարհորդը գժուար կարողանայ իմանալ թէ պատեղ հայեր են բնակուում։ Տներները շատ անգամ շարաթներով անթափ են մնում միւս ձմեռնատուրութիւններն էլ ըստ կարգին. միայն զարմանալի է որ հաստատամտութեամբ պահպանում են իրենց հաւատը և անհրաժեշտ կարիք ունեցած միջոց իսկ չեն գիմում կաթոլիկ կամ բողոքական կրօնաւորներին։ Սուգ հաւատացեալ առաջինր կազմում է պահեցողութիւնը. պահք լուծողը հայ չի համարուում, արդէն տարրեր մի նշան էլ չկայ հայը ճանաչելու, թէև մի ուսումնարան շինելու ձեռնարկութիւն եղաւ, բայց շուտով խանգարուեցաւ. Ուրմիի գործակալը, որին յանձնուած էր այդ՝ դրամը ուրիշ բանի յատկացրեց և Թրքախօս Բարանդուզցիները մնացին առանց ուսումնարանի։

Բարանդուզի բերքերը, տուրքի դրութիւնը, գիւղացուց վիճակը նման է Ուրմիոյ գիւղերին։

ՈՒՐՄԻՈՑ ԼՃԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՂՄԸ.

Սուլդուզ։ Ուրմիոյ լճի հարաւային կողմը գտնում են Սուլդուզ, Սոմայ—Բուլաղ և Միանդաւ գաւառները։ Խիստ բարերեր և ցորենաշատ դաշտավայրեր են սորա՝ բնակչաց մեծագոյն մասը քիւրտեր, կան նաև գարափափախ Թուրքեր, հայեր, ասորիներ և հրէաներ. հայերն ինչպէս Բարանդուզում, պատեղ ևս կորցրել են մայրենի լեզուն և ազգային առանձնայատկութիւնները. կարելի է սրանց համարել քրիստոնեայ քիւրտեր և ոչ թէ հայեր։ Ուսումնարան չկայ բնաւ, հատ հատ երեցած քահանաներն իրենց մտաւոր և բարոյական մակարդակով երբէք բարձր չեն հասարակ ժողովրդից, նա զագէյում երեք տարի առաջ մի ուսուցիչ ուղարկուեցաւ Թիֆլիսարնակ սալմաստեցի մի վաճառականի հաշուով, որ ժամանակին իրրև մեծ բարերարութիւն հոչակուեցաւ. ուսուցիչը միայն վեց ամիս կարողացաւ մնալ, որովհետև բարերարը փող չտուեց այլևս։ Հայերը բնակուում են 8 գիւղում խառն միւս ազգութեանց հետ, բոլորը 120 տուն են։

Սուլդուզ գաւառում բնիկ հայեր քիչ են, այժմեան բնակիչներն եկել են Կերմանից և Սպահանից. բուն Սուլդուզցիք Թաւրիզ, Երևան և Մարագա են գաղթել. Պատմում են, որ Սուլդուզի Կիօհլ գիւղը բազմահայ էր, ուժեղ և հարուստ շատ մեղիքներ կային սորա գլխաւորն եղել է Գարամելիքը, որի մասին հետևեալն են պատմում. Մի օր Գարամելիք Մարագայում եղած ժամանակ Ուրմիոյ պատուար Նուռնուց բէկը մարդ է ղրկում Կիօհլ՝ որոշուած հարկն ստանալու։ Այդ միջոցին հայերը մի հարստահաց ուրախութեամբ զբաղած են լինում. հարկահաւաքները վատ են վարուում, որի համար Գարամելիքի քոյր Խան—Խանըմը բարկանալով գանակոծել է տալիս հարկահաւաքներին և ականջներն ու քիթերն կտրած ետ ճամբում։ Նուռնուզ բէկը այս անպատուութիւնը չտանելով մեծ գնդով գալիս է Կիօհլը աւերելու. լուր է հասնում Գարամելիքին որ պիտում է Մարագայում. Միւշէյիտին, նա էլ օգնութեան իր պատմեան առաջ գնում է հաւատափոխ լինելու։ Գարամելիք առևտուս ընդունում է, որով գիւղը ազատուում է կոտորածից. Նուռնուզ բէկը բաւականանում է միայն կոպեկով. Գարամելիքը մեռնելիս կտակում է, որ իրեն ոչ հայոց և ոչ էլ Թրքաց գերեզմանատան Թագեն. մինչև այսօր երեսում է Կիօհլի հարաւային կողմը 100 քայլ հետ ահագին մի քարով Գարամելիքի գերեզմանը. Սորա մահից յետոյ ցրուում են նաև շրջակայ գիւղերի հայերը. այժմ միայն եկեղեցւոց աւերակները և ընդարձակ գերեզմանատունները ցոյց են տալիս նախկին բնակչաց ինչ ազգից լինելը։

Սուլդուզ գաւառում կան նաև 100 տուն ասորիներ 4 գաւանութեանց բաժանուած՝ բողոքական, կաթոլիկ, Նեստորական և Եպիսկոպոսական. հայերը սորա հետ կապուած են խնամութեամբ. Ամուսնութիւնները կատարուում են՝ աղջիկ 15—18

իսկ տղան 18—24 տարեկան։ Հարսանեաց հանդեսները աւելի քրդական և Թրքական սովորութեամբ են լինում։

Սօվուճ Բուլաղ.—Ազատել Հայեր բնակուում են 4 գիւղերում, 54 տուն են, ամին բանով նման Սուլդուզի Հայոց։

Միան—Դուբ—Ար.—Ձդարու և Թամամի գետերի մէջ լինելու համար այսպէս է կոչուում, ամբողջապէս քրդերով բնակուած է, 16 տուն միայն Հայեր կան ապանում։ բացի դորանից Հայեր ապրում են ուրիշ 4 գիւղերում, բոլորը միասին 53 տուն։

Քրդական 4 գլխաւոր ցեղեր այս գաւառների հարաւային կողմը ընդարձակ մարգագետիններ գրաւել են, յաճախ իրարու հետ կռուի մէջ են. կառավարութիւնը չի միջամտում մինչև որ իրար կոտորելով յոգնին. ճանապարհների վրայ աւազակութիւն և կողոպուտ սրանց սովորական արհեստն է։ Թուրք և քիւրտ ցեղերը կրօնական վառ ատելութիւն ունին. Ճիաների մէջ հարբեմի ծիսակատարութեանց միջոցին սիւններները շատ անգամ անկարգութիւններ են յարուցանում, որ ընդհանրապէս արիւնհեղութեամբ են վերջանում. Թուրքերից էլ սիւններ կան, բայց շատ քիչ։

ՄԱՐԱՂԱ.

Սոհանդ և Մուրթի լերանց հարաւային ստորոտում շինուած 14000 բնակչով մի քաղաք է, հռչակաւոր իր շրջապատից պտղաբերութեամբ։ Հայերը 180 տուն են, մեծաւ մասամբ եկուր Վարագաղից, Միանդուաբից, Տուզարզանից և Թաւրիզից. մնացեալ բնակիչները Թուրքեր են Շիա աղանդով, կան և մեծ թուով բարիներ, բայց ծածուկ։ Թուրքերը նոյն բարեբարոյութիւնը չունին ինչպէս Ուրմիում. թէև նոյն զգուանքը և գարշանքը կայ գեաւուրներից, բայց կարող ունենալով ստիպուած են կեղծել և շողոքորթել Հայերին։

Մարաղայի մօտից անցնում է Սօֆի գետը, որի շրջապատ զուարճալի տեսարաններով, ծաւալուն այգիներով քաղաքի մնալ և խանութ ազդեցութիւնը քիչ մեղմում է։

Հայերը բնակւում են քաղաքի արեւմտեան կողմն երիք թաղերում՝ Վիլասլըք, Նկեղեցոյ և Բարաջաֆէրի. պատուաւորն Նկեղեցոյ թաղն է, ուր վաճառական և հարուստ դասակարգն է բնակուում։ Տները միայարկ են, քչերը կրկնայարկ, անթուրծ աղիւսից շինուած. փողոցները նեղ ու ծուռ, սակայն կանոնաւոր շուկայ և քարվանսարաններ ունի, որոնց 3-ը Հայ վաճառականների սեփականութիւն են։

Մարաղան նշանաւոր է իր բնակների արտահանութեամբ՝ սկզբից, որ Ուրմիից աւելի առատ և պատուական է, նաև նուշ ու մեղրամոմ։ Թաւրիզեցի և Սալմաստեցի բազմաթիւ վաճառականներ այս արտահանութեամբ են զբաղուած. վաճառման հրապարակները նոյն են ինչ որ Ուրմիին, Թաւրիզի վաճառականներն իրրև աւելի կրթուած՝ եկեղեցին և վարժարանին աւելի են օժանդակում։ Տեղացի Հայերն անտարբեր են, իրենց տարազով, ապրելակերպով, վարք ու բարքով թուրքերից չեն զանազանուում. խիստ ազատազուած մի Հայերէն են խօսում որ անծանօթին դժուարահասկանալի է։ Գրեթէ բոլորն էլ արհեստաւոր, հիւսն, դինագործ և խոմիչք ծախող են, կան փերեզակներ և մի քանի առևտրականներ. դինագործները ամեն տեղ լաւ արհեստաւորներ են համարուում։

Կանայք ինչպէս Պարսկաստանի բոլոր քաղաքաց մէջ, այստեղ ևս ստրուկ են. զգեստները թէև ոչ բոլորովին Թրքական, սակայն զարձեալ համեստութեան սահմանից բաւական հեռու են. աղջիկները մարդու են գնում 11—15 տարեկան։ Կրօնական զգացումը սաստկ է, կանայք իսկ եկեղեցիով չեն հետաքրքրուում. տարին երկու անգամ մատաղ կանեն եկեղեցու դրան, կաշին և ոտները քահանային բաժին հանելուց յետոյ՝ միսը կշիռքով կը բաժանեն բոլոր տները։ Ննջեցեալների վրայ ողբ ու կական պարտաւորիչ է, քիւրտերէն երգերն աւելի յարգի են. եթէ մեռնողը պանդուխտ լինի, կանայք մի բարեգործութիւն են համարում նրա վրայ ևս ողբ ասել։ Սալմաստ և Ուրմի գաւառներում ևս տարածուած է մեռելների վրայ սաստիկ ողբալը՝ մանաւանդ եկեղեցում։

Մարագան ունի մի եկեղեցի, 78 տարի առաջ նորոգուած, հասարակ ազիւսաշէն և փայտածածկ. երկու քահանայ ունէին, մին տեղացի տգետ, փալ բացող, միւսը Տաճկահայ երիտասարդ. Տէր Տաճատը, որ երկու տարի առաջ մեռաւ՝ ասպարէզը էլի տգետին մնաց։ Ուսում մնարանը շնորհիւ վաճառականաց ապահովուած է. 1896 թուին ունէր 2200 րուբլի դրամագլուխ, որից գոյանում էր 330 րուբլի. աշակերտների թիւը 45 է. 4 կարգի բաժանուած. մնայուն մի ուսուցչից զատ մի ժողա էլ պարսկերէնի դասեր էր տալիս։

Մարաղայից արևմուտք 40 վայրկեան հեռի է Ւէհրիվայ գիւղը ունի մի փոքր եկեղեցի, քահանան Մարաղայումն է. այժմ միայն 12 տուն հայ կայ, վաղուց ի վեր քաղաք են փոխադրուել մեծ մասը։ Խոճամիր գիւղը, որ 10 վերստ դէպի հարաւ է՝ 8 տուն հայ ունի. Մարաղայումն այս երկու գիւղից զատ ուրիշ տեղ Հայեր չկան՝ գազթականութեամբ Թուստան են անցել։ Մարաղայից մէկ ու կէս որ դէպ հիւսիս Տուզարզան քաղաքում գեռ շէն է Հայոց եկեղեցին, որ ունի մի ընդարձակ այգի հին կալուածներից մնացած. արդիւնքը Թաւրիզի Արամեան ուսումնարանին է յատկացրած. Թուրք կանայք են գալիս եկեղեցին։

(Կր շարունակուի)

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱՓԻՆ.

ՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.

(Շարունակութիւն եւ վերջ)

ԹՈՅԼ ՈՒ ՏԿԱՐՆԵՐԻՆ.

(Vaillance-ից)։

Եւ զակարս աշխարհիս ընարեաց Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս։
Ա. Կորնթ. Ա. 27.

«Աւելի լաւագոյն մխիթարիչ չկայ, քան նա որ ինքն անձամբ մխիթարուելու է կարօտ»։

Երբ որ կատարեալ մարդ դառնալ ցանկացողների համար գլուխ էի այս էջերը և առաջարկում էի, որ նոքա ինեայեն և վարժեն իրանց բնաւոր զօրութիւնը, հնազանդեցնեն իրանց բնութիւնը իրանց կամքին, յարգեն իրանց մէջ կենաց ազբիւրները, մի խօսքով ամէն բանի մէջ արիութեան վարժուինն—ինձ միշտ տանջում էր մի միտք՝ մի գաղտնի ձայն, թէ այդ բոլորը լաւ է միայն առողջ երիտասարդութեան համար, որովհետև զօրութիւնը առողջների բաժին է։ Հապա ինչ պէտք է խրատես հիւանդներին, ինչ պէտք է ասես մանալ ճակատագրից տանջուելու և չարչարուելու դատապարտուածներին։

Ես կարող էի պատասխանել, թէ նպատակիս հետ ես վարձատրուած կը լինիմ, եթէ իմ խօսքերը համոզեն գէթ մի քանի առողջ տղամարդկանց, որ սպառազինուին արդիւնաւոր պատերազմի համար։ Սակայն ես այդպէս չեմ դատում, թէպէտ անհերքելի կը լինէր և այդպիսի պատասխանը։ Իսկ եթէ ես այդպէս չեմ առարկում, չկարծէք թէ, լաւ եմ որովհետև խղճում եմ այն թշուառներին, որոնց կեանքը լոկ միայն մի անվերջ տանջանք է։ Հաւատացէք, այդ թշուառները միայն խղճալու և ողբալու չեն եթէ լաւ նայենք՝ այդ խաւարի մէջ կը գտնենք նաև մի քանի պայծառ կէտեր։ Ու ես ուրախ կը լինեմ եթէ, կարողանամ փոքր ինչ լոյս սփռել դոցա մթութեան վերայ։

Ես համոզուել եմ, որ տկարների և թոյլերի մէջ կայ բարոյական զօրութեան մի աղբիւր—իսկ այդ համոզումը փորձով բերել եմ տառապանաց աշխարհից, որպէս մի յուսոյ ծագիկ՝ խորխորատի ափից քաղած։ Երբ որ մի ես բոլոր աղբիւրները ցամաքին, այդ աղբիւրը չի ցամաքիլ, ինչպէս որ չի ցամաքում արցունքների աղբիւրը։ Ես ուզում եմ աւետել մի քանի էակներին, որոնք իրանց տկարութիւնից ձնշւում են, թէ նոքա կատարում են բարձր կոչում, թէ նոցա թուլութիւնը մի զօրութիւն է, որին հզօրները կարօտ են։ Այս արդէն մի մխիթարութիւն կը լինի նոցա համար։

Նախ և առաջ այն ասենք, թէ ով որ հիւանդութեան պատճառով մերժուել է սովորական հասարակական գործունէութիւնից, նա այնու տակաւին չի արտաքսած մարդկութիւնից։ Ընդհակառակն, նա աւելի քան ուրիշը հատատուել է կեանքի հանրային հիմքի վերայ։ Նորա չարչարանքը յարաժամ (memento mori) մահուամբ պատկուելու յիշատակութիւն է։

Գործնական կեանքը մարդկանց զատել է իրանց շահերի, կատակցութիւնների և վիճակների համեմատ։ Շատ անգամ նոցա մէջ ընդհանուր համերաշխութիւնը այն աստիճան մեռնում է, որ երկրորդական հոգսերը իրանց համար գառնում են կենսական խնդիրներ։ Նոքա իրանց անձը՝ նախ քան մարդ զգալու՝ զգում են աղքատ կամ հարուստ, ծառայ կամ տէր, քաղաքացի կամ կղերական, նիւթապաշտ կամ հոգեպաշտ։ Իսկ փորձանքներից մեծագոյնը, այսինքն հիւանդութիւնը, ազբիւրն է այդ բոլոր պատատկանութիւնները և հարթ հաւասար է դարձուցանում վիճակների խորտուբորտութիւնները։ Ամէնից աւելի թշուառութիւն է, մեզ սովորեցնում, թէ մենք եղբայր ենք։ Ծօմասցած մարդը իր ամէնօրեայ տանջանքներում հասկանում է, թէ իր բարոյական զգացումը կատարելագործել է, թէ ինքը օրըստօրական հազար ու

մէկ ունայնութիւնների վերայ աւելի բարձր տեսակէտից է դատում քան ուրիշները, որոնք ճնշված են չնչին բաներից, և համոզված էր, որ եթէ և ինքը ոչ մշակ է, ոչ փաստաբան, ոչ նոտար՝ այնու ամենայնիւ պարտաւոր է հասարակական գործք կատարել, այն է՝ շրջապատողներին ազդել մարդկայնութեան գործում: Նա տեսնում է, որ ազատուել է ազանգական նախապաշարմունքներին սարսափելս հնազանդելուց, և թէ մի քանի դէպքերում իրան կաշկանդող շղթան՝ արձակութիւն է տալիս իրան միւս դէպքերի համար: Նա տեսել եմ թէ ինչպէս տառապանքը կամուրջներ է, կառուցել այնպիսի անդունդների վերայ, որով ոչ մի արուեստի և ոչ մի կամքի զօրութեամբ անցնել հնարաւոր չէր: Թուլութեան և կարօտութեան նոյնական պայմանների մէջ գտնուող թշուառները՝ անդիմադրելի ոյժմամբ իրար մերձենում են, թող մէկը լինի հարուստ, միւսը՝ ապքաստ գաւառակ, մէկը անգրագէտ լինի՝ միւսը լաւ կրթուած, թող իրար մէջ գտնուեան և ազգութեան խարութիւններ լինին — և ինչ որ նոցա միացնում է, այն է, ընդհանուր թշուառութիւնը, աւելի հզօր է, քան ինչ որ նոցա բաժանում է:

Միշտ և ամէն տեղ փորձով իմանում ենք, թէ մարդկանց միացնող հանգամանքները աւելի կարևոր են, քան բաժանող հանգամանքները: Մեզ միացնում են մեր ներքին շնորհները, բաժանում են արտաքին խարութիւնները: Ով որ այս բանը ճանաչում է, նա զօրութիւն է տանում և ուրիշների համար գտնում է, զօրութեան հաղորդիչ: Հասարակաց ինչ վիճակում էս պրուած լինի՝ մարդն աւելի օգտաւէտ պաշտօն չի կարող կատարել, քան մեզ մարդասիրութեան հրատիրելով: Իսկ այս պաշտօնը ոկարն աւելի լաւ կարող է վարել միւսներից: Նախ այն պատճառով, որ ինքը իւր քարոզածի կենդանի օրինակ է հանդիսանում և երկրորդ՝ որովհետև մի ճշմարտութիւն այնքան աւելի հրապուրիչ է, գտնում, որքան որ աւելի մեղմ արարածի բերանով է հրապարակ հանվում:

Բայց փոխենք հայեցակէտը, որպէս զի առաջադիմելի զօրութիւնը աւելի պայծառ լուսով երևայ: Ցկարը միշտ մի սրտաշարժ բողոք է ապրում մարդկութեան սրտի մէջ հզօրի իրաւունքի դէմ, որովհետև ով որ պնուութեան գէթ մի կայծ պահել է իւր հոգու մէջ՝ նորա աչքում բռնի ուժի ոչ մի յաղթութիւն չի կարող հաւասարուել անզէն լեզուին: Օգտապաշտ բարոյականութիւնը, գոյութեան կռուի հռչակուած օրէնքը և թոյլների անպատճառելի կորստեան վարդապետութիւնը, — այս ամէնը ցուրտ տրամաբանութեամբ թերևս մասամբ մեզ ազորժելի դառնան, սակայն որպէս զի այդպիսի գրական համարուած տեսութիւնները չախչախուին՝ հերիք է, ակարի լոկ միայն ներկայութիւնը, մանաւանդ եթէ դա մեր մօտիկ մերձաւորն է: Այն ժամանակ ամենայն ինչ շրջվում փոխվում է: Միշտ կարելի է ուժի դէմ ոյժ գործածել, քաջութեամբ պաշտպանուողի վերայ՝ կատարութեամբ նետուիլ: Բայց աւելի դժուար է յարձակուիլ թոյլերի, անզէնների վերայ: Դոցա պաշտպան է դառնում իրանց թուլութիւնը: Իսկ այդ թուլութիւնը այնքան պերճախօս է, որ միշտ մեծամեծ յաղթութիւններ է տանում: Ուրեմն ակարի ձեռքով մարդու աչքի առաջ յայտնվում է մի գաղտնի զօրութեան դռնութիւն, որ աւելի ահաւոր է, քան մարմնական ոյժը: Ահա դա է, որ իւր տանջանքների նուիրագործութեամբ թելադրել է տուել հեռուհեռու անմոռանալի խօսքը. «Որովհետև արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք»:

Ցկարն ունի իւր յատուկ կոչումը բժշկել առողջներին, որովհետև սրբա էլ իրանց հանգի հիւանդներ են: Ու յիրաւի, առողջութիւնը առանձին տեսակ ակարութիւն է առաջ բերում, որ վերջ ի վերջոյ անտանելի է դառնում: Փոքր ինչ հիւանդութեան ժամանակ զօրաւոր մարդկանց անհամբերութիւնն ու շուտ յուսահատութիւնը՝ յայտնի է ամէնուն: Մի՞թէ մեղադրի՞նք դոցա այդ պատճառով: Ոչ, դոքա տակաւին չեն փորձուել: Դոքա հապա հապ կարօտանում են վանկ վանկ հեգել այն լեզուն, որ քաջ յայտնի է աբատասուածներին: Կոյրերը շատ անգամ զուարճութեան ժամանակ պատմում են, թէ մի անգամ Փարիզը այնպիսի սեւ թուխպերով

էր ծածկուել, որ բնակիչները (փոզոյնեռում շրջիկու համար) սահպատեցան դիմել կոյրերի օգնութեան, որոնք միմեռում պատկու վարժ են։ Զգիտեմ, արդեօք սոյպէ այս իրողութիւնը, բայց ... որչա՜փ խրատական է։ Երբեմն ամենապօրեկ մարդն անգամ՝ կարօտ կը լինի հաշմանդամի օգնութեան, որ չի դժուարանում ճանապարհ գտնել չարչարանաց լաբիրինթոսի բազիղների մէջ, ուր որ բախտաւորները անպարտ մոլորւում են։ Եթէ, դուք ճանապարհը կորցրել էք և հարուածոց փորձանքներից ահաբեկուել էք, գնացէք այնպիսիների մօտ, որոնց մշտական ապրանքներ են վիճակուել։ Դուք նոցանից շատ բան կը սովորէք—լոկ միայն մի պարզ համեմատութիւն անելով, և կը գտնաք հանդստացած։ Գիտէք թէ, այդ հաշմերը ոչ միայն ուռնջում են, այլ և ընդելացել են իրանց ուռնջութիւններին և կարեկցութիւն են սովորել ուռնջութեան դպրոցում։ Ձեզ տեսնելով, նոքա կը ցաւակցին, կը մխիթարեն, այնպիսի բառեր կասեն ձեզ, որ միայն նոքա պիտին ասել։ Նոքա կը մոռանան իրանց մեծ ուռնջանքները և կզրաղուին ձեր փոքր ուռնջանքներով։ Այս երևոյթից աւելի թեթևացնող և սիրտը հովացնող բան չկայ աշխարհքում։

Երբ որ արիւթեան մասին է խօսքս մեր, հնարաւոր է, անյիշատակ թողնել այնպիսիներին, որոնք առել են և յարաժամ առնում են գրեթէ, գերմարդկային արիւթեան օրինակներ, որոնց երկարատև համբերատարութիւնից չանչանալու եմ է, նոյն իսկ ուռնջանքը, ինչպէս որ սակի ընդհանութիւնից չարդ ու փշուր է, լինում՝ մեզ կոփահարող կատար։ Խրատական է, մի հայեացք ձգել այս կողմը։ Այստեղ ափշած հանդիպում ենք այնպիսի իրողութիւնների, որ անհատնելի են մեր մէջ։ Մարդ հիանում է, այսպիսի սրատպող ճնշողութիւնից, այսպիսի հարատևող ապքատութիւնից, և նորա հոգին սկսում է, կամաց կամաց ըմբռնել հին և սուրբ ճշմարտութիւնը, որի յաւիտենական նշանն է, խաչը թէ, աշխարհքի փրկութիւնը չարչարութեան մէջ է։ Օգտագործանքներ, ուժի տատքեանները, հանգիստ ոչնչութեան մարդամէնները, ամէն տեսակ շուայտութիւնները անձնատուր եղած մարդիկ—ձեզ ամէնից կոչում եմ տկարների և թոյլերի դատաստանի առաջ։ Ձեր աչքում հարկաւ գոյութիւն չունին դրքաւ բնական ընտրութիւնը պահանջում է, դոյա հեռացումը կենդանական ասպարիզից—նոյն իսկ ծնուելու օրից, որովհետև անօգուտ և աւելորդ արարածներ են սեպհում։ Եւ եթէ, մարդիկ միայն անատուն կենդանի լինէին, այդպէս էլ կվարուէին։ Բայց ինչն արգելից մի այդպիսի վճիռ դնելուն։ Ինչո՞ւ համար մարդկութեան մեծագոյն ծառայութիւն մատուցանողների կարգում՝ հանդիսանն ակել հաշմանդամներ և տխուսցեալներ։ Ձեր մեծ քարը—անկեան վէմ է։ Այս է, ձեր աներեւոյթ թուլութեան ամենապատուական ապացոյցը։ Ձեր խելքի աշխարհքը՝ նեղ և աւտա աշխարհ է։ Ձեզ չտպիել են անպատմելիները, կոյրերը, խուլերը, ամէնքը, որոնք խեղճ պարսիլի կեանք են վարում և տառապում են։

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԱՊԱԶՕՐԵՒՈՒԹ

ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ

(Wie erziehen wir unsern Sohn Benjamin-ից)։

Այս գլուում պիտք է, տանք ձեռաց մանրը-փոդ, որ հաւաքուելով մանկիմներ կարող է կազմել. մատուցածը բուռ երևոյթին չնչին է, բայց բան ու գործի մէջ մեծապին է, հանրիտանում։ Հետևեալ կանոնները օրական կենաց մանր հանդամանքների յիշատակու թիւն են.

Առաջին կանոն ասում է. Դաստիարակելիս միշտ մի ձևորը միւսին միատան ընկնը պիտի լինի։ Այս լուսաբանելու համար պատմենք մի իրական պէպք։—Մի աշակերտի մասին ուսուցիչը ծնողներին անպատրաստ գանգատել է, միշտ թերի գտնելով նորա ջանքը, վարքը, արդիւնքը։ Վիրջապէս վճռական և վախճանական բողոք ու գարկուեցաւ ծնողական առներ։ Այս առթով մեզաւորի մայրը ներկայացաւ պրոցոյի վերատեսչին և վարժ լեզուով ձառ կարդաց գատաստարակութեան դժբախտ երևոյթի իսկական պատճառի մասին։ Նա հաստատապէս հաւատացնում էր, թէ, ինքը ոչ մի բան չի խնայում և հնարաւորապէս աշխատում է, որ իւր տղան կարդ սիրէ

ջանասէր լինի և լաւ գործէ, սակայն հայրը թոյլ է. ինչ որ ինքը մայրը արգելում է, հայրը թոյլ է տալիս. երբ որ ինքը խիստ միջոցներին է դիմում, նա իւր հայրական թուլութեամբ խափանարար է հանդիսանում: Ուրիշ ձար չկայ, բայց եթէ վերատեսուչը մի ապրուստամակ գրի, հօրը լուրջ խրատելով որ նա հետևէ ուսման թեղայի գաստիարակչական սկզբունքներին և մանուկին ուսման խստութեամբ կրթէ, այն էս մօր առաջնորդութեամբ: Վերատեսուչը մօրը հասկացրեց, թէ ինքը այնքան իշխանութիւն չունի, որ յանձնէ հօրն ու մօր առն ու կնոջ յարաբերութիւնները կանոնաւորել. ինքը միայն խորհուրդ կարող է տալ որ հաշտութիւն և միաբորհուրդ գործելու աշխատեն իրանք անձամբ, առանց դրսի միջամտութեան: Քազաքավարութեամբ և բարեհամբոյր կերպով նա արձակում է մօրը, իսկ ան իւր մանկավարժական անյաջող փորձից հետանում է, տհաճ արատի նկ, ժամից յետոյ առանց պիտենալու թէ, մայրն արդէն այն տեղ է եղել գալիս է մանուկի հայրը վերատեսչին պատմելու թէ, բոլոր խշտաութեան պատճառը ոչ թէ ինքն է, այլ կինը որ մանուկի ամէն կամակորութիւնները կատարում է, երբ որ ինքը հայրը զգում է, ուզում էր որ միշտ պաշպանում է մանուկին երբ որ ինքը հայրը խրատել է ուզում, ապա ուրիշն անհրաժեշտ է, որ վերատեսուչը լուրջ նամակ գրէ մօրը, պատուէր տալով որ նա լաւ խելամտէ իւր գաստիարակչական պարտականութիւնները և հօր չանքերին արգելքներ չդնի, և այլն (տես վերը):—Որքան որ հայրն իւր ձառը շարունակում էր այնքան վերատեսչի ծիծաղը աւելի էր շարժում: Վերջապէս սա բացատրեց հօրը, որ կէս ժամ առաջ մայրը նոյն տեղում նստած՝ ճիշդ նոյն բաներն էր պատմում հօր մասին, ինչ որ նա ինքը այժմ մօր վերայ է ծանրացնում: Այս մարդու աչքերը խշտոր բացուելան դէմքը կարմրեց: Եւ երբ որ վերատեսուչը լուեց, մարդը կատարեալ շարունակ ինչ մնաւն ամբաստանութիւնները, որ խորամանկութեամբ իրանից առած է, կանխել, իսկ բանն իրօք այնպէս է, եղել ինչպէս որ ինքը ծանուցեց. ամէն բանի մեղաւորը մայրն է, և ահա կերթայ տունը և այդ բանը կատարելու համար, վերատեսչը հարկաւորութիւն չունէր խանգարելու, որ մարդ ու կին իրար հետ խօսէին միայն խորհուրդ առնէր հետագայ հօրը, որ այսու հետև աշխատեն իրանց մէկ ձեռքով շինածը՝ միասով չքանդել և եթէ իրանց որդու կրթութեան գործ պատի գները տանեն, այլ ևս մէկը չկարդէ իւր մեղքը միսի վերայ: Միայն Աստուած գիտէ, թէ այնուհետև ամուսնական անհամաձայնութիւնները ինչով վերջացան: Եւ որովհետև ծառը արմատով է ծառ, որդուց էլ շատ բան չէր յուսացուած: Նա հարկաւ այն մարդկանցից մէկը դարձաւ, որոնց բախտով հայրը փոքր ինչ հաւրքսութիւն է, ունենում և որդուն հնար է, տալիս ազատ մնալու գրամ վատակելու հոգսերից:—Այս պատմութեան խրատը պարզ է. մեր որդկերանց կրթելիս մենք պէտք է հոգով ու սրտով միաբան լինինք և իրար համձայն գործենք: Նոյն իսկ եթէ տարբեր կարծիքներ էս ունենանք, մանուկը այդ բանը չգիտէ, իմանայ, ապա թէ ոչ մանուկները այնքան նուրբ զգացողութիւն ունին մանկավարժական աննշանակութիւնների համար, որ զարմանալի հմտութեամբ կը կարողանան իրանց քմայ համեմատ օգտուանել քաղել ծնողաց այդպիսի տարաձայնութիւնից: Ինչպէս ասացինք, ուրիշն թող մի ձեռքը միասին ընկերանայ և երբէք սայլը չէ ծուի երկու ծայրերից:

Առանձին երկրորդ կանոն է. Արիւնդ մի՛ սլլատրիր հայր: Այս կանոն էլ լուսաբանենք կեանքի տեսարանով: Հօրս որդու տէր մի հայր կար, որ կոչում ու պաշտօնը կատարելիս միշտ հանդիսատես լինելու և վայելչութեան ծանրութիւն պահելու կարողութիւն ունէր, բայց երբ որ ճաշին տան էր գալիս՝ այդ մարդը փոխվում էր: Հենց որ նա իւր որդկերանցով շրջապատած սեղանին էր նստում սովորութիւն ունէր գարոցական արդիւնքների մասին նոցա հարցուփորձ անելու, և եթէ, դասերից մէկի մասին անյաջողութիւն էր լսում նա այնպէս էր կատարում որ միշտ օրուայ ծանր աշխատութիւններից կազդուրուելու ժամը՝ ամենատանելի և ախտակարաւոր ժամն էր գտնում. Այնուհետև թէպետ հայրը ինքն իրան խոս

տանում էր հանգիստ ձնալ, սակայն միշտ պարձեալ պիտի էր իւր խոստումը։ Մեծ մասով տեսարանը այսպէս էր բնթանում նստում են սեղանի շուրջ և հայրը հարցնում է, թէ ինչպէս ընթացան դասերը։ Առհասարակ ընտանի եղբայրներից աւագը թերթերն չէր աւանդում։ Իսկ Վիլլին, երկրորդ որդին, յաճախներէն թեղադրութեան մէջ 10 միավոր է արել և «անբաւարար» նշան է ստացել։ Հայրը խոժոռելով որդու վերայ, հետաքննելով հոգին է հանում թէ ինչպէս է այդ պատահել, և բնականաբար կամ խոպոռ պատասխան չի տանում (ապա թէ ոչ, եթէ Վիլլին պիտեներ, թէ սխալները ինչպէս են գոյանում անշուշտ սխալներ չէր դործի), կամ (այս էլ շատ բնական է) մի երևելի յիմար պատասխան է տալիս։ յամենայն դէպս հայրը երկու դէպքից էլ սրանդում է, և այդպէս պղտոր դիմում է մի անելին։ Երբորդ տան կշտամբելու առիթ չի տալիս։ իսկ անբախտ Բուդին, երրորդը, խիստ անբաւարար կերպով է լուծել թուաբանութեան խնդիրը։ Հօր դայրոյթը այս անդամ ամենով աճում է, ճաշը հասել է մինչև արգանակի և խորոված միջոց-ժամանակը. բոլոր ուրիշն յարմար է և տեսարանը դատապատան է դառնում։ Բուդին բանում է իւր ապտակի բաժիններըը, բայց Վիլլին էա՝ որ փորձանքից ազատուել էր, յանուն արդարութեան հաւատարութեան՝ նոյնպէս ապտակներ է ուտում այն էս աւելի կատաղի հարուածներով, երբև անմեղ ձնացած հառաչում։ Ճիշդութիւնը ծայրայեղութեան է հասնում։ Ճաշի ձնացած մասը դառնանում է, ամէնի համար։ բոլոր ուղղակի և անուղղակի մանակցողները այդ բանը անարատանչ համարում են որպէս իրանց ճակատի գիր։ Իսկ հայրը, որ դարձեալ անհաւատարիմ դառնացաւ իւր խոստմանն, ինքն իւր մտածմունքների մէջ ընկնելով՝ ասում է. «Ի՞նչ օգուտ, եթէ, մենք պեդեկիկ կանոններով ենք մեզ կապում բայց անզգաստ բոպէներում աւելի մեծ հեռանդով քանդում ենք կանոնները»։ Երեկոյին հայրն ու մայրը թատրոն են գնում Համլետ տեսնելու համար։ և երբ որ սա՝ բեմի վերայ տեսարան ներկայացնելուց փոքր առաջ՝ Հորացիոյին ասում է.

«Ծանր ինձ մի մարդ, որ չէ իր կրքերի տերին,
Ես կը կրեմ նորան սրտիս կենդրոնում,
Իմ սրտիս սրտի մէջ, ինչպէս կրում եմ քեզ»,

այն ժամանակ հայրը իւր լծակցից յանկարծ մի մեղմ ապդարարութեամբ ստանալով՝ ինքն իրան սկսում է խորհել. «Գէթ այսուհետև մարդ եղիր»։ որով ընդ միշտ սրբատպնդում է հին Ադամից մերկանալ և հաւատարիմ ծնալ «արիւնդ մի պղտորիր, հայր» կանոնին։

Առանին երրորդ կանոն է. Մի՛ չափազանց դատապարակիր։ Իսկ դատապարակիչներից շատերը, մանաւանդ մայրերը, գործը փչացնում են այն բանով, որ մանրակրկիտ բազմազրաց թերութիւններով դատապարակութեան համբն են տանում, և հենց այն բոպէներում, երբ որ աւելի հարկաւոր է դառնում իրանց խելացի միջամտութիւնը, նոքա ծատմրից շլացած՝ անատամը չեն տեսնում։ Ես ճանաչում եմ մի ժիր մարդ, որ հոգով շնորհալի է, գործում է խղճով և հարուստ է տեղեկութիւններով։ Ես մի անգամ ինձ մօտ պատմում էր, թէ խիստ դժուարանում է, ընդհանուր ճաշկերոյթների ժամանակ միշտ յարմար նիւթ գտնել վայելուչ զրուցաբանութեան համար, թէ, միշտ աշխատում է կանխաւ ընտրել և պատրաստել իւր խօսելիք առարկաները. թէ, իւր պատկերի վարժապետն էլ այդ բանին նպաստել է ձգտում, բայց շատ անգամ հնարք չեն ունենում բան գտնել։ Վերջապէս հարցրի ինձանից, թէ, ես ճաշելու ժամանակ ինչի՞ մասին եմ խօսում գաւակներիս հետ։ Այս հարցմունքը մտամբ անակնկալ էր ինձ համար։ ես անպատրաստ էի ընդհանուր կերպով հարցմունքին լուծում տալու, իսկ իմ սեղանի խօսակցութիւնները մի վերնագրով նկարագրելու՝ անհնար էի համարում։ Սակայն շփոթութիւնից դուրս գալու համար, պատասխանեցի. «Եթէ առձեռն բան չը գտնուի, ես խօսում եմ փող փչելու և շուրին շրջացնելու մասին, իսկ առհասարակ ծոդնում եմ որ խօսակցութիւններն ինքնին կազմուին, ինչպէս որ պէտք բերէ, միշտ աշխատելով խուսափել այնպիսի նիւթերից, որոնք ուրա-

խութեան մէջ թոյն կարող էին խառնել կամ իմ որդւոց պիտանի չէին կարող լինել։ Բայց յաջորդ օրն պիտանի էին կարող լինել։ Բայց յաջորդ օրն պիտանի էին կարող լինել։ Բայց յաջորդ օրն պիտանի է

մանաւորապէս բաւարար հիմք ունենալու։ Ինչքան միամիտ ենք կարծելով իրր թէ, մեր սանը պէտ է ևս չի հասկանայ մեծերի խօսակցութիւնները։ Բայց և այնպէս այդ պատիկները մեծերի պէս ականջ ունին։ Ո՛րքան մարդիկ չարախօսւում են առանց պատասխանատուութեան, որով աճալ կարծիքներ են ստանում նաև իրանց շրջապատող մանուկները։ Գէօթէին մի անգամ իւր ծանօթ փոքրիկ մանուկները չպղծուեցնելու, որովհետև իրանց ծնողները պարապատութեամբ Գէօթէի վերայ բիծ չին պրել։ Մենք առ հասարակ սովորութիւն պիտի ունենանք, երբէք մեր ընկերակիցներին չարախօսութեամբ չպատել, եթէ ճշմարիտ տեղեակ չենք բանի հանգամանքին, բայց եթէ տեղեակ էլ լինինք, աւելի լաւ կանենք, եթէ, նախ մեզ ու մեզ հարցնենք, թէ ի՞նչ խորհրդով ենք պատմում այս բանը։ Ոմն մեր պատկառելի նկատմամբ նայն իսկ այս հարցմունքը աւելորդ պիտի լինի, որովհետև նոցա առաջ մեր լեզուն միշտ պէտք է լիովին սանձի տակ պահուի, ծնողական տունն ու հարազատների շրջանը պէտք է պատնայ պատշաճից և վայելչութեան՝ ուրեմն առաւելապէս լեզուի պատշաճից և վայելչութեան՝ սրբազայր։ Մանաւանդ որ մեր մանուկները զմբախտաբար շատ վազ են հարկադրւում բամբասանաց աշխարհքը մտնել։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ։

ԱՑԵՄԲԵՐ ՄԵԾԻ ԳԻՇԵՐԱՒԱՑ ԱՍՈՒՊՆԵՐԸ.

Առաջիկայ Նոյեմբերի 1-ին տեղի պէտք է ունենայ մի գեղեցիկ աստեղագիտական երևոյթ, որի հետ ցանկանում ենք ծանօթացնել Արարատի յարգելի ընթերցողներին։ Մեր յօդուածը կը լինի համառօտ և հասարակութեան մատչելի ոճով։ գուրս ենք թողնում գիտական նուրբ հաշիւները, որոնք մասնագէտներին են միայն հետաքրքրում։ Բայց որպէս զի մեր ասելիքները աւելի որոշ և հասկանալի լինեն հասարակութեան, թոյլ ենք տալիս մեզ դնել նախ մի քանի հիմնական ծանօթութիւններ Կեպլերի աստեղագիտական օրէնքների, տիեզերական ձգողութեան, գիսաւորների կազմութեան ևլն ևլն վերայ։

Այս լայնածաւալ տիեզերքը կարելի է համեմատել մեր ձեռքում գտնուած մի արևիցէ մարմնի հետ. ինչպէս որ մի մարմին բազկացած է հիւլէներից, որոնք իրար հետ չեն կցուած, այլ ծակոտիկներով բաժանուած են. նոյնպէս նաև տիեզերքը լցուած է բազմաթիւ երկնային մարմիններով (սրանց մէջ նաև մեր երկիրը)։ Աւելին եթէ տիեզերքն առնենք իրր մի մարմին, երկնային մարմինները կը լինին նրա հիւլէները և նրանց միջի անջրպետները ծակոտիկներ։

Երկնային մարմինները իրանց մէջ ունեցած ձանրականութեան պատճառաւ բաժանուում են խմբերի. մի քանիսը գտնուում են այս խմբի մէջ, ուրիշները գտնուում են մի ուրիշ խմբի մէջ։ Այս խմբերը աստեղագիտութեան լեզուով կոչուում են դուրիւն, ինչպէս օրինակ Արեգակնային դուրիւն։ Դուրիւն ասելով պէտք է հասկանալ պարզապէս, թէ այս ինչ այս ինչ մարմինները մի ուրիշի բոլորտիքը կատարում են մի շրջան, որից յառաջ է գալիս դուրիւնը։

Այն մարմինները, որ միւսների բոլորտիքն են գտնում՝ կոչուում են մոլորակներ, իսկ այդ միւսները՝ արեգակներ։ Նաև մոլորակները կարող են ունենալ արբանեակներ. իսկ գարձեալ արեգակները ամբողջ իրանց դուրիւնամբ գտնուում են ուրիշ արեգակների շուրջը։

Բոլոր այս շրջանների օրէնքները գտնուել են, որոնք թէև շատ կնճռոտ են, բայց ունին կատարեալ մաթեմատիկական ճշգրտութիւն։ Մենք պէտք է յիշենք այստեղ Կեպլերին՝ որ ամէնից նշանաւորն է աստեղագիտական օրէնքները գտնողների շարքում։

Կեպլերի օրէնքների հետևութիւններն են.

1. Մի մոլորակի շրջանը մակարդակային կոր գիծ է.

2. (Rayon vecteur) մակարդակային արագութիւնը հաստատ է.

3. Այս շրջանը ձևացնում է մի էլլիպս՝ որի վառարաններից մինը գրաւել է արեգակը.

4. Տարբեր մոլորակների համար մակարդակային արագութիւնը համեմատական է շրջանների (paramètre) քառակուսի արմատին։

Կեպլերի օրէնքներից փոխարինաբար հետևում է թէ՝

Երբ մի մոլորակ ենթակայ է հաստատ մի կէտի ձգողութեան և իր հետաւորութեան քառակուսուն հետ խոտորնակ համեմատական է,

1. Նորա շրջանը կը լինի մակարդակ և մակերևոյթ օրէնքը տեղի կունենայ.

2. Շրջանը կը լինի կոնային մի հատուած՝ որի ձգողութեան կեդրոնը վառարան է.

3. Կոնային հատուածը կարող է լինել էլլիպս, զուգորդ (parabole) կամ հիպերբոլ.

4. Վերջապէս նոյն ձգողութեան ենթակայ այլեւայլ մարմինների մակերեսային արագութիւնը շրջանների paramètre-ի քառակուսի արմատներին համեմատական կը լինի:

Վերեւ ասածներից հետեւում է թէ արեգակը իւրաքանչիւր մոլորակի ներգործում է այնպիսի փութացում՝ որ խոտոր համեմատական է նրանց ունեցած հետաւորութեան քառակուսի արմատին. նոյն օրէնքը տեղի է ունենում Երկակի և Լուսնեթագի դրութեան մէջ: Սրանից կարելի է ուրիմն հետեւցնել թէ երկու մոլորակներն ունին նոյն յատկութիւնը՝ ինչ որ արեգակը. թէպետև հետաւորութեան միութեան ներգործած փութացումն այս երեք մարմինների մէջ միեւնոյնը չէ. Վերջապէս գիտենք որ երկիրը իր արբանեակ լուսնին ներգործում է կեդրոնին ուղղուած մի փութացում: Ենթադրելով որ երկիրը Արեգակի, Երեակի և Լուսնեթագի յատկութիւն ունի, հետաւորութեան մի միութեան վրայ գրուած մարմնին պէտք է ներգործէ մի փութացում: Ուրիմն Արեգակը, Լուսնեթագը, Երեակը և Երկիրը իւրաքանչիւր մարմնի վրայ ներգործում են դէպի կեդրոն ուղղուած՝ իրանց հետաւորութեան միութեան քառակուսուն հետ խոտոր համեմատական մի փութացում: Ուրեմն և ներելի է մնկարկել սրանից թէ կայ նիւթի մի ընդհանուր յատկութիւն՝ որի համար նեւտոն այսպիսի սահման է տուել.—Մի նիւթի երկու որեէ մասնիկները իրար վերայ ազդում են իրանց զանգուածին ուղիղ համեմատական և իրանց հետաւորութեան քառակուսուն խոտոր համեմատական փոխադարձ ձգողութիւններ. Ահա է Տիեզերական ձանրականութեան սկզբունքը:

Ահա սկզբունքը մարդկային մտքի գեղեցկագոյն աշխարհակալութիւնն է. գիտութեան առարկան է յիրաւի գտնել երեւոյթների փոխադարձ յատկութիւնները և նրանց օրէնքները սահմանել. ձանրականութեան սկզբունքը մոլորակների արեգակի շուրջ և արբանեակների մոլորակների շուրջը կատարած շրջանառութեան, ինչպէս նաև երկրի վրայ արձակուած մարմինների, օրէնքները ամփոփում է մի միակ սահմանի մէջ՝ որ սակայն հիանալի կերպով պարզ է. Նրա սեպհական կիրառութիւնը հաշուի մէջ բաւական է կատարեալ ճշգութեամբ գուշակելու աստղերի դիրքը տիեզերքում, որչափ էլ որ երկար լինի նրանց շրջանը: Աստեղագիտական հնդիրները վերածուած են այլ եւս պարզ հաշուի. չկայ ուրիշ գժուարութիւն, բայց եթէ մաթեմատիքական վերածութիւնների անկատարութիւնը.

Տիեզերական ձանրականութեան պատճառաւ երեւմն պատահում են այնպիսի երկնային մարմիններ՝ որոնք իրանց սեպհական ճանապարհից շեղուելով, ստանում են մի ուրիշ շրջան. սրանք են գիսաւորները. Գիսաւորների խոտորումը երբեմն ժամանակաւոր է. երբ մի գիսաւոր անցնում է մի մոլորակի մօտից, այս մոլորակը քաշում է գիսաւորին և իր սովորական ճանապարհից մի փոքր շեղում. բայց այս շեղումը գադարում է մոլորակի կամ գիսաւորի հետանալովը. գիսաւորը ստանում է կրկին իր ուղղութիւնը մոլորակից հետանալուց յետոյ: Գիսաւորներն ընդհանրապէս երկնային այնպիսի մարմիններ են, որ նրանց զանգուածը նուրբ և անպայտ է, հետեւաբար և նրանց ձգողական զօրութիւնն էլ մի անձի հետ համեմատաբար շատ աւելի թեթեւ է՝ իրանք աւելի ենթակայ են ձգուելու, քան թէ ձգելու. այս պատճառաւ է որ երբ գիսաւորը մոլորակի մօտից է անցնում, խոտորում է ո՛չ թէ այն մոլորակը, այլ գիսաւորը:

Գիսաւորների շրջանն ընդհանրապէս զուգորդ (parabole) է. նրանք տիեզերքի խորքից գալով և արեգակի մօտից անցնելով՝ գարձեալ հետանում են. Մեր վերեւ ասած եզրակացութեամբ եթէ այս շրջանում պատահեն մոլորակների, իրանց շրջանից կը խոտորուին և կստանան մի ուրիշ որոշ շրջան, իրանց հին զուգորդը (parabole) կը վերածուի էլլիպսի. գիսաւորները այդ ժամանակ կը գառնան պարբերական և կը մնանն մեր արեգակնային դրութեան մէջ:

Աստեղագիտութիւնը կարող է հաշուել թէ այս կամ այն գիսաւորը ե՞րբ պէտք է գայ. Նրա շրջանի մեծութիւնը կախում ունի իրեն չափչտակող մոլորակի դրութիւնից. եթէ մոլորակը գտնւում է արեգակից հետու, նրա գիսաւորի շրջանն էլ կը լինի մեծ. եթէ մոլորակը մօտ է արեգակին, նրա գիսաւորի շրջանն էլ կը լինի փոքր: Այս վերջին կարգի գիսաւորները պարզ աչքով անտեսանելի են.

Կան մի քանի պարբերական գիսաւորներ, որ չափազանց մեծ շրջան ունին. այս կէսի վերայ հիմնուելով պէտք է ուրիմն ենթադրենք թէ նեպտունից հետու էլ՝ որ արեգակնային դրութեան մէջ ամենահետաւոր մոլորակն է, կան ուրիշ մոլորակներ գարձեալ մեր արեգակնային դրութեան մէջ, և այն հետաւոր գիսաւորները սրանց գերածնուած են. Այսպէս օրինակ Լուսնեթագը գերել է իրենը գիսաւորներ, Երեակը 3 իւտորի գիսաւորը, Ուրանոսը 1866-ի գիսաւորը և նոյեմբ. 1-ի երեքշորս աստղերը. Նեպտունը գերել է Հալլէյ—և—Պոնսի գիսաւորը.

Այն գիսաւորը որ 1862-ին երեւացել էր, որի շրջանաւութիւնը 121 տարի է և 1984-ին կրկին պէտք է գայ, հաղար տարի է, որ քայքայման մէջ է. ամէն տարի երկիրը նրա շրջանի վրայ հանդիպում է նրա բեկորներին, այս բեկորները ուրիշ

բան չեն, բայց հինէ տիեզերական փոչիներ՝ որոնք իրանց շրջանում արագութեամբ մտնելով երկրի մթնոլորտի մէջ՝ վառուում են և ներկայացնում յուլիս 29-ի գիշերը երևացած աստղերը՝ որոնք կոչուում են Պերսեական, Պերսէոսի համաստեղութեան տակ երևալուն պատճառաւ:

Նոյն շրջանի վերայ կայ նաև 1532-ի գիսաւորը՝ որ վերադարձաւ 1661-ին, որ 1789-ին էլ երևացած լինելու էր և որ պէտք է գայ 1919-ին, կասկածելի է թէ արդեօք պերսէականները սրանց չէին պատկանում:

Այս երկու գիսաւորների արեգակից ունեցած հեռակէտը Երկրիս Արեգակից ունեցած հեռաւորութիւնից 48 անգամ աւելի է, այսինքն 7 միլիար հազարամետր, և այդ ճշդութեամբ մատնանիշ է անում, թէ Նեպտունից այն կողմ գեռ մի անծանօթ մոլորակ էլ կայ՝ որ գերել է այն:

Մենք գարձեալ կարող ենք սպասել Նոյեմբ. 1-ից 2 լուսանալու գիշերը տեսնել երկինքն ակօսուած բազմաթիւ աստղերով, որոնք յառաջ են գալիս Առիւծ համաստեղութեան պատկանող երկու աստղերի մէջտեղից՝ իրր ծագման կէտից: Այս աստղի անձրևները աւելի առատութեամբ վերանորոգուելու են միւս տարի. նրանք եկել են անցեալ տարի էս, բայց եկող տարի լինելու է մեծագոյնը (maximum): Միլիոնաւոր աստղերի այս հոյլը՝ որոնք մետէորական մարմնիկներ են, մի երկար շրջանով դառնում են արեգակի բոլորտիքը և կատարում են այդ շրջանը 33 1/4 տարուայ մէջ՝ Ուրանոսի հեռաւորութեան սահմանում և ոչ աւելի հեռու, ինչպէս հաշուել են Սքիապարէլլի, Լը Վէրրիէ, Հ. Ա. Նեւտն և Ադամս միաձայնութեամբ, Ուրանոսի գերած երկու գիսաւորներից մէկի մասն են:

Մենք, ինչպէս ասացինք՝ 33 1/4 տարին մի անգամ պէտք է հանդիպէինք այս մարմնիկներին՝ եթէ նրանք հարիւր միլիոնաւոր հազարամետր տրամագծութեան վրայ ցրուած չը լինէին այս պատճառաւ է որ նրանց երևումը շարունակուում է մի քանի տարիներ. ուրեմն այս տարի հանդիպածները նրանց յառաջապահներն են և երևում է թէ նոյն շրջանի վերայ ուրիշ շատ խումբեր էլ կան. գլխաւոր խումբը պէտք է գայ յաջորդ տարին. արդէն աշխարհի ամէն կողմերը պատրաստութիւններ են լինում նրանց լաւ դիտելու. իսկ այս տարուայ քննութիւնները կը լինին իրր վարժութիւն յաջորդ հետազօտութիւնների համար:

Այս հոյլերը, որ Հինացիները տեսել են 1698, 1602, 1533, 1366, 1202, 1101, 1002, 934, 902 և 845 թուականներին, առաջին անգամ Հումբոլդտ և Բոնպլանդ աստեղագէտները դիտել են Կումանայում (Ամերիկայ) 1799 նոյն. 1-ին, Կէս գիշերից առաջ սկսած մինչև առաւօտեան ժամը 4-ը երկինքը գրեթէ բոլորովին ծածկուած էր այդ աստղներով. Կումանայի ժողովուրդը վախենում էր և տեսակ տեսակ կարծիքներ անում. նոյն երևոյթը տեսնուել է ամբողջ Ամերիկայում, Բրազիլիայում, Լարրադորում, Գրէնլանդում, Գերմանիայում և Գրէնլանդում 1833 թուականի նոյ. 1-ին տեսնուեցաւ Ամերիկայի արևելեան եզերքից, Մեկսիկայից մինչև Հալիֆաքս. Միացեալ Նահանգների Նիու—Հաւէնը քաղաքից ուսուցչապետ Օլմսթիդ քննութիւններ կատարեց. Նա նմանեցնում է այդ երևոյթը հրախաղութեան. աստղերը երբեմն կրանց հետևը թողնում էին փոսփորային հետքեր սրանք տեսնուեցան մինչև անգամ արեգակը ծագելիս և շատ տեղեր յետոյ էս այն աստիճան բազմաթիւ էին նրանք, որ կարելի չէր համարել. Երբ այս երևոյթը շատ տկարացաւ. ուսուցչապետը 15 րոպէում կարողացաւ համարել 650. այս թիւը իր ասածի համեմատ հորիզոնի 1/10-ն անգամ չէր. և ամբողջ խումբի հաւիւ 2/3-ը. այս հաշուով ամբողջ խումբը լինում է 866, այսինքն ամբողջ կիսագնդի համար 8660՝ որը ժամուայ մէջ տալիս է 34,640. այդ երևոյթը 7 ժամ տևել էր, հետևաբար ամբողջի թիւը հասնում է 240,000-ի:

Յաջորդ տարուայ նոյ. 1-ին Լիմոժի գործաւորները տեսան նոյն աստղները և սոսկափահար փախուստ տուին. Լը Վէրրիէ որ այն ժամանակ գեռ աշակերտ էր Պարիզի բազմարուեստեան վարժարանում, Բայէօիյ (Bayux) Կան (Caen) ճանապարհի վերայ հաստատեց թէ նրանք իրար այնպէս էին յաջորդում որ հաշուելու համար ժամերով սպասել հարկ էր:

1766, 1799 և 1833 թուականների յաջորդութիւնից աստեղագէտ Օլբերսը կարծեց թէ ընդունք ունեն 33—34 տարուայ մի պարբերականութիւն և 1837 թուականից սկսած ազդարարեց թէ 1867 թուականին մի այդպիսի տեսարանի հանդիսատես պէտք է լինին հետաքրքրաբար: Գուշակութիւնը մի տարի առաջ կատարուեցաւ:

Այդ տարի նոյ. 1-ից 2 լուսանալու գիշերը Պարիզում շատ գեղեցիկ էր. երեկոյեան ժամը 9-ին երկինքը բոլորովին բացուեցաւ և ժամը 11 մէկին առուպները սկսեցին րոպէ առ րոպէ շատանալ. Առիւծի աստղը՝ որը նրանց բղխման կէտն է, այն գիշեր Պարիզում ծագում էր կէս գիշերին, և այս պատճառաւ էր, որ նոյն երևոյթն էլ կէս գիշերից յետոյ տեղի ունեցաւ: Գամիլ Ֆլամարիոն իր 1896 թուի Հոկտ 23-ի Hôtel de société Savante-ում արած բանախօսութեան մէջ՝ որից քաղում ենք մեր այս տեղեկութիւնները, ասում է. «Ես գրեթէ կէս ժամ դիտել եմ. երկինքը ամբողջովին ծածկուած էր նրանցով. ամպերի խումբ տակից գուշակում էր երբեմն թէ աւելի պայծառագոյն աստղեր անցնում էին միևնոյն ուղղութեամբ՝ փայլատակելով ամպերի վերևից իրրև երկար փայլակներ»:

Անգղիայում Գրինիչի դիտարանից ժամի 9-ից մինչև կէս գիշեր տեսել են 193 աստղ. կէս գիշերից մինչև ժամի մէկը՝ 2032. մէկից երկուսը՝ 4860 և երկուսից հինգը 1400։ Օկֆորդում մեծագոյն աստղը նման էր մի հրթիռի. Սպանիայում և Մալթայում էլ շատ լաւ երեւում էր իսկ Միացեալ Նահանգներում երկինքը արդէն գոյութիւն էր։

Այդ տարօրինակ տեսարանը 1833-ից աւելի թեթև էր. երկինքը ամպոտ լինելու պատճառաւ Պարիզի կազմակերպած դիտարանի դիտողութիւնները տուին 75 աստղ. Իտալիայից Պր. Պեցա գրել էր թէ աւելի առատ չէին, Լաւագոյն էին Point-à-Pitre-ի դիտողութիւնները, նոյն օրը պատահեցաւ մի երկրաշարժ, ինչպէս 1766-ին Կուամանայում, որ Կուամանայի ժողովրդին մեծ երկիւղ էր պատճառել։

Ասացինք թէ մէտէորական այս հոյլը՝ որը կը կոչենք Ասիածական, ինչպէս միւսները Պերսէական-տիեզերական փոշիների հսկայական մի կոյտ է և անտեսանելի. նա ոչ միայն յատուկ լոյս չունի, այլ և բաւական խիտ չէ՝ որպէս զի արեգակի լոյսը անդրադարձնէ. մենք այդ հոյլի ներկայութիւնը զգում ենք երբ նա մտնում է մեր մթնոլորտի մէջ. այնպէս որ եթէ մեր մթնոլորտը չը լինէր, նրա մասին մենք տեղեկութիւն չպէտք է ունենայինք։

Այս տիեզերական մարմնիկները շատ փոքր լինելով՝ նման են փոշու շամանդաղներին, որոնք վառուելով անցնում են մեր մթնոլորտի բարձունքներից, միջին հաշուով 100 հազարամետր վերևից. նրանք գալիս են մեծ արագութեամբ, այսինքն մի վայրկեանի մէջ 50—70 հազարամետր նրանց շարժումը յամրանում է օդի դիմադրութիւնից, որը ինչքան էլ անօսրացած լինի, լուսաւոր ջերմութիւն է յառաջ բերում. Թռչող աստղը երբեմն ըղորուվին սպառում է իր անցքի ժամանակ և երբեմն շարունակում է իր ընթացքը մթնոլորտից դուրս էլ՝ ուր անտեսանելի է։

Այն հոյլը որ ծնունդ է տալիս նոյ. 1-ի թռիչ աստղերին, շրջում է մի շատ երկար էլլիպսի վերայ և երկրի շարժման հակառակ ուղղութեամբ. նա այս ուղղութիւնը ստացել է Ուրանոսից գտնուելուց յետոյ, որից առաջ նրա շրջանը գուգորդ (parabole) էր և երկրի շարժման ուղղութեամբ. նոյ. 2-ի առաւօտ այս թռիչ աստղերը հանդիպում են դէմ առ դէմ մեր մոլորակին, երբ սա Առիւծ համաստեղութեան է ուղղուում. Հոյլը աւելի ընդարձակ է քան թէ մեր երկիրը՝ որ նրանց միջից անցնում է իբրև մի գնդակ արագաթռիչ ճանճերի խմբի միջից. Հոյլերի շաւիղները իրար զուգահեռական են, և եթէ մենք նրանց տեսնում ենք մի կէտից ցրուած, այդ ուրիշ բան չէ, բայց եթէ տեսողութեան արգիւնք. Նոյեմբ. 1-ին երկրի թաւալման արագութիւնը Կապլերի օրէնքներին համեմատ մի վայրկեանի մէջ 30 հազարամետր է. իսկ մետէորական մարմնիկների արագութիւնը այս թուի և $\sqrt{2}$-ի արտադրեալին հաւասար է, այսինքն $42\frac{1}{2}$ հազարամետր ուրեմն հանդիպման արագութիւնը կը լինի նրանց գումարը՝ $72\frac{1}{2}$ հազարամետր։

Մետէորական օղակը (anneau) որ պատկերացնում է այդ երևոյթը, մի հաստատ դիրք չէ պահում միջոցի մէջ. այդ օղակի և երկրիս շրջանի հատման կէտը կամ աստեղագիտական լեզուով օղակի կապը փոքր առ փոքր տեղափոխուում է երկրի շրջանի երկայնութեան վերայ, նոյն իսկ երկրի շարժման ուղղութեամբ. Այս շարժումը առաջ է գալիս թռչականների մի յատկաւոր յատկութիւնից, որի պատճառը մեծ մոլորակների կատարած ազդեցութիւնն է այս օղակի վերայ. Նոյ. 1-ի մետէորների շրջանը լինելով $33\frac{1}{4}$ տարի, մեծ առանցքի երկայնութիւնը կը լինի երկրիս արեգակից ունեցած հեռաւորութեան հաւասար. իսկ հեռակէտը սրա $19\frac{1}{2}$ անգամը, այսինքն ճիշտ Ուրանոսի հեռաւորութիւնը. Սրանից հետևում է թէ մետէորները հանդիպում են գրեթէ երկրիս շրջանին, իսկ հեռակէտի հոյլերը Ուրանոսի շրջանին. միւս մոլորակներին (Հրատ, Լուսնթագ, Երևակ) չեն հանդիպում, վասն զի օղակի մակերևոյթը խաչարման ծիրի վերայ $16^0\ 46'$ հակում է. Նշանակում է թէ հոյլը կարող է ծաւալել իրրև հաղորդակցութեան միջոց Ուրանոսի և մեր մէջ, ինչպէս գերուելուց առաջուրիշ երկու արեգակների տուեց. Այս հակում շրջանի երկայնութեան վերայ մետէորները ճանապարհորդում են մի այնպիսի հոսանքում, որ Արեգակի մօտից անցնելիս երկարում է և նրանից հեռանալիս կարճանում է. Երբ հոյլը անցնում է երկրի շրջակայքից, նրա լայնութիւնը 200,000 հազարամետրի մօտ է. իսկ նրա երկայնութիւնը այնչափ մեծ է, որ նրա անցքը՝ մի վայրկեանում $12\frac{1}{2}$ հազարամետր կամ մի ժամում 153,000 հազարամետր արագութեան հակառակ, երկու տարուց պակաս չէ տևում. վերջապահները գտնուում են մեր շրջակայքում, երբ յառաջապահները գտնուում են արդէն Լուսնթագի և Երևակի մէջտեղում։

Այս առատ հոյլը շատ տարիներ է որ յառաջ է գալիս դէպի երկրի շրջանը, նրա յառաջապահը պէտք է հասնի 1899-ի գարնան, բայց իր շրջանի խաչարման ծիրի վերայ ունեցած հակման պատճառաւ երկիրը շատ հեռու պէտք է լինի այդ ժամանակ և չպէտք է հանդիպի. բայց հետևեալ տարի, այսինքն 1900 թուականի նոյ. 1-ին, միջօրէականի առաւօտեան ժամի 6-ին, Թռչուն աստղերի մի տարափ նման 1799-ի, 1833-ի և 1866-ի տարափներին, գրեթէ դէմ առ դէմ պէտք է գայ և պէտք է խոտորնակի անցնի մէջտեղից. Քանի որ այս երկու շրջանները նոյն թռչականին իրար կըտ-

րում են, մինչ արդէն այս տարի կարող ենք հանդիպել այդ հոլերին նոյն ճանապարհի վերայ. կարելի է որ հոլի մէջ գտնուի մի մեծ երկնաքար որ երկրի մի կողմը ջախջախէ. սա թէպէտ և անկարելի քան չէ, բայց փիչ հաւանական է, որովհետև ամենամեծ թռիչ աստղը հազիւ մի քանի գրամ է կշռում. Կարելի է հաշուել հոլերի դիրքը իրանց շրջանի վերայ այս ինչ թուականին. սրինակի համար մենք կարող ենք իմանալ թէ այս րոպէիս նրանք որտեղ են գտնուում:

Այժ մի գիտաւոր էլ՝ որ գնում է նոյն շրջանը, միևս մի քիչ աւելի արագութեամբ, այն է 1865-ի տարեգլխին արեգակի մօտից անցնող գիտաւորը՝ որի ժամանակաշրջանը 33 տարի 77 օր էր գրեթէ և որ պէտք է գայ յաջորդ տարի մարտի 5-ին, պայմանաւ որ մոլորակները չեղում առաջ չը բերեն. Այս գիտաւորը նոյեմբ. 4-ի թռչուն աստղերի հետ սերտ յարաբերութիւն ունի, ինչպէս որ 1862-ի գիտաւորը յուլիս 29-ի և ինչպէս Բիէլայի գիտաւորը նոյ. 5-ի հետ. Ազգապարելի աստղագէտի ամենազգեցիկ գիւտն էր, որից եզրակացուում է թէ թռչուն աստղերը գիտաւորների բեկորներն են՝ ինչպէս վերև ասացինք. Ահա այսպէս 1896, 1897, 1898 և 1899 տարիներում հոլերի երկրի կեդրոնից ունեցած հեռաւորութիւնն էլ հաշուած է (Տես Փամիլ Ֆլամարիոնի 1894 տարուայ յուշագրերը). յայտնի տեսնուում է որ գետ ինքը երկրից շատ հեռու է, բայց հոլը՝ այն աստիճան տարածուած է որ մենք կարող ենք հանդիպել յաոաջապահներին. կարելի է որ ուրիշ հոլեր էլ գտնուին նոյն ճանապարհի վերայ. Եւ արդարև աստեղագէտները իրանց ուշադրութիւնը դարձրած են այս կէտի վերայ. Ջոնստոն Ստոնէյ կարծում է թէ այս հոլերը որչափ որ անտեսանելի են, դարձեալ կարելի է լուսանկարել փորձել. ապակիները երկար ժամանակ երկնքի այդ մասի դէմ դնելով. ինքը յանձնարարում է կարելի եղածին չափ ստոյգ որոշել Աւիւծականների առաջին երևման օրն ու ժամը, և մեծ մեծ ուղղութիւնը, Փեննինգ էլ մի կատարեալ վերլուծութիւն է արել.

Ինչպէս որ ասացինք այդ մետէօրները չեն կազմում մի խիտ կոյտ, այլ տարածուած են իրանց երկար շրջանի վերայ. այս բանը առաջ է գալիս իրանց անհատական արագութիւնից. նրանք որ արագ են, առաջ գնացած են, իսկ նրանք որ յամր ընթաց են, յետ մնացած. վերադարձին երկիրը խանգարում է նրանց և ցրուում է՝ նոյնպէս Լուսընթագի, Երևակի և Ուրանոսի հեռաւոր ազդեցութիւնը. Դարից գար հոսանքը տարածուում է իր շրջանի երկայնութեամբ. եղել է ժամանակ որ ինքը կազմում էր խիտ հոլ, այդ ժամանակը շատ հեռու չէ ըստ ժամանակագրութեան, որովհետև հակատակ պարագային հոլը մի օրակ գարձած պէտք է լինէր և այլ ևս գոյութիւն չպէտք է ունենար. Քայքայումը վաղուց չէ որ սկսուած է. այս նոր հոլը գօրաւոր մի խանգարիչ պատճառ ներմուծուած է մոլորակային գրութեան մէջ՝ պարբերական գիտաւորների նման. վերլուծելով այս շրջանը Լը Վէրրիէ գտել է թէ Յ. Ք. 126-ի փետրուարի վերջին Ուրանոսին շատ մօտեցած էր. այս ժամանակ նա գալիս էր անհունից և հաւանաբար գնացած էր, ինչպէս գիտաւորները՝ որ համեմատաբար բաւական խտութիւն ունին Ուրանոսի ազդեցութեամբ հոլը ստացել է էլլիպսական շրջան և մարմնիկների անհաւասար արագութիւն, և այս ազդեցութիւնը դերապանցելով հոլի ընդհանուր գանգուածի ձգողական գօրութեանը՝ հոլը քայքայել է շրջանի վերայ տարածուելով, իսկ յետոյ երկրի ազդեցութեամբ աւելի ևս խանգարուել է: Տրման տարածութիւնը մի ժամանակաշրջանից մինչը մեծանում է և մի օր պէտք է օղակը փակուի. այդ ժամանակ ամէն տարի նոյ. 2-ի թռիչ աստղերը պէտք է երևան, թեթև՝ բայց հաւասար. Ուրեմն եթէ Ուրանոսը ճանապարհի վերայ հանդիպած չլիներ, հոլը պէտք է շարունակէր իր ընթացքը աբեգակի բոլորտիքը և անհունութեան մէջ պէտք է երթար. բայց Ուրանոսը մեր գրութեան մէջ է գետնելով, և նոյն ազդեցութիւնը կամաց կամաց տեղափոխում է շրջանը մոլորակային գրութեան ուղղութեամբ. ամէն անգամ որ հոլը երևում է, երկիրը բաւական թեքում է այն, և անշուշտ կայ բաղմաթիւ ակօսներից բաղկացած մի օղակ՝ որի հեռակէտը գտնուում է երկրի մերձակայքում. Երկիրը արեգակի մօտ լինելով՝ ոչ մի գիտաւոր չէ գերել. բայց Լուսընթագը, Երևակը, Ուրանոսը, Նեպտունը և անդրնեպտունեան անծանօթ մոլորակը նրանցից շատերը գերել են, երբ նրանց հեռակէտը գտնուել է իրանց շրջանի մօտերը, ինչպէս որ վերև համառօտ խօսել ենք. Բայց այն թեթև մետէօրները՝ որ մեծ մոլորակներին անպատճառ թեքում են նրանցից, Կան շատ մետէօրներ՝ որոնց հեռակէտը երկրի շրջանի վերայ է. այստեղից մինչև արեգակը եղած միջոցի մէջ գտնուում են միլիարդներ և Արուսեակի խառար սկաւառակը ստորագրուում է (se projeter) հենց այս միջոցում, որ լուսաւորուած է արեգակից.

Այս հոլերից ջոկ կան նաև ուրիշ խտացումներ, որովհետև 1888, 1880, 1879, 1852, 1849, 1838 էլն տարիներում տեսնուել է նրանց անցնելը. ուրեմն օղակի հետ կատարելապէս ծանօթ լինելու համար շատ օգտակար է գիտել ամէն տարի այս անցքերը: 1865-ի դեկտեմբերին Տամպէլի տեսած գիտաւորը հետևում է նոյն շրջանին մի քիչ տարբեր արագութեամբ. 1366-ի գիտաւորը երկու

շարաթ հետևում էր Թռչուն աստղերին. իսկ 1866-ին ութ ամիս առաջ ընկաւ նրանից։ Թռչուն աստղերի համար գեղեցիկ են Վլամարիոնի խօսքերը. «Թռչուն աստղերի խնդիրը դիտութեան մէջ թէև յարաբերաբար նոր, բայց շատ հետաքրքիր է. սքանչելի չէ՞ միթէ երբ դիտութիւնը քննելով այս թեթև մետէօրների խուսափուկ ընթացքը մեր մթնոլորտում, տիեզերական փոշիների անտեսանելի շրջանի մասին հասել է այնքան ստոյգ եզրակացութեան. միւս կողմից այս փոշիները թերևս մեծ դեր են խաղում տիեզերքի մէջ. հաշուել են թէ Թռչուն աստղերի թիւը մի միջոցի մէջ մի ժամում 30 է, որ տալիս է օրական 7 ու կէս միլիոն ընդհանուր աշխարհի համար. հետազօտական մետէօրների թիւը օրական 400 միլիոնից աւել է. այս մասնիկների քանակութիւնը միջոցի մէջ, որ բոլորովին անըմբռնելի է, չէ՞ բացատրում արդեօք հետաւոր աստղերի լոյսի ոչ բացարձակ անթափանցիկութիւնը միջոցում։ ամէն պարագայի մէջ այս մասնիկները՝ որ անգոգար մոլորակների և երեսկների վերայ են հասնում՝ աստիճանաբար մեծացնում են իրանց զանգուածը, չեն ծառայում նաև աշխարհների քեղմնաւորութեան աստուած է թէ երբ տարակարծիքները հեռացնենք, ճշմարտութիւնը երևան կը գայ. աստեղագիտութեան մէջ հազարաւոր խնդիրներ անդադար ծագում են, որոնք ակօսներ են բաց անում մեր առջև, ինչպէս արտոյտների ամպեր խուսափում են, շեշտակի դէպի երկինք չարուած՝ որսորդի աչքի առաջ։

Ընթերցողը մեր մինչև այժմ ասածներից արդէն հասկացաւ թէ երկինքը նոյ. 1-ին պէտք է մտնէ այդ հոյլի մէջ. բայց որպէս զի հոյլը տեսանելի լինի, երկինքը պիտի պարզ լինի և ոչ շատ լուսաւոր. բարեբախտաբար նոյ. 1-ին էլ նոր լուսին է։

Ասացինք թէ հոյլը պէտք է ծագի ասիւծ համաստեղութեան պատկանող երկու աստղերի մէջտեղից. այս աստղերն են Առիւծի ε-ը և γ-ն. առաջինը կոչուում է Rasalasad, իսկ երկրորդը Algieba. այս երկու աստղերը կէսօրից քիչ յետոյ մայր են մտնում և ծագում են կէս գիշերից քիչ առաջ. Բայց ծագման միջոցին նրանք պարզ աչքի դիւրաւ տեսանելի չեն, իրենց փոքրութեան պատճառաւ, որովհետև նրանց առաջինի մեծութիւնն է 3, 2 և երկրորդին 2, 5. սակայն քիչ վերջ ծագելու է Առիւծի α-ն՝ որը կոչուում է Regulus, նրա մեծագոյն աստղն է և պարզ տեսանելի։ Բայց որովհետև հոյլերը մթնոլորտի շատ բարձրերն են գտնուում ուստի և ծագելուց առաջ էլ տեսնուում են. ուրիշն նրանց դիտելու լաւագոյն միջոցն է կէս գիշերից քիչ առաջ այսինքն երեկոյեան ժամի 9—10-ից մինչև առաւօտեան ժամի 3—4։

Սակայն այս աստղերի ծագման ժամանակը կախուած է քաղաքի դիրքից. նրանք ուրչափ կանուխ ծնին, այնչափ էլ առատ կը լինի Թռչող աստղերի թիւը. սրա վերայ աւելի ազդեցութիւն ունի լոյնութեան, քան թէ երկայնութեան աստիճանը. հիւսիսային լեռնոտ մեծ նշած մի քաղաքում՝ օրինակ Պետերբուրգում՝ աստղերն աւելի առատ են, որովհետև ε-ի ծագումը միջին հաշուով երեկոյեան ժամի 8-ից 45 ր անց է. իսկ հարաւային կողմը աւելի ուշ է. օրինակ Կահիրէում ε ծագում է ժամի 11 և 10 ր.։ Գալով աստղերի ծագման՝ ուղղութեան հորիզոնի վերայ, սա էլ՝ թէև առհասարակ հիւսիսային արևելքում է, բայց հիւսիսային քաղաքներում հակում է աւելի դէպի հիւսիս, իսկ հարաւային քաղաքներում աւելի Արևելք, օրինակ Պետերբուրգում երեք աստղերի ծագման միջինը 50 0 արևելքից դէպի հիւսիս է, իսկ Կահիրէում միայն 25 0։ Երկայնութեան ազդեցութիւնը գրեթէ աննշան է. Պէտք է աւելացնել նաև թէ աստղերի ուղղութիւնը միևնոյն քաղաքում ժամերի հետ փոխուում է, այսինքն աստղերի ծագումից ուրչափ աւելի կանուխ դիտենք, աստղերը հորիզոնից այնչափ աւելի ցածր, իսկ հոյլն, այնչափ աւելի դէպի հիւսիս հակեալ է. իսկ աստղերի ծագումից յետոյ հոյլը հետզհետէ հակուում է դէպի Արևելք։ Մենք թողնում ենք հորիզոնի վերայ գտնուած բարձրութիւնները՝ լեռներ կամ բարձր շինութիւններ, որոնք յետաձգում են աստղերի ծագման ժամանակը և նրանց ուղղութիւնը դէպի արևելք հակում։

Ընթերցողներին դիւրութիւն ընծայելու համար այստեղ աւելացնում ենք մի ցուցակ, որի մէջ նշանակուած են աստղերի ծագման ժամանակը և նրանց ուղղութիւնը արևելքից դէպի հիւսիս՝ Թիֆլիսի հորիզոնի համար երեք աստղերին էլ մանրամասն, իսկ ուրիշ մի քանի գլխաւոր քաղաքների համար միջին հաշուով. սրանց մօտակայ քաղաքները մեծ տարբերութիւն չեն ունենայ։

Թիֆլիսի հորիզոնում ε աստղը ծագում է 10 ժամ 3 րոպէ 40, 33 վայր. իսկ նորա ուղղութիւնն է 33 0 22′ 31″29 արևելքից դէպի հիւսիս. γ ծագում է 11 ժ. 23 ր. 13, 98 վ. ուղղութիւնը՝ 27 0 46′ 43″, 94. α ծագում է 11 ժ 44 ր. 9, 35 վ. ուղղութիւնը՝ 16 0 48′ 34″, 52։

Մոսկուա . .	և շրջակայք.	9 ժ.	25 ր.	և 45 0
Օդեսա . .	« »	10 »	20 »	» 35 0
Երևան, Վաղարշապատ.	« »	10 »	40 »	» 31 0
Պօլիս . .	« »	10 »	29 »	» 31 0
Ջմիւռնիա . .	« »	10 »	49 »	» 30 0
Թեհրան . .	« »	10 »	57 »	» 29 0

Գ. Հ.

ՅԱՆՈՆ ԿԱՆՈՆԱՑ ՄԱՂ.[1]

ՊՕՂԼԻՆ ՈՒ ԻՐԻՑ.

Էրէց մը ու մօղէ մը կգին ընկեր.

Մօղէն շատ գիտնական կգի, խաւքին աշխարքի ամէնա լեզուից կը խասկընայ.

Կու գան—կու գան, ձորու մը ըռասթի կու գան.

Կու տեսին կաքաւ էգ ձորու մէջ զբոսկլպայ. էրէց կըսայ.

— Ջան, ջան, ինչ անուշ ձէն ու կայ վերէն.

Մօղէն վըր էգ իրիցու կը ծիծղայ. էրէց կասայ.

— Դու յորին ծիծղայիր։

—Իսկի, դու ջան—ջան էրեցիր. ընէցս իմ ծիծաղ էկաւ։

Մէկ քիչ տեղ էլ գացին, գորիս (այս անգամ) գոռալ (ակաւ) զրոգոայ. էրէց ասայ.

—Չոռ, չոռ, ինչ գարշելի ձէն ու կայ վերէն.

Մօղէն մէկ էլ ծըծղաց.

—Մօղա՛, ասայ էրէց, բան մը կայ քու սակը, կը ծըծղաս.

—Էրէց, քո զրուցնիր ծաղրա. էն էլ հայվան էր, էն էլ հայվան, յորին էնոր «ջան» էրիր, էնոր «չոռ» էրիր.

—Էնի անուշ ձէն խանեց, էսի գառ ձէն խանեց.

Մօղէն մէկ էլ ծըծղաց.

Դարձաւ էրէց—Մօղա՛, բան ու կայ իդա ծաղրու մէջ, ընձի յայտնա.

Ասայ.—Ի՛ասնիմ, վախնամ իմ զրուցք դուս էյգիս, ուիմ գլոխ ցաւըցնիս.

—Մօղա՛, ասայ, էսա տեղ ո՞րը կայ.

Ասայ.—Ես էսա տեղայ գարալը չեմ. մենք կերթանք Ալաղթ. հօղ Թագաւորի տեղ ա, քու լեզուն չկանի իսէ, գիս էյգիս ի լեզու, իմ գլոխ ինի գաւայ։

Ասայ.—Գիցած էղիր, ես քեզի լէզու չառնիմ։

Ասայ. Էրէց, ես ամէնա խաւքու լեզուն կը խասքընամ, թէ զրըզրան, թէ ինչ էնին. չեղնի–չեղնի զրուցիս, գսա էնիս։

Չէրէց շատ էրզուժ կուտայ, կասայ

—Էրէց, կաքաւ զրոգրայ, ասայ. իրիցու գլոխ կարա՛, հարուր գուռուշ փարայ կայ մօտ, առ գնա. գուռտապ էլա գառայ, ասայ, մի՛ մտիր իրիցու մէզք ու արունք. հարուր փարայ կայ մօտը, էնէլա առ ա.

— Վայ զօրանա՛, գուռտապ, ասայ էրէց, օղորմ ո հարիւր փարայ կայ մօտս, կանի առմ նշանց։

Էրէց գուր արախչին բերեց տակ, փարէն խանեց մէջէն.

—Մկայ իմացայ ո գու գիտնական իս, ասայ էրէց.

—Էրէց, էս խսէն գուս չէկգիս։

Գացին—գացին ի Ալաղթ. մօղէն ուրեմ կը վախենէր, ջոջ տուն չէր մտնէր. գնայ ապքեթ տուն, էդաւ գռնեթ։ Էրէց գնաց մէկ ժողովուրդի մը մէջ քիւսաւ. էս ժողովուրդը Յանոն Կանոնայ մասի պախսը էրեցին, էրէց էլա ականջ կէնայ.

Ժողովուրդը ասայ.

—Կեանքո, մարդ էզի, էսա Յանոն Կանոնայ մալ իմանայ, խանայ, Իրիցու լեզուն չգաղթաւ, գոմանց գմօղէն թէ,—Մ՛օղէ մի կայ խը ծի ընկեր էզեր էկեր ա, էնի կեղի Յանոն Կանոնայ մալ խանայ։

Էն գուռտք գնաց ընկաւ Թագաւորի յականջ, գէրեց գանչեց տարաւ.

—Էրէց, ասայ, արի տեսնենք, մօղէն գո՞ր ա.

Ասայ.—Թագաւո՛ր ապրած, խը ձի էկաւ, մահլի մէջ կեղի գտի, ամա արի։

Թագաւորը ճամբեցաց, գմօղէն գուսաւ բերեց,

—Կու պիմ, ասայ, գու Յանոն Կանոնայ մալ գտիս, Թէ չէ գքու գլոխ կը զանիմ։

—Թագաւո՛ր ապրած, ես ի՞նչ իմանամ էզպէս բաներըը.

—Մ՛օղա՛, յորին սուտ կը զրուցիս, քու ընկեր էրեց կասայ, երկու աշխար իրան մօտ մէկ ա, իմալ էղի կը խանայ։

Մ՛օղէն կը գառնայ իրիցու վերէն, կասայ.

—Հէյ կիտի պէպախթ էրէց, էն գախ

1. Ելաթայ բարբառով. գրի առաւ Ս. Հայկունի։

քո գլուխ կաս էի, միայ գլուխ չէիգիւր պալի մէջ. ինն ու քսամ մնայ, բան չկայ։

— Թագաւոր, ասաց մօլլէն, քիչ մը ժամանակ տուր, երթամ պատահիմ յիշամ։

— Չէ, ես մարդ չեմ թողու. կերթաս կգաս օ դու փախիս։

Մարդ դրեցին մօլլի խնաս յերթան, պատահին, տեսին Ցանոն Կանոնայ մալ դռ ու ամ Թալայ, տեղը նշանց ասայ։

Մօլլէն պատահով գնաց՝ Ալթուն Թեփեսի կայ Ախլաթ, ամ Թալից օ պիկի Ցանոն Կանոնայ մալ Ալթուն Թեփեսու մէջն ա։

Մօլլէն իշկեց օ Ցանոն Կանոնայ մալ խանելու գլամն քառասուն խամ էրինջ, քառասուն գեվարեա կորեկ, մէկ էլ մէկ գեվայի դաֆաս։ Դարձաւ մօլլէն Թագաւորի վրէն, ասաց.

— Կուզեմ քառասուն խաս էրինջ, քառասուն բեռ էլա կորեկ, մէկ գեվի-դաֆաս տանիս կորեկ էնտեղ ցիննիս ու մնաս մորթիս։

Թագաւոր էլաւ ձամրեցց. Ալթուն Թեփեսուն կորեկ ցիննեց, մնաս էրկց կերրինջներ, մներ գաշտի մէջ ցրուեց. մէկ գեվին էլա մորթեց. Միայ գարտակ դաֆաս, մաս մէջ պահկաս. դաւսն իշկեց՝ էրկնուց խաւքեր էկան, էկան լցուան էդ գաշտ, թռան իջան Ջանդակներու վերէն. մէկ խրամատն չեղաւ օ մէկը բերան տուէր էլ ետ էն միս, ետ էն կորեկին՝ կայնած կիշկէր։

Մէկ խաւք մէկս էրկու խաւքու թեի վերէն խեճուկ իջաւ էն գաւսի վերէն, հալպուտուր խաւքերու գլխաւորն ա. էս խաւք ասաց.

— Ժողովուրդ, իմ յատով կայներ էք, ղէգա զիաֆէթ չուտէք։

Էն մէկը ասաց.— Ապա՝ պիլա քեզի խրատմանք չկայ մեզի։

— Կեալօ՝ ասաց, դու մօրուց ծնուերիք, չուրի մկայ իմա գիաֆաթ տեսեր իք։— Չէ, չենք տեսեր, ասին յերեսէնէլաս։

Քերքեշ, լոպկուկ խաւք ասաց.— Թագաւոր ապրած, խաւքերու գլխաւոր, ես իմ տեսեր։

— Դո՞ր իս տեսեր, խարցուց մօտէն, ասպես գիաֆաթ.

— Էրեմէ կա տեղ, այնի հասեգ էմ կերեր։

— Ի՞նչ յատով կերար։

Ասաց.— Էն գլխ օ Ցանոն Կանոնայ մալ էս տեղ պահեցին. այն գի իգա գեվի դաֆասի տակն ա, օր թէ գու նստերիս վրէն։

— Դէ, խրամեցէք, կերէք, ասաց Ջոջ ու խաւք։

Խաւքեր կերան պրծան, մօլլէն դաւսի մէջ լսեց յերեն բան. էլաւ գուս, էկաւ Թագաւորի մօտ ասաց.

Թագաւոր ապրած, կուզեմ քեզնէ խաբուր խաս ձնհել մարդ, փետատա, թիրակ։

Մօլլէն առաւ, գնաց.

Թագաւորը ժողովրդով գնաց, (տեսանենք ինչ պաի փորեն, հանեն)։

Մօլլէն դաւսի տեղ էտուր փորել, փոթեցին—փորեցին, թալեցին, Ցանոն Կանոնայ մալն գուս բացուաւ. գոյին իշկին օ ինչ իշկեն, արծաթ, օսկի, աշխարհի մէջ ամենաթանկ բան լցուկ ա ինե։

Թագաւորի աչք առաւ ինե, ասաց.

— Աշխարհ գաւել, բանել չեղի, էսի յաւիտենական հերիք ա. ասաց՝ մօլլայ, ուզեմ քեզի.

Ասաց.— Ի՞նչ ուզիմ, էդի իրիցու գլխի կշռոքով օսկի տուր ընձի.

Ասաց.— Մօլլա, էդի ապիկ բան մր չէ. բիր.

Ասաց. Չէ, օր պտի տաս, իրիցու գլխու կշռոքով կուզիմ.

Ասաց.— Իրիցու գլխու կշռոքով քիչ ա, ինչ ա էնի.

Ասաց.— Թէ քիչ թէ շատ՝ իրիցու գլխի կշռոքի կօրայի կուզեմ։

Իրիցու գլուխ կտրին, դրեցին թարազու մէկ աչք, լինչ դար օսկի, արծաթ կէր ի գետին, հա լցին մէկել աչք. իրիցու գլուխ միայ ի գետին, մալ կելի ու կը բանձրնայ։

Թագաւորն ու ժողովուրդ զարմացան.— Մեր մալէ դնինք վերէն, չենք պրծնի, ասին։

Մօլլէն տեսաւ օ ժողովուրդ մէկ թուռլում էդաւ, ամէնյան մօլլից. մօլլէն ձանկ մը հոդ առեց, թալեց իրիցու էրկու աչք, դրիսի օսկիք միայ ի գետին, իրիցու գլուխ թռաւ կայնաւ։ Դրիսի օսկիք խանեցին, խանեցին, միայ մէկ օխայի դադար.

—Մօլլա, Հզի ի՞նչ պահա ա՝ ինչ գալի ա՝ ինչ էրեցիր, մեկնի՝ մեզի։

Ասաց։—Թագաւոր ապրած, մարդու աչք աշխարքի մալից չկշտանայ, իլահի քի էրևց։ Մեկ ճանկ հող մարդու աչք կը կշտացու։ իմալ օ իրից պլուխ դրա ինչ չաեսիր էր՝ հազ օ թալի կշտացաւ, թեմըզցաւ։ Մկայ Ցանոն Կանոնայ մալից ընձի իսկի պակաք չէ, աշխարքի մալը աշխարք կը մնայ։

—Մ՚օլլա՝ աշխար կը պըլըզի օ օսկի կուննայ, գու ինչ պրուգք ա կենես։

Ասաց։—Աշխարքի վրայ Ցանոն Կանոնայ մալից շատ դո՞ր կայ, էնի ի՞նչ տարաւ։ մալ մացիր ա՝ ընկեր լիսան, պահ մնայ էլման աշխար։ Մ՚ալ մնայ ինքը գնաց։

Թագաւոր ասաց։—Հարամ էզի Ցանոն Կանոնայ մալից մեզի։ գուռը էլման պահ փակաւ, մալ մնայ տեղ։

Մէկ էլ էլան Ցանոն Կանոնայ մալի միջից, գուռ փակեցին։ Հալա էն փակուկն ա՝ հալա էն փակուկ, բան մը չտարած ա միջէնն։

Ցանոն Կանոն եղբայր էն էդած։ Աստուածութեն էնպոնց մալ օսկի գարձուց, գրուկ ա՝ էդոնց մալ պահ մնայ տեղ, չուբի աշխարհի վերջին Նոհատու կալի մէջ պրահ բաժուբ։

Ցանոն Կանոնայ մալ Ախահի, Ալիսան թեփեսու տակն ա։ Ախահի հօր թագաւոր նոսեր ա՝ հօր դիր էլա աւերուկ ա։ էն մեկ Մ՚հերի աւերուկն ա՝ մկայ լի Քաճիր Կալատի կասին։

ՓԱՆՏԱԽՈՏ

Ժանտախտ է յայտնուել կրկին, և ոչ միայն հեռաւոր Հնդկաստանում, ուր երբէք չէր վերջացել այն և այժմ նոր սաստկութեամբ կոտորածներ է անում Բոմբէյի շրջակայքում, այլ նոյն իսկ Եւրոպայի պետական կեդրոններից մէկում, Վիէննայում։ Ինչպէս և Սմիրդանդի նահանգում։ Վիէննայում, ինչպէս հաւատացնում են, նա չի կարող նկնել Փրանց-Ոզէֆի հիւանդանոցի պատերից, ուր յայտնուեցաւ և մնաց մինչև այժմ՝ մի քանի զոհեր միայն տանելով։ Առաջին զոհն եղաւ հիւանդանոցի սպասաւորներից մէկը, որ ինչպէս երևում է, անզգոյշ է գտնուել ժանտախտի լաց[illegible]ների հետազօտութեան համար կատարուած փորձերից յետոյ՝ բժշկական գործիքներ կամ ամաններ լուանալիս, մոռացել որ վերջին ժամանակ յանձնած սրրած վիճակի մէջ է եղել։ Երկրորդ զոհը բժիշկ Միւլլէր՝ վարակուել է այն պատճառով, որ առաջինի հիւանդութիւնը պարզուելուց յետոյ այլ ևս թոյլ չի տուել ոչ ոքի մօտենալու, փակուել է նորա հետ մի փոքր սենեակի մէջ, ախտահանութեան և հիւանդին խնամելու գործն ինքն է, կատարել՝ իմիջի այլոց ապահով քներել է, պատերըրացիները հետացնելու համար, և երևի այդպիսով բացիներ է ներս չնչել։—Ցեղական մոռնագէտ բժիշկները հաստատում են, որ բազմաթիւ նպաստաւոր պայմաններ են պէտք ժանտախտով վարակուելու համար, ապա թէ ոչ այնպէս հեշտութեամբ չի փոխադրում նա, ինչպէս սովորաբար կարծում են։ Այժմ հարկաւ գոյութեան ամէն տեսակ միջոցներ են ձեռք առնուած. վարակուածներին խնամող բժիշկն ու սպասուհիները հիւանդի մօտ մտնելիս ծածկում են գլուխն ախտահանեալ բամբակից և շղարշից պատրաստած մի դիմակով, որի վերայ միայն աչքերի համար բացուածքներ կան և որ պրուտում է անմիջապէս հիւանդի մօտից հեռանալուց յետոյ, այսպիսով շնչոցութեամբ վարակուելու առաջն առնուում է, որ ամենագլխաւորն ճանապարհն է։

Սմիրդանդի նահանգում ևս ժանտախտն առանձնացած է առ այժմ Անդով անուշնով տեղում, որ լեռնային գեղատեսիլ դիրք ունի և հարևան բնակավայրերից բաժանուած է խոր ձորերով։ Ցեղական կատարութեան ձեռք առած միջոցները բաւական չհամարելով, որ գլխի Անդով տանող բոլոր ճանապարհները փակել է, հիւանդներին տեղափոխել առանձին բնակարանում, ախտահանութեան և բժշկութեան գործը կարգա-

ւորել, մեռածների գլխաներն այրել գիրք ձաքրել եւն. Բարձրագոյն հրամանաւ Նորին Բարձրութիւն Իշխան Ա. Օլդենբուրգսկից ուղեւորուել է Սմբրղանդ՝ նոր ամենաւսանդուն միջոցներով շրջակայքը վարակումից ազատելու եւ վարակուածներուն հիւանդութեան առաջն առնելու համար։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, հիւսուած չորս աւետարաններից ժամանակագրական կարգով.—աշխատ. Տաճատ քահ. Մարազեան. Բագու, 1898։

Թէեւ այս գրքի հեղինակը յառաջաբանում ասում է, որ «աւելի ձեռնհաս եւ գիտակ անձանց է թողնում ս. աւետարանի համ Ն. Կտակարանի աշխարհաբար թարգմանութիւնն այնպէս, ինչպէս որ կայ», բայց նա ինքը յանձն է առել թարգմանել ս. աւետարանը, միայն թէ, չորս աւետարանների հատուածներն յաջորդաբար այնպէս շարելով, որ մի ամբողջական աւետարանական պատմութիւն յառաջ գայ։ Գործը միևնոյն է՝ արդեօք առանձին աւետարաններ էք թարգմանում, թէ, նորա գրուածքից հատուածներ, երկու գլուխ եւս ձեռնհաս պէտք է լինել համ արտաքոյ կարգի համարձակութիւն ունենալ՝ այսպիսի մի ծանր եւ խիստ պատասխանատու գործի ձեռնարկելու համար։ Ոչ թէ, որչափ ձեռնհաս էր Արժ. հեղինակը, որչափ գաղափար ունի աւետարանի եւ նորա թարգմանութիւնների մասին՝ այդ ցոյց տալու համար բաւական է, յառաջաբանի հետեւեալ նախադասութիւնը. «փոխադրութիւնը կատարուած է Ծօթմանանից կոչուած թարգմանութիւնից» (!?)։ Աւետարան եւ Ծօթմանանից թարգմանութիւն ... Նա մի մարդ, որ Քրիստոսից երկու դար առաջ կատարուած Հին Կտակարանի յունարէն թարգմանութիւնն ու ս. Սահակի եւ ս. Մեսրոպի մեզ տուած Հին ու Նոր Կտակարանի հայերէն թարգմանութիւնը միմեանց հետ շփոթել կարող է՝ համարձակուում է, աւետարան թարգմանել, գիտական ճանապարհութիւններով զբաղուել եւ իւր այդ խեղճ գործը ներկայացնել «եղբայրներին եւ քոյրերին», իբրեւ Քրիստոսի աւետարան, որ կեանքի ուղեցոյց պէտք է լինի, որ պէտք է, սովորեցնէ, թէ ինչ պէտք է անել կատարեալ քրիստոնեայ եւ կատարեալ մարդ լինելու համար եւն։ Այսպիսի չարաչար վերաբերմունք եւ յարգանաց պակասութիւն պէտք ս. գիրքը կարող է լինել միայն մի ժողովրդի մէջ, որի համար պարզուել է, նա կեանքի ուղեցոյց լինելուց։ — Մի տարի առաջ լոյս տեսաւ Արժ. Գր. քահ. Մանդակունու նման աշխատութիւնը հին Կտակարանի վերաբերեալ՝ մի հատոր գիրք, որի հեղինակը շատ պէտքում կարողութիւն չունենալով միևչեւ իսկ հայերէն գրաբար պարզ նախադասութիւններն աշխարհաբարի վերածելու՝ երբայեցերէն բնագրից է խօսում հեռուից, մօտիկից՝ հնախօսական, պատմական, լեզուագիտական եւն ծանօթութիւններ է, ժողովում եւ կամենում է ամբողջ Հին Կտակարանը, մատամբ թարգմանօրէն մատամբ քաղուածօրէն, հասկանալի լեզուով հայ ընթերցողների առաջը դնել։—Շատ գովելի է, հարկաւ մեր քահանաների մատենագրական ոգանդը, բայց պէտք է չմոռանալ, որ համառութիւնը ամէն մարդու գործ լինելով՝ հոգեւորականի համար անհրաժեշտ պահանջ է, մինչ բնիկ հասարակաց հնից այս տապարիզի վրայ, մանաւանդ վերջին տարիներս, յաճախ մեծագոչ մեղանչում են համառութեան դէմ։ Մենք հակառակ ասելիք չէինք ունենայ, այլ հոգով ուրախ կլինէինք, եթէ մի քահանայ, որին ս. գիրքը երկար տարիներ հոգեւոր սնունդ է մատակարարել՝ թէկուզ նա իւր հայերէն ասաց ածաշնչից գոնէ սչինչ ճանաչէ, յանձն է առնում աւետարանի այս կամ այն մասը կամ նոյն իսկ ամբողջ աւետարանները ու Հին եւ Նոր Կտակարան տաք սրտով եւ պարզ լեզուով պատմել ազգասէրին ու բացատրել հասարակ ժողովրդին։ Այդպիսի գրուածներ շատ հարկաւոր են եւ կարող են օգտակար ծառայութիւն մատուցանել. եթէ, նոքա շատ թերութիւններ իսկ ունենան՝ բաւական է, որ ջեր-

մեռանիլ ոգի չընչին և անկիզճ հաւատոյ կնը-պատեն անշուշտ ընթերցողներուն հոգևոր չինութեան։ Բայց ուրիշ է սուրբ Գիրքը թարգմանել։—Հրէաները հին կտակարան արտագրելիս ամենամեծ զգուշութիւններ էին գործ դնում և չէին համարձակուում մինչև անգամ նկատած տառասխալներն ու աւելորդ գրերն ուղղել՝ այնչափ մեծ էր պատկառանքը դէպի Աստուծոյ խօսքը։ Մեր ժամանակ էս ահագին գիտական աշխատանք է գործ դրուում Աստուածաշունչի իւրաքանչիւր խօսքի համար ուղիղ ընթերցուած գտնելու, և երբ հարկ է լինում մի նոր թարգմանութիւն կամ հրատարակութիւն անել՝ այդ գործը յանձնուում է, տասնեակ տարիների աշխատութեամբ մասնագիտական հմտութիւն ձեռք բերած և հրաշակ ստացած անհատների կամ ամբողջ յանձնախումբի։ Ապա թէ ոչ, քանի՛ սեռակ և օրպիսի՛ սղաւորումների ենթարկուած սուրբ Գիրքը պէտք է ունենայինք, եթէ ամէն ոք գրի սկսէր ու սպիտակը ճանաչելուց յետոյ ձեռնհաս համարէր իրեն թարգմանութիւններ անելու և իբրև աստուածաշունչ գրուածք հրատարակ հանելու։ Հայր Ծաղկաի կողմից աւելի խոհեմութիւն կլինէր, փոխանակ «միայն և եթէ բնագիրը տալու ընթերցողին», սպառ փոխարկութեամբ ձիշդ իմաստը հաղորդելու ջանք անել։ այդ ժամանակ նորա գործը իրաւի մի նոր «արբագան պատմութիւն» կպատնար և գուցէ աւելորդ կհամարուէր արդէն մեծ թուով գոյութիւն ունեցող նման գրուածների շարքում, բայց գոնէ հետինակի ուժից շատ վեր գործ չէր լինի և էլ տանջի ընթերցողին ամէն սեռակ (ոչ միայն լեզուական) անհարթութիւններով, ինչպէս օր. «անհնազանդներին՝ արգարների իմաստութեան մէջ». «ցրուեց հպարտներին իրենց սրտի մտածմունքներով». «քո անձի միջից էլ սուր կանցնի, որ շատերի սրտի խորհուրդներն յայտնուին». «մեծ ուխտն և չորս տարիական որբ և այրի էլ». «անապատից խօսակցութեան ձայն է գալիս». «ահա կոյրիը ծառի արմատների մեծան է դրած». «ուրիշ էլի շատ բաներ էր աւետում ժողովրդին մխիթարելով» և այն և այլն։—Մտիքը միայն այսպիսի անհարթութիւնների մասին չէ ի հարկ է. որպէս զի կարողանայ մէկը երկու հազար տարի առաջ գրուած աւետարանը վերակենդանացնել կամ նորա իւրաքանչիւր դարձուածն այնպէս արտայայտել, որ թարգմանութեան մէջ էս կենդանի խօսք ձևայ և իւրաքանչիւր հաւատացեալն սրտի հետ խօսէ՝ պէտք է ընդունակ լինի վերափոխուելու հոգւով դէպի այն դարը և այն աշխարհը, ուր աւետարանն իրաք կենդանի խօսք է եղել, կամ այսպէս ասած՝ աւետարանական մթնոլորտի մէջ տպրելու. միւս կողմից նա պէտք է իւր ժողովրդի լեզուն հասկանայ՝ լեզուն, բառի ընդարձակ իմաստով. իսկ դոցա համար ի միջի այլոց գիտութեան մեծ պաշար է հարկաւոր, մինչ Հայր Ծաղկաի փոքրն անգամ չունի. նորա կարդացած գրքերի մէջ «Սադուկեցութիւնը մի ազանդ էր, որ գոյութիւն ունէր Հրէից մէջ մօտ 200 տարի Քրիստոսից առաջ» ... «արտաքոյ Հին Կտակարանի ոչինչ չէր ընդունում» ... «ահագին հետևողներ» ունէր. «մաքսաւոր» նշանակում է հարկահան» և այլն։ Նա բան երևութին շատ համեստ կերպարանք է տալիս իւր ձեռնարկութեան, բայց մենք՝ գովելով հանդերձ նորա եռանդն ու ժողովրդի մէջ աւետարանի սէր և հասկացողութիւն տարածելու ցանկութիւնը, կրկնում ենք՝ նորա կատարած աշխատանքը անհատի է և տպարդիւն. այդ «և»-երով և խորհ արտայայտութիւններով լի գրուածքը աւելի ըմբռնելի չի լինի միջակ ընթերցողին, քան մեր ոսկեդարեան հրաշալի աւետարանը։ Հայր Ծաղկաի նման աշխատասէր քահանաներն աւելի օգտակար կլինեն, եթէ, իրենց եռանդն այն սահմանների մէջ միայն գործ դնեն, որ իրենց սահացած կրթութիւնն և ունեցած փորձառութիւնը գծել են։

Կ. Վ.

ՅԱՐԵԼՈՒԱՆ ԱՐՔԱՑՒ 1898 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ.

ԹՈՒՂԹ ՀԱՅՈՑ Ի ՊԱՐՍՍ ԱՒ ՈՒՂՂԱՓԱՌՍ.

ԵՂԲԱՐՑ մերոց սիրելեաց ուղղափառաց և հաւատարմից, մեծիւմ Ծառայից Աստուծոյ՝ եպիսկոպոսաց և վիճակաւորաց, վանականաց և ժողովրդականաց—Բարգէն Հայոց եպիսկոպոսապետ, Մերշապուհ եպիսկոպոս Տարաւն գաւառի ի Հայս, և այլոց եպիսկոպոսաց Հայոց, որք ըստ գաւառաց և ըստ տանց, և յամենայն ուխտէ սրբոյ եկեղեցւոյ մերոյ, և յիշխանաց՝ ի Վարդայ Մամիկոնից Տէառնէ և ի Հայոց մարզպանէ, և ի Սահակայ Կամսարականէ, և յԱրտաշրէ Մոպէսէ, և յամենայն ազատաց մեծամեծաց և փոքունց, սիրոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ուրախանալ—Քանզի եկեալ երկրորդ անգամ ի ձէնջ առ մեզ Սիմեոն երէց աշխատասէր և անձանձրոյթ յամենայն ժամ՝ ի խնդիր հաւատոյ, որ պատուիրաց տակաւին զմարտ պատերազմի՝ նորոգելով միւսանգամ Նեստորի, ոչ ընդունելով զդրեալն ձեզ յամենայն ուղղափառաց յաղագս Աշխարհիս հաւատոյ, ընդ նմին և զառ ի մէնջն՝ զի ապրեսցին, այլ զի թերևս կարասցէ շարժել զհաստատութիւն սրբոյ եկեղեցւոյ՝ նահմայուցանելով զհաւատս ուղղափառութեան յաշխարհի ձերում: Եւ թէ որպէս առձեռնեալ տակաւին էս առ նոսին մերոյ թիւն ձեր՝ որպէս սովորեաց նախանձ խանդաղատեաց ի սկզբանէ, որով տարապիր եղև ազգ մարդկան յաստուածայինն բարեացն, և ոչ զգաստացաց միտչև ցայսօր ժամանակի ալեկոծեալ աւուրս եկեղեցի, ի ժողովոյն Քաղկեդոնի զատացեալ՝ սկիզբն առնելով ի Նեստորէ, չարիմաց խորհեցաւղէ, յայտագս սրբոյ Երրորդութեան՝ բաժանելով զմարմնանալն Տեառն ի սրբոյ կուսէն Մարիամայ, որ իսկապէս մարդ՝ միանգամայն և Աստուած: Խոստովանիմք և երկրպագեմք հանդերձ աստուածութեամբն զմարմնաւորութիւնն, և հանդերձ մարմնաւորութեամբն զաստուածութիւնն. նովին աստանդաբեմամբ խոստովանիմք և մեք զոր ընկալաք ի սուրբ ժողովոյն որ ի Նիկիա ԲԾԻ. հայրապետացն, և նոցին խորհրդոյ հաղորդիմք ի կանոնացն շարադրեցելոյ՝ քանզի է ձշմարիտ արդարև աստուածային գործակցութեամբ. և փախչիմք ուրացեալ զի Քաղկեդոնին աստուածիւն Նեստորի, և այլոց նմանից զրոս պիտեմք կեղծաւորութեամբ փախուցեալ ի հերձանուսութենէ, և ի հրէական մոլորութենէ՝ և զնոյն խոստովանին զհերձանուսութիւն միանգամայն և զհրէութիւն պատրել ի մոլորութիւն զմիտս անմեղացս, որ է, պիտոյ վրիպիցուցանելով ի ճանապարհէ զկեցոյց որով սահմանեցաւ ի Սրբոյ Հոգւոյն մարգարէիւն հաստուցանին նոցին, զոր սուրբ հարքն միաբանութեամբ իւրեանց ի Նիկիա յանդիմանեալ խրզկին զընթացս չար խորհրդոց նոցա՝ ի սրբոց գրոց նզովելով զՆեստորիոս և Արիոս, և զԴիոդորոս, և զԹէոդորիտոս, և զԵւաթքոս, և զՊաւղոս Սամոսատացի, և զնմանս նոցին, որ խաւնակութիւն պանդուածոյ զմարգանալն Քրիստոսի ասել իշխեցին՝ իբր զլոկ մարդ, ոչ կատարեալ Աստուած ի մարմնի կատարելոյ: Զոր և մեծն Ամպղիոս եպիսկոպոս Քեսրոն քաղաքի, ձշմարիտ հաւատոյ սիրաւղ և սպասաւոր՝ գրեաց ձշդիւ ձշմարտապէս, յորում փութացեալ ոչ վերջացաւ: Նմին գրոյ նախանձաւորելոյ լեալ երէցն բարեպաշտ Անաստոլիոս Կոստանդնուպաւլսի՝ վկայեալ սրբոյ եպիսկոպոսի Ամպղիի գրոց յաւելուած սրբոյ Երրորդութեանն, ոչ գիտացեալ զի սրբոյ կուսէն զծնունդն Որդւոյ, այլ զնոյն ինքն Աստուած և բան՝ մարդացեալ անախտաբար մնալ նոյն, որ յառաջ քան զյաւիտեանս երկրպագի ընդ Հաւր և ընդ սուրբ Հոգւոյն: Ձշմարտապէս գրեաց սուրբ քահանայապետն Քերսոնեցւոյ Ամպհիլ՝ հանդերձ Երկոտասան գլխով Կիւրղի եպիսկոպոսի երանելւոյն. ի նոյն յարելով և զՀուղիոն Զինոնի ի բարերանելոյ Թագաւորին հաւատոյ՝ սուրբ գիտութեամբ վկայեաց երէցն աստուածասէր Անաստոլիս: Քանզի սրբոյ հարանցն է, աւանդութիւնս այս՝ միակամբ առա-

քինոխեան, որոց առաջին վկայ գնացեալ արդարութեան հալածելին զառաքիւն: Հաւանեալ եմք ամենայն իրաւք գրելոյն առ ի նոցանէ, և նովին վարիմք հաւատովք՝ ի սրբոյ ԾԺԼ-իյն ժառանգեալ, և ի ՃԾ-իյն հաստատեալ. իսկ որ ոչն խոստովանին այսպէս՝ ուրանալով զՈրդին նոքա մոլորեալ ի տունջենէ մտանան վշայր զորս յիրաւի ձայնէ առաքեալն Յուդա պաղակորոյս խլեալ արմատաքի աստեղս մոլարս, որոց վիհ խաւարին յաւիտենից պատրաստեալ Ճնայ: Ծագած որոց Քրիստոս Ցէրն փառաց զոր մեռաւ. քանզի զգիսկիկ Բանին Աստուծոյ ձաշակեցին քաղցրութիւն, և հնազանդեցան կարծեաց աւետարանաց: Ծագած որոյ յաւմառեալ ոչ դիտեն զինչ խաւսին և յորում պնդեալն են. վասն զի Աստուած աշխարհիս այսորիկ, ըստ ասացելոյն, կուրացոյց զմիտս նոցա զի մի ծագիցէ ի նոսա լուսաւորութիւն աւետարանի Փրկչին արարածոց, զոր յամենայն ժամ՝ ընթերցեալ, և երբէք ոչ ծանեան: Քանզի ոչ խոստովանելով զՈրդին ուրանան և զՀայր՝ զոր ասաց ուրանալ և ինքն Քրիստոս առաջի Հաւր և պատուիրեաց և մեզ հրաժարել ամենեին ի նոցանէ, և առնել միջև բանիւ անգամ զողջոյն նոցա: Այլ զի և այս յայտնագոյն եղիցի խոստովանութեան մերոյ բան՝ որպէս հաւատամք մեք հայք ի Հայր և ՅՈրդի և ի սուրբ Հոգին, յորոյ վերայ շինեալ և հաստատեալ է սուրբ եկեղեցին՝ խոստովանիմք զՀայր և զՈրդի, զծնեալն ի Հաւրէ յառաջ քան զյաւիտեանս, անակիզին, մարմնացեալ ի սրբոյ կուսէն Մարիամայ ի փրկութիւն արարածոց՝ անքննելի անարատ ծննդեան աւրինակաւ, կոյս մնալով մաւրն. և ի սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն. Աստուած ՀՀայր, Աստուած զՈրդի, Աստուած զսուրբ Հոգին, յորում մկրտեցաքն և մկրտիմք: Ոչ հրէաբար պակասեցուցանեմք, և ոչ հերձուածողաբարն վրիպեալ յաւելուածոյ, և ոչ նուազ և առաւել քան զմիմեանս, այլ երկրպագեմք՝ զերրեան ի միութեան փառաւորելով և զմին ի յերրորդութեան: Այսպէս հաւատամք, որպէս աւանդեցին մեզ սուրբ հարքն ԾԺԼ՝ եպիսկոպոսքն ի Նիկիա՝ նահատակք ճշմարտութեան, և որք յԱփեսոս և նզովիմք զՆեստորիոս և զԱրիոս և զԹէոդորոս և զԴիոդորոս, զԹէոդորիտոս և զՆեստորիոս, զՊաւղոս Սամաւստացի, զՊիրաբոս, զԱկակ, զԲասիլիոս, զԻբաս՝ որք ի Պարսից աշխարհի զնոցան զկանոն և զՀաւատս զարմանալոյն թեան ի վեր երևեալս, յորոց բազումք նեղեալ արտաքս հալածեցան ի ճշմարտութենէն սերման՝ որոմամբ առ ի նոցանէ, վկայեալք Զոր և առաւածանշան արանցն առաքինեաց և երիցս երանելեացն Նաժանին նոցուն՝ Իգնատիոս որ յառաքելոյն տունկ բարեպատուի, Ամֆիանասիոս ճառագայթն լուսոյ աշխարհի, Բարսղիոս Կապովկացւոց եկեղեցւոյն կոչեցեալ, Գրիգորիոս Աստն և երկուքեան եւս նորին Համանուանքն, և Բասիլիոս գարեւմտեացն ճառագայթքն կենաց առաջնորդք և Ամպրոսիոս, Յովհաննէս և Առաքիոս, և Թէոփիլիոս, և Կիւրղոս, և չքնաղ Հայր մեր Ատիտակէ՝ զաւակն արդարութեան սրբոյն Գրիգորի ի վկայից եղեալ սկիզբն և պատճառս ասատուածային սիրոյն և հաշտութեան. սոքա ամենեքեան ժողովեալ սրբոց ասպնջական Երրորդութեան՝ հաստատեցին վկայութեամբ Հին և Նոր Կտակարանաց ընդ անուր ի կաթուղիկէ եկեղեցի: Այսու իկ վարիմք հաւատովք զոր և գրեցաք իսկ ձեզ յառաջագոյն վրայ և ազուանից միաբանութեամբ՝ ի բաքանչիւր աշխարհի գրով, և այժմ զնոյն երկրորդեցաք ի ձեռն հաստարակաց եղբաւր բան հաւատոյ՝ Սիմեոնիի նախանձաւորի երիցու, զի ի ոք հաւատարձակեսցի յայսմ՝ հակառակել և ընդդիմանալ պատճառաւ առ ի մէնջ. այլ զի այսու եւս խրճոցի յանդուգն և ահաւոր խորհրդ հերձուածոյ նոցա և ազատեսցուք հաստատակաց զինոյն ինքն Երրորդութենէն խափանեսցէ զմշնամիս իւր՝ զհակառակորդս ճշմարիտ հաւատոյ, և զատացուսցէ զպաշտաւնեայս և զերկրպագուս անուան իւր: Եւ զայս եւս ծանիցէ եղբայրութիւն ձեր թէ, որք առեալին զՀայր, ուրացան զՈրդի, ոչ հնազանդեցան սուրբ Հոգւոյն՝ նոքա ոչինչ են զարմանք թէ և զգրեալսն ի բարւոյ խորհրդոյն ոչ զգաստասաց և ի մէնջ ոչ ընկալան, զի եղեն յաչսոց ամենեին՝ ամաւթալից եղեալ յորժամ եկեսցէ. Ցէր առնել վրէժինդրութիւն ի վերայ այսորիկ և յայտնել զգաստնիս խաւարի և զծածուկս սրտից նոցուն՝ ի գատաստարատութիւն և ի զղջալ ճն տարաժամն Ե՛ վասն թզղզոյն սրբոյ Ամպկի եպիսկոպոսի և Անատոլեայ երէցու հրամայեցաք ասա գրել: Եւ եթէ, ի հերձուածողաց ոք գայ և գառնայ ի մեր սուրբ հաւատս՝ ընդունել արժանի է, գնոսա վասն զի գտան ողորմութեան Աստուծոյ հանապազ բոց է, խոստովանողաց և աշխարհագոյ:

ՍՏԱՑՈՒԱԾՔ ԳՐՔԵՐ.

Сношенія Петра Великаго съ Армянскимъ народомъ.—Г. А. Эзовъ. Санктпетербургъ.

Մովսէս Խորենացի և իւր պատմութեան խորքարանը (Арх. Лазаревскаго Ин.).—*Յ. Դաղբաշեան. Վիեննա*, 1898.

Краткія свѣдѣнія Кавказскихъ минеральныхъ водъ. Отчетъ по Эссентукской благотворительности. Москва, 1898.

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЕЖЕМѢСЯЧНЫЙ, ИЛЛЮСТРИРОВАННЫЙ, ЛИТЕРАТУРНЫЙ, БИБЛІОГРАФИЧЕСКІЙ

ЖУРНАЛЪ

ИЗВѢСТІЯ

КНИЖНЫХЪ МАГАЗИНОВЪ ТОВАРИЩЕСТВА М. О. ВОЛЬФЪ

Подписной годъ считается съ 1-го октября 1898 г. по 1-ое октября 1898 г.

Подписная цѣна „ИЗВѢСТІЯМЪ“ на 1898/9 годъ—35 коп. на обыкновенной бумагѣ и 1 рубль на веленевой, безъ всякой доплаты за пересылку.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ

ВЪ КНИЖНЫХЪ МАГАЗИНАХЪ ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННАГО ТОВАРИЩЕСТВА М. О. ВОЛЬФЪ

Въ С.-Петербургѣ, Гостиный Дворъ, № 18 и въ Москвѣ, Кузнецкій Мостъ, № 12.

ОТКРЫТА ПОДПИСКА

Годъ второй.

на 1899 годъ

на еженедѣльную литературно-политическую и научно-популярную газету

„РОССІЯ и АЗІЯ.“

(Подписной годъ съ 1 Ноября 1898 г. по 1 ноября 1899 г.)

Годовая цѣна безъ доставки 5 руб., съ доставкой и пересылкой—6 руб., заграницу 7 руб., за полгода безъ доставки 3 руб., съ доставкой и пересылкой 4 руб., заграницу—5 руб. Допускается разсрочка для годовыхъ подписчиковъ по 3 руб. въ два срока, или по 2 руб. въ три.

Адресъ Редакціи: КІЕВЪ, Паньковская, д. № 12.

Газета дастъ въ теченіе года: 1) 50 номеровъ литературно-политической газеты; 2) 50 номеровъ „Научно-литературнаго отдѣла,“ посвященнаго Востоку, еврейству, инородцамъ, Кавказу, Туркестану и Сибири и 3) 4 книги приложеній подъ названіемъ „Альманахъ Россіи и Азіи“, въ который войдутъ:

I. Арменія. Сборникъ статей различныхъ Русскихъ и иностранныхъ авторовъ объ Арменіи, ея исторіи, литературѣ и отрывки изъ произведеній Армянскихъ писателей.

II. Спиноза. Біографія и лучшія произведенія знаменитаго Еврейскаго философа-пантеиста съ критическимъ комментаріемъ.

III. I Том. „Полнаго Собранія сочиненій“ знаменитаго романиста Георга Еберса, автора романовъ „Дочь Египетскаго царя“, „Императоръ“ и пр.

IV. Моріеръ. Мирза Хаджи-Баба Исфагани. Новый переводъ съ англійскаго по порученію Редакціи.

Редакторъ—издатель прив. доц. А. Н. Гренъ.

ԱՐԱՐԱՏ

Ս· ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԱՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՋ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է **1898** Մեկ տարուանը 4 րուբլի
կէս » 2 »

Կարելի է բաժանորդ գրուել կէս տարուայ համար և ստանալ թերթը յուլիս ամսից սկսած՝ վճարելով տարեկան բաժանորդագնի կէսը միայն։

ԼՈՑՄ Է ՏԵՍԵԼ
Ս· ԷՋՄԻԱԾՆԻ
ՓԱՌԱԿԱԶՄ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՑՈՑՑ 1899 Թ.

Վեհարան Կաթուղիկոսի՝ ս· Էջմիածնի, Գէորգեան ճեմարանի եւ այլ պատկերներով զարդարուած, այլ եւ տեղի հարուստ եկեղեցական եւ վիճակագրական տեղեկութիւններով։

ԳԻՆՆ Է ՄԻՆԵՒՆՈՅՆ ՏԵՂ 20 Կ·

Վաճառւում է վիճակային կոնսիստորիաներում եւ հոգեւոր կառավարութիւններում· Տփխուում՝ կենսորմնական գրավաճառանոցում։ Մնաց քանակութեամբ գնողներին 20% զեղչումն կլինի։ Գիւք է գրուել ս· Էջմիածնի տպարանական ժողովին այս հասցէով՝

Св. Эчміадзинъ. Типографическому Комитету.

Նկեղեցական պատկերների նկարիչ Ռաֆել Սաղինեան, մեծաչեքի գնով յանձն է առնում ամեն տեսակ սրբոց և այլ պատկերներ նկարել։

Դիմել իրեն ս· Էջմիածին։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԴՈՐ ԳՐՔԵՐԸ·

	Ռ·	Կ·
Առակք Քրիստի–Գաբր· եպ·Այվազեանց	»	80·
Պարզ քարոզներ Ա· դիքդկ· Էմ· քհ· Ն·	»	15
» » Գ·—Դ· »	»	20
Վկայարան· Գարեգին Ա Շմաւնի	»	50
Սրբազան պատմ· հին կտակարանի Ամբրոսիոս Վ· Գալֆայեանցի	1	—
Նոյնը Նոր Կտակ· (պատկերազարդ)	»	50
Կրօնական բար· Խորհրդածութիւններ Ա·-ից ծ· դիւք Իւրաքանչիւրը	»	20
Հայաստանեայց առաքելական ուղղափառ ս· եկեղեցին և իւր ս· կարգը Աբջակ Տէր Մ՚ինասեանի	»	60
Տէր Պետրոս Ա՚Գետադարձ Կ· Կոստանդեանց		10
Դասախօսութիւն և ժառանգակատութիւն Մ· Գիւլիս Թարգ· Ս· Մ·	»	60
Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղ· պատմ· աշխ· Մեսրոպ վրդ· Տ· Մ՚ովսիսեան	2	—
Նոյն անուանեալ Փոքր Սոկրատ	»	60
Յիշատակարան ապիսից Գրիգորի Խլաթեցւոյ Գր· Խաչատեանցի	»	15
Պարթևները Պարսկաստանում և նրանց յարաբերութիւնները Հայոց հետ Ն· Քարամեան	»	35
Նկարագրութիւն Հոգևորական վարուց Յովհաննու որդւոյ Թագաւորին Հռիփսիմեայ Մեսրոպ վրդ·	»	70
Նկրտութեան Յաղագս Վարուց և Մահուան Ս· վարդապետին Մեսրոպայ Մեսրոպ վրդ· Տէր Մովսիսեանի	»	40
Բարգաւաճութիւն Տպ· Սոկրատ և Երուսաղէմի Ձեռագրի Սահակ եպիս· եւ Մեսրոպ վրդ·	»	10
Ճառընտիր Գրիգորի Խլաթեցւոյ պատմ· վիպ· աշխ· Գր· Խաչատեանց	»	3
Պարզ քարոզ· Բ· գիք· Բ· ապագր·	»	15
Լև Տալտոյի Կրկնգերեան Սօնատաի վերջը Թարգ· Յ· Սարիկեանի	»	15